— Պղտիկ չիալան մը կար հոն, ան արյունեցավ. չոլքա պերպերին թրաշ յեղեր ես:

— Ասդին ալ կարեցավ:

— Հոն ալ մազը ծուռ բուսեր եր, անանկ պերպեր մունիս լեղեր վոր...

— Ծնոտիս վրան հաղա...

— Ծնոտգ կերկի բանեցիր աե, անկից յեղավ: Մի վախնար դուն, յես զանոնք հիմա քիչ մը բամբակով կը թիմեմ:

— Վաղ անցա, պապամ, հոգիս ցավեցավ, յերեսս կրակի պես կերի կոր:

— Սանկ թեթև բերտան մ'ընեմ ու յերեսդ անուշանոտ քացախով լվան նե, կանցնի, բան չմնար:

— Զեմ ուզեր բերտան, չեմ ուզեր, լմնցներ:

— Առանց բերտանի չըլլար:

— Ճանըմ, զլուխն իմս չեմ մի:

— Գլուխդ քուզկդ ե, բայց ամեն խանութ պատիվ մունի, ածիլլելու մազեր կան տակավին յերեսիդ վրա ասդին անդին: Ասանկ ձգելն մեզի անպատվություն ե: Դուն սանկ դիր զլուխդ և հանգիստ յեղիր:

— Պե ճանըմ, զլուզվ զիս տանջել կուզեր, ինչ ըսել ե աս, յես քու խաղալիկդ եմ, պատիվդ պաշտպանելու համար իմ յերեսս ընտրեցիր ասպարեզ. դահիճի պես զլուխս տնկվեր, կեցեր ես:

— Բարկացած կերեաք կոր, անոր համար չեմ ուզեր պատասխանել. միայն կաղաչեմ, վոր քիչ մը համբերեք, ու լմնցնենք սա գործը:

Սափրիչը կը հաջողի նստեցնել Գասպար աղան, վոր զլուխն սափրիչին տրամադրության տակ դրած անոր ածելիին քերթվածներուն վանկերը կը համբեակուաները սեղմելով: Բայց վերջապես համբերությունը կը հատնի և հանկարծ աթոռեն կը ցատկե՞

— Հերիք, պե մմրդ, հերիք, արյան մեջ ձգեցիր
լերեսս՝ ըսելով:

— Լմնցավ, լմնցավ, կը պատասխանե սափրիչն և
պարդ ջուրով կը լվա Դասպար աղալին յերեսը,

— Եթի, եթի...

— Տես, դադրեցավ արյունը, չորս տեղեն միայն
կը բղխի կոր, ան ալ քիչ մը բուտրալով կանցունենք
հիմա:

— Բրե՛, լեղբակը, ինչ վոր պիտի ընես, և լմնցուր.
պիթտիմ, պե ատամ, պիթտիմ 1):

— Չեմ ուրանա, թե մորուքդ քիչ մը սերթ ե:

— Առաջուց ըսինք ձեզի, եֆենտիմ:

Սափրիչն յուր բոլոր ուժը կսպառե բրինձի փոշելով
դադրեցնել արյունահեղությունը և չճաջողիր:

— Հարյուր տրամի մոտ արյունս հանեցիր, պե ատամ:

— Ծն, սա շիշեն տուր:

Աշակերտը սրվակ մը կը բերե. պարունակությունն
դժոխալին քարե պատրաստված բաղադրություն մ'ըլ-
լալու իեր, վորովհետեւ ամեն անգամ, վոր փետուրի մը
ծալրով կը քսեր այն ջուրեն Դասպար աղալին յերեսը,
Գասպար աղան դժոխալին ցավեր կզգար և վեր-վեր
կը ցատկեր:

— Ահա լմնցավ, սիրոդ հանգիստ ըլլա, ըսավ սափ-
րիչը Դասպար աղալին՝ սրվակն աշակերտին դարձնելով:

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, պատասխանեց
Գասպար աղան:

— Հիմա մաղերդ:

1)Պիրտիմ, պե ատամ, պիթտիմ, —(տաճկերեն) վերջացա, այ
մարդ, վերջացատ

— Զե, չեմ ուղեր, մազերս թող մնան՝ ըսելն,
հինգնոց մը նետելն ու դուրս յելնելն մեկ ըրավ Դաս-
պար աղան:

— Այսչափ ալ աքսի մարդ բնավ տեսած չունեյի,
մոմուց ինքն իրեն սափրիչը:

Իսկ Դասպար աղան ինքինքն փողոցի մեջ գտնի-
լուն պիս հառաջեց ու վողբաց սապես.

— Աս ինչ թոհափ աշխարհ ե, գլուխնուս պիլե տեր
չենք կընար կոր ըլլաւ...

* * *

Մելքոն աղան, խոնջած ցերեկվան աշխատություններեն, կարողություն չունի հետիւն յերթալ տունը, Սամաթիա¹⁾, ուստի կորոշե թրամվեյով յերթալ և ինքզինքը կը նետե թրամվեյի կառքին մեջ, վոր մեկ մարդու համար տեղ մնացած եր միայն Հազիվ կը նստի Մելքոն աղան, և ահա միջին հասակով, գիրուկ անձ մը կը մտնե կառքն և Մելքոն աղան տեսնելով՝

— Շատ ուրախեմ, կըսե, ձեզի հոս տեսնելուս համար:

— Ցես ալնույնպես, կը պատասխանի Մելքոն աղան:

— Զեզի խոսելիք ունիմ. բայց նախ և առաջ կընմք արդյոք ինծի ալ ձեր քովա առնուլ, սանկ քիչ մը իվշմիշ ըլլամ, սանկ պղտիկ տեղ մը բանաք նե, բայտական և ինծի համար, յես կընամ սղմիւ, արդին պղդտիկ մարդ մ'եմ:

Մելքոն աղան լուր բարեկամին տեղ շինելու համար ասդին կը դառնա, անդին կը դառնա, աջ ծունկը ձախին վրա կը դնե, պղտիկնալու կը ջանաւ: Մելքոն աղային ալս ճգանց միջոցին բարեկամն՝

— Ահ, ինքզինքդ ինծի համար անհանդիստ մի ըներ, յես կընամ հոս սղմիւ, կըսե ու, վորպես թե տեղ գտած ե, Մելքոն աղային ծունկին վրա կը նստի:

— Անհանդիստ չըլլաք...

— Ամենսին, ամենսին, գուք ձեր հանգիստը նայեք, կարծեմ թե ձեզի քիչ մը անհանդիստ ըրի:

1) Սամաթիա—Պոլսի արվարձաններից մեկն ե, Մարմարածովի ափին:

Վոչ:

— Զմեռ ե հիմա, սըխ նստինք նե, կը տաքնանք:

Այս:

— Ցեթե ալեռլուզլուր լեզաք, կաղաչեմ, ըսեք:

— Վոչ, կը պատասխանե Մելքոն աղան, վոր հազիվ կընա շունչ առներ:

— Ի՞նչ կա, ի՞նչ չկա, նայինք, Մելքոն աղա:

Վոչինչ:

— Տունը թնչպես են, չոճուխները աղեկ են:

— Խաթըրդ կը հարցունեն:

Վողջ ըլլան:

Մելքոն աղային ծունկերը կակսին թմրիւ. քըրաթինքը ճակտեն կը վաղե. ի՞նչ ընե, քաղաքավարությունը կը պահանջե, վոր մեր բարեկամները չվշտացնենք վոչինչ բաներու համար:

— Վայ կիտի Մելքոն աղա, վայ, ասանկ հեե... զիրսը պիտի տեսնենք լեզեր թրամվելի մեջ, աղբար, բահաթ չնստիս, սանկ վոտքերդ չերկնցնեսս...

Մելքոն աղան չպատասխաներ, վոտքի կելնե և լուր տեղն բարեկամին կը հանձնե:

Ի՞նչ, անանդի՞ստ եղար:

— Զե, այսոր շատ նստեցա տե, ատոր համար վոտքի վրա կախիւ կուզեմ քիչ մը:

— Առ ուրիշ, յես կարծեցի, վոր պեռյուղյուր լեզաք: Եւ, Մելքոն աղա, սա թրախոման մեր աղդին տունը կը քանդե կոր, ի՞նչ պիտի ըլլա ասոր վերջը, քանի կը մտմտամ կոր նե, խելքս կը թոցունեմ կոր:

- Իրավունք ունիք:

— Բայց այս խնդիրը խիստ կարեոր բան մ'ե, ատանկ լերեսի վրա ձգվելու խնդիրներին չե:

Յեկ Մելքոն աղալին թեր կը քաշե ուժով, վորպիսզի անոր զգացնե խնդրույն կարևորությունը:
— Այնպիս ե, կը պատասխանե Մելքոն աղան:
— Յեղբայր, մեր աղջին մեջ այս բանին կարևորություն ովող չկա, կը հարե բարեկամն՝ վոտքերով Մելքոն աղալին վոտքերուն զարնելով:
— Կը հասկնամ կոր, աղբար, կը հասկնամ կոր:
— Այնպիս վոր թրախոնա տալու կարողություն չունեցող խեղճ աղջիկները տունը մնալու կատիպվին կոր... աս ի՞նչ սարսափելի բան ե, աղբար, չպատասխան եմս...
— Ի՞նչ պատասխանեմ...

— Մահու և կենաց խնդիր մ՞ե այս:
Բարեկամն ամեն խոսելուն կամ ձեռքովը Մելքոն աղալին կուրծքին կը դաբնե, կամ վոտքովը անոր վոտքերուն վրա կը կոխե, կամ անդին կը հրե, կամ ասդին կը քաշե, Յեկ խոսք հասկցնելու այս լիդանակն հաղվաղեպ չե մեր աղջին մեջ: Տեսակ մը պերճախոսություն, վոր ունկնդիրները ծեծելու վրա կը կայանա:

— Իրավունք ունիս, ճանը՛մ, բայց յիս ի՞նչ ընեմ, ըսածդ կը հասկնամ կոր:
— Կը հասկնաս կոր, բայց անտարբեր կը կենաս կոր, պանպամ, կըսե Գասպար աղան և Մելքոն աղային թեն ուժով կը սխմե:

Կառքին մեջ դժոնվողներն կը խնդան այս տեսաբանի վրա, բայց մեր բարեկամն չհասկնար և կը շարունակե ծեծել Մելքոն աղան, վորուն համբերու-

թյունը կը հատնի և կառքը Զեմպերլի Թաղ¹⁾ հասնելուն պիսի ինքոյինքը կառքեն դուրս կը նետե:

Ի՞սչ ըներ Մելքոն աղան, կընաբը ըսել բարեկամին, վոր ըրածն քաղաքավարության գեմ եր, անկըթություն եր: Վաչչ: Քաղաքավարությունը բացարձակ կերպով կը դատապարտե անկիրթը ըսելը, ուստի Մելքոն աղան անկիրթ յերեվալին լավ համարեց ծեծ ուտելը:

Այս տողերը գրողն ալ որ մը այս տեսակ յերկու պերճախոսներու մեջտեղը գտնվեցավ դժբախտաբար, և մազ մնաց, վոր վոսկորներն ջարդուբուրդ ըլլալին, յեթե դժասիրտ մեկն վարպետությամբ չազատեր գալին:

Բայց այս պերճախոսներին ավելի սարսափելիները կան:

Պատմենք:

¹⁾ Զեմպերլի Թաղ—բառացի նշանակում է գոտիավոր քար. Գորում մը քարե կոթող և յերկաթե ձողերով գոտկավորված, ամբողջ քաղաքամասն ել կրում և այդ անունը:

* * *

Մելքոն աղան, խոնջած ցերեկվան աշխատություններեն, կարողություն չունի հետիոտն լերթալ տունը, Սամաթիա¹⁾, ուստի կորոշե թրամվեյով լերթալ և ինքինքը կը նետե թրամվեյի կառքին մեջ, վոր մեկ մարդու համար տեղ մնացած եր միայն Հազիվ կը նստի Մելքոն աղան, և ահա միջին հասակով, գիրուկ անձ մը կը մտնե կառքն և Մելքոն աղան տեսնելով՝

- Շատ ուրախ եմ, կըսե, ձեզի հոս տեսնելու համար:
- Ես ալ նույնպես, կը պատասխանե Մելքոն աղան:
- Զեզի խոսելիք ունիմ. բայց նախ և առաջ կրնաք արդյոք ինձի ալ ձեր քովն առնել, սանկ քիչ մը իլիշմիշ ըլլամ, սանկ պղտիկ տեղ մը բանաք նե, բաժական և ինձի համար, յես կրնամ սղմիւ, արդեն պղտիկ մարդ մ'եմ:

Մելքոն աղան լուր բարեկամին տեղ շինելու համար ասդին կը դառնա, անդին կը դառնա, աջ ծունկը ձախին վրա կը դնե, պղտիկնալու կը ջանա, Մելքոն աղային ալս ճգանց միջոցին բարեկամն՝

- Ահ, ինքինքդ ինձի համար անհանգիստ մի ըներ, յես կրնամ հոս սղմիւ, կըսե ու, փորպես թե տեղ գտած ե, Մելքոն աղային ծունկին վրա կը նստի:

— Անհանգիստ չըլլաք...

- Ամեներն, ամեներն, դուք ձեր հանգիստը նալեցեք, կարծեմ թե ձեզի քիչ մը անհանգիստ ըրի:

¹⁾ Սամաթիա — Պոլսի արվարձաններից մեկն ե, Մարմարա ծովի ափին:

— Վոչ:

- Չմեռ ե հիմա, սըս նստինք նե, կը տաքնանք:
- Այս:
- Ցեթե պեսուզլուր լեզաք, կաղաչեմ, ըսեք:
- Վոչ, կը պատասխանե Մելքոն աղան, վոր հազիվ կրնա շունչ առներ:
- Ի՞նչ կա, ի՞նչ չկա, նայինք, Մելքոն աղա:
- Վոչինչ:
- Տունը թնչպես են, չոճուխները աղիկ են:
- Խաթրուդ կը հարցունեն:
- Վող ըլլան:

Մելքոն աղային ծունկերը կսկսին թմրիւ. քըրատինքը ճակտեն կը փաղե. ի՞նչ ընե, քաղաքավարությունը կը պահանջե, վոր մեր բարեկամները չվշտացնենք վոչինչ բաներու համար:

- Վայ կիտի Մելքոն աղա, վայ, ասանկ հեե... զիրսը պիտի տեսնենք լեզեր թրամվեյի մեջ, աղբար, բահաթ չնստիս, սանկ վոտքերդ չերկնցնես...

Մելքոն աղան չպատասխաներ, վոտքի կելնե և լուր տեղն բարեկամին կը հանձնեն:

- Ի՞նչ, անշանզիստ եղար:
- Զե, ալոր շատ նստեցա տե, ատոր համար վոտքի վրա կանիլ կուզեմ քիչ մը:
- Առ ուրիշ, յես կարծեցի, վոր պեսոյւդյուր լեզաք: Եւ, Մելքոն աղա, ոս թրախոման մեր աղգին տունը կը քանդե կոր, ի՞նչ պիտի ըլլա ասոր վերջը, քանի կը մտմտամ կոր նե, խելքս կը թոցունեմ կոր: - Իրավունք ունիք:
- Բայց այս խնդիրը խիստ կարևոր բան մ'ե, տանկ լերեսի վրա ձգվելու խնդիրներեն չեւ

Ցեզ Մելքոն աղային թեր կը քաշե ուժով, վորպեսզի անոր զգացնե խնդրույն կարեորությունը:
— Այսպես ե, կը պատասխանե Մելքոն աղան:
— Յեղբայր, մեր ազգին մեջ այս բանին կարեռություն տվող չկա, կը հարե բարեկամն՝ վոտքերովն Մելքոն աղային վոտքերուն զարնելով:
— Կը հասկնամ կոր, աղբար, կը հասկնամ կոր:
— Այսպես վոր թրախոմա աալու կարողություն չունեցող խեղճ ապչիկները տունը մնալու կստիպվին կոր... աս ի՞նչ սարսափելի բան ե, աղբար, չպատասխանեմ:
— Ի՞նչ պատասխանեմ...

Բարեկամն ամեն խոսելուն կամ ձեռքովը Մելքոն աղային կուրծքին կը զաբնե, կամ վոտքովը անոր վոտքերուն վրա կը կոխե, կամ անդին կը ճրե, կամ ասդին կը քաշե: Ցեզ խոսք հասկցնելու այս յեղանակն հազվագեպ չե մեր ազգին մեջ: Տեսակ մը պերճախոսություն, վոր ունկնդիրները ծեծելու վրա կը կայանա:

— Իրավունք ունիս, ճանըմ, բայց յես ի՞նչ ընեմ: ըսածդ կը հասկնամ կոր:

— Կը հասկնաս կոր, բայց անտարբեր կը կենաս կոր, պատամ, կըսե Գասպար աղան և Մելքոն աղային թես ուժով կը սիմե:

Կառքին մեջ գտնվողներն կը խնդան այս տեսարանի վրա, բայց մեր բարեկամն չհասկնար և կը շարունակե ծեծել Մելքոն աղան, վորուն համբերու-

թյունը կը հատնի և կառքը Զեմպերլի թաշ¹⁾ հասնելուն պիս ինքզինքը կառքեն դուրս կը նետե:
Ի՞նչ ըներ Մելքոն աղան. կընաբը ըսել բարեկամին, վոր ըրածն քաղաքավարության դիմ եր, անկրթություն եր: Վաղաքավարությունը բացարձակ կերպով կը զատապարտե անկիրթ ըսելը, ուստի Մելքոն աղան անկիրթ յերեվալեն լավ համարեց ծեծ ուտելը:

Այս տողերը գրողն ալոր մը այս տեսակ յերկու պերճախոսներու մեջտեղը գտնվեցավ դժբախտաբար, և մազ մնաց, վոր վոսկորներն ջարդուբուրդ ըլլալին, յեթի դժասիբա մեկն վարպետությամբ չազատեր դայն:

Բայց այս պերճախոսներին ավելի սարսափելիները կան:

Պատմենք:

¹⁾ Զեմպերլի Թաթը՝ բառացի նշանակում և գոտկավոր քար Պոլսում մի քարե կոթող և յերկաթե ձողերով դուկավորված, ամբողջ քաղաքամասն ել կըում և այդ անունը:

* * *

Սեղրակ աղան կոշկուկարի մը խանութը կը մտնե,
— Բարեկամ, կըսե կոշկակարին, զուգ մը կոշիկ
կուզեմ ապսպրել:

— Շատ աղեկ:
— Կոշիկներուն քիթը նեղ ըլլալու չեն:
— Հիմակվան մոտայեն չեք ուզեր ըսել ե:
— Միայն կուզեմ, վոր վոտքս կոշիկի մեջ կարե-
նա շարժիլ. նեղ վոտքի աման չեմ ուզեր, վորովհետև
նասըր ունիմ:

— Գլխուս վրա, ձեզի անանկ կոշիկ մը շինեմ,
վոր թե մոտալի համաձայն ըլլա, և թե ձեր վոտքերը
չսխմեն:

— Յեթե կարենաս գոհ ընել զիս, միշտ քու խա-
նութը կուզամ:

— Վատահ յեղեք:

Կոշկակարը Սեղրակ աղային վոտքի չափը կառնե
և կիմացնե, թե քանի մ' որեն պատրաստ պիտի ըլ-
լան կոշիկները:

Սեղրակ աղան քանի մ' որեն կերթա կոշկակարին:

— Պատրաստ են կոշիկներս:

— Այս, պատրաստ են:

Կոշկակարին աշակերտը Սեղրակ աղային կը ներ-
կայացնե կոշիկները:

— Յեղբայր, կըսե Սեղրակ աղան, ասոնք պղտիկ
են:

— Ընդհակառակն, մեծ են:

— Ասոնց քիթերը նեղ են:

— Զեմ կարծեր, շատ լայն քիթերն ախոր մաք-
պուլ չեն. կաղաշեմ, անգամ մը ձեր վոտքն անցունե-
ցիք սա կոշիկները:

Սեղրակ աղան կը նստի: Կոշկակարին աշակերտը
քառակուսի տախտակ մը կը դնե Սեղրակ աղային
վոտքերուն տակը Սեղրակ աղան կը ձեռնարկե նոր
կոշիկներն հագնելու. Կոշիկները կապստամբին:

— Վոտքդ ուժով կոխե, կը պոտ կոշկակարն:

— Վոտքի վրա յել ու այնպես կոխե, կըսե կոշ-
կակարին քալֆան:

— Ուժով վոտքդ գետինը դարկ, կը խրատե կոշ-
կակարին աշակերտը:

— Ծը, սա փոշիեն ցանե քիչ մը կոշիկներուն մեջ,
վոր Սեղրակ աղային վոտքերը դէ՛ւրութիւնը սահին
ու մտնեն. կը հրամայե կոշկակարն պղտիկ աշակեր-
տին:

Հրամանը կը կատարի:

Կոշիկներն հաստատամիտ են:

— Եռփ, քրտնեցա, պե ատամ, կըսե Սեղրակ ա-
ղան՝ յերեսը թիվեցնել-վ, քեզի քառասուն անգամ
ապսպրեցնք, վոր մեծ ըլլան, լայն ըլլան, յերկար
ըլլան:

— Կերեա, վոր վոտքերդ ալ քրտնած են և անոր
համար...

— Զե, քուզեմ, չե ճանըմ... կոշիկները նեղ են:

— Անգամ մը հագնիս նե, կը բացվին. Լայն վոտ-
քի աշաններն ավե ի կը մնասեն նասըրներուն,

— Զեմ կրնար կոր հագնիլ:

Կոշկակարն քալֆալովն և աշակերտներովն Սեղրակ

աղային ոգնելու կերթա։ Յերկու հոգի Սեղբակ աղային թեզը կը մտնեն։ կոշկակարը Սեղբակ աղային մեկ վոտքը կը բռնե և կաշխատի կոշիկին մեջ դնել Ամբողջ կոշկակարքան իումբը կը քաջալերե Սեղբակ աղան։

- Հա, հա, կը մտնա կոր...
- Քիչ մ'ալ համբերություն...
- Քիչ մ'ալ հաստատամտություն...
- Ո՞ն, քաջալերվե...
- Վայ, վայ, վայ...
- Քիչ մը դիմացիր, եփենախմ...
- Անգամ մը մտնա ներ...
- Վոտքս կոտըիին նե, ավելի աղեկ եր...
- Հա, հա, քիչ մնաց...
- Քիչ մ'ալ ճահաւ ընես նե, կը լմնաս, կերթա։
- Հոգնեցար նե, քիչ մը հոգնություն առ տե...
- Զեմ ուզեր, պե ատամ, թող տվեք հանեմ վոտքըս, ճիւերս սղլամբը կըլլա կոր...
- Թան մը չե, կանցնի։
- Հարյուր անգամ ալ ապսպեցի, վոր լես մոտաչեմ ուզեր, վոտքերուս հանգստությունը կուղեմ...
- Կոխե վոտքդ...
- Ի՞նչպես կոխեմ, ճանըմ, չեք հասկնար կոր, վոր վոտքերս կերին կոր, կարծես թե կըակի մեջ կոխած եմ... թող տվեք, աստվածնիդ ոիրեք, սա ի՞նչ խոսք հասկցող մարդոց հանդիպեցանք։
- Քիչ մ'ալ դալրեթ ըրե, եփենտի։
- Դալրեթնիդ ալ գետնին տակը անցնի, կոշիկնիդ ալ... թող տվեք վոտքս, վաղ անցա։
- Բարկանալու իրավունք չունիք, Սեղբակ աղա...

— Չունիմ, աղբար, չունիմ, գուք իրավունք ունիք բարկանալու, թող տվեք, սա վոտքս քաշեմ։

կոշկակարն ուժով բռնած և Սեղբակ աղային վոտքեն, վորուն իննը տասներորդ մասը մտած և կոշիկի մեջ։

— Շատ ըծախնդիր եք. Սեղբակ աղա։

Սեղբակ աղան կզգա, թե գերի բռնված և. ուստի անձնատուր կըլլա կոշկակարին, վոր յուր խումբովը կը հաջողի կոշիկներն անցնել յուր հաճախորդին վոտքերուն։

— Տեսամ, ինչպես աղեկ լեղավ... վոտքի վրա կայնե քիչ մը. ո՞հ... մինչե առն լեղթաս նե, վոչ ցավ մը կմնա, վոչ բան մը... սանկ քալե, նալիմ։

— Ի՞նչպես քալեմ, ճանըմ, նասըըներս կը ցավին կոր... հանեցեք սըլոնք։

— Քիչ մը խոսք մտիկ ըրե, Սեղբակ աղա, մինչե տուն գնա, վոտքերդ պիտի վարժվին ու...

— Քիչ մը լայնկեկ շինհյեք նե, չե՞ր ըլլար։

— Զըլլար, Սեղբակ աղաս, չըլլար, ամեն խանութնամուս ունի, մենք մեր խանութին պատիվը չենք կրնար կոտրել անանկ մեծ, լայն ու տծե կոշիկներ կարելով. ամեն մարդ իր գործը գիտե։

— Աղեկ, աղեկ, ի՞նչ պիտի տանք։

— Վոսկի մը ու մեծիտիկ մը։

— Առեք։

— Շնորհակալ եմ. Մեզի մի մուռաք, Սեղբակ աղա։ Սեղբակ աղան այդ կոշիկներով դուրս կելնե կոշկակարին խանութեն, նասըըներու ցավին ամեն քալափոխին հառաջելով, յերեմն ալ արտասկելով։ Կզգա վերջապես, թե չպիտի կընա շարունակել ճանձ։

բան, զրոսարան մը կը մոճնե, բազմոցի վրա կը նստի
և կոշիկները հանել կուղեւ: Զհաջողիր: Սրճարանին
սպասավորը կը կանչե և կաղաչե, վոր կոշիկներն քա-
շե: Սպասավորը բուոր ո: ժը կսպառե, կարելի չե կո-
շիկները հանել, իմաց կը տրվի կոշկակարին, վոր
քալֆային ընկերակցությամբ կը հասնի ու մեծ դըժու-
վարությամբ կը հաջողի ազատել Սեղրակ աղան յուր
վոտքերուն ձեռքեն: Սեղրակ աղան կը հագնի հին
կոշիկները: Դորս կոշկակարի խանութեն հետն առած
երա և կը հանգստանա:

^{իսկ} Բնավ սըմբյի չեք դար կոր, Սեղրակ աղա,
կըսե կոշկակարը, ձեավոր և ճաշակավոր բան մը հագ-
նելու համար քիչ մը ակռան սխմելու յե մարդու.
ինչ վոր ե. տփեք սա կոշիկներն ինձի, վազը յես զա-
նոնք աղվոր խալլպի ը զարնեմ տե, դրկեմ ձեղի:

— Շօտ աղեկ, կը պատասխանե Սեղրակ աղան
ու խաչվե մը խմելո՞ն պես կը մեկնի:

Հետեյաւ որը Սեղրակ աղան շուկա կերթա, ա-
պաւէ լաքածին մը ու լաստիկ մը կը գնե, կը հագնի
ու գործին կերթա:

Դիտողությունները կակսին.

— Սա Սեղրակ աղան շատ թուափ մարդ ե:

— Ապատ և պարզապես:

— Տիկանի ըսեք սըվոր, յերթա:

— Յես աւ տեսա, ապա լար ճին մը անցուցեր և
վոտքը վեան ալ բաստիկ հաղեր ե...

Ապատաւակնելություն ե:

ինչ մեզքա պահեմ, ճետը պարտելու, կամչնամ
կոքան յախանուց ամոյթ վուժոյ մի սովորություն

— Թող գլուղ մը յերթա, նստի, եփենտիմ:
— Աս վոտքերով ընկերությանց մեջ մտնել կա-
րելի չե:

Այս գիտողություններն Սեղրակ աղալին ականջը
կը հասնի: Սեղրակ աղան կը համոզի, թե քաղաքա-
վարությունը չը հակառակիր նասը ի, բայց սարսա-
փելի թշնամի յե ապալաբանին ի: Սեղրակ աղան կը
ստիպվի հանել լաբճինները և ընդունել մոտայի հա-
մաձայն կոշկիկներն ու անոր հարվածներն:

* * *

Ծնունդի կամ Զատկի տոթիվ բարեկամաց և ազ-
պականաց այցելություններ կը նույնիք:

Շատ անգամ կը պատահի, վոր լերեք կամ ավելի
անձանց այցելություններն միանգամայն ընդունիք:

Սովորություն ունիք ասոնց խահվե կամ անուշ
կամ ոշարակ կամ ողի հրամցնել:

Տան աղջիկն ափսե ի ձեռին կը մտնե սենյակը:
Վորոն հրամցնե նախ և առաջ:

Բնականաբար ամենեն տարիքոտին:
(Բնականաբար ամենեն հարուստին):

Աղջիկն կուղղի յուր քալերն դեպի ճերմակ մազերն,
Արիմելեք աղան:

Արիմելեք աղան չընդունիք անուշեղեն նախապատ-
վությունը ուշ:

— Առաջ Գաբրիել աղային տուր, կը սե:

Աղջիկն կը ներաւանա Գաբրիել աղային. վոր
կը դրկե զան Համբարձում աղային:

Աղջիկը կը տնկվի Համբարձում աղային առջև, վոր
նշանացի Գաբրիել աղան ցուլց կուտա անոր:

Աղջիկը կսկսի ճամբորդության, Արիմելեք աղային
Գաբրիել աղային, Գաբրիել աղային Համբարձում ա-
ղային, Համբարձում աղային Արիմելեք աղային: Ճամ-
բորդությունը կը կրկնվի քսան անգամ, խեղճ աղջիկան
թերուն վրա կար և կարողություն չմնար ափսեն
տանելու: այցելուք այս ճամբորդութան միջոցին հար-
գանքներ կը փոխանակեն իրարու հետ:

— Կաղաչեմ, առեք:

— Կը խնդրեմ, հրամմեցնք, Գաբրիել աղային տժւը,

աղջիկս:

— Զեմ ընդունիք, Արիմելեք աղային տար, աղջիկս:

— Վոտքերնիդ պագնեմ, մի ընեք, աղջիկը հոգնե-
ցուցիք. Համբարձում աղային հրամցներ, աղջիկս:

— Աստված չընե, իս ով իմ, վոր ձեզմե առաջ
առնեմ. Գաբրիել աղային գնա, աղջիկս:

— Զեմ առներ, չեմ առներ. պարապ տեղը մի գար,
աղջիկս:

— Արիմելեք աղան առնելու յե նախ և առաջ:

Մոոցանք ըսելու, թե այցելվաց մեջ չորրորդ մ'ալ
կա, վոր դասատու յե և ուսումնական խորհրդեն վկա-
յական ալ ունի:

— Կարելի չե, վոր ընդունիմ, կը վայլի ինձի, վոր
ձեզմե առաջ հրամցվիմ, Համբարձում աղան պետք ե
վոր...

— Իմին խոսքս կը լլա. տեր ողորմա. ճուրճինալի
պիտի լելանք, ամեն բան կարդով, կանոնով ըլլառ
լե. Արիմելեք աղային տներ, աղջիկս, Արիմելեք աղան
այսոր, աստված տա, իերեսուն հազար վոսկու տեր ե,
իս անոր ծառան պիլե չեմ կրնար ըլլար վոր:

— Առ ի՞նչ պարապ խոսք ե, Համբարձում աղա,
դուն պատվավոր մարդ մ'ես...

— Առամ, պատվավորությունը ստակով կը լլա հի-
մա, անանկ չե, պատվելի:

— Անանկ ե, եֆենտիմ:

— Գաբրիել աղային տվեք անանկ ե նե, ան ալ
թաղական ե:

Հոգնեցուցիք աղջիկս, եֆենտիմ...

— Իրավ եւ
— Մեղք եւ զավալըն:
— Վնաս չունի, մնաս չունի, չոգնեցա յես, կը
պատասխանե աղջիկն շունչ կտրած:
— Անուշ չպիտի՞ առնեք ալսոր, հրամմեցնք, կըսե
տան տերը:

Կերջապես Արիմելիք աղան կը հավանի նախա-
պատվությունն ընդունիլ և յերկար պատմությամբ մը
պարզելի հետո այն պատաճառներն, վորոց համար կու-
զեր ամենն վերջը ուտել անուշն, կը բարեհաճի դգալ
մ'անուշ առնելու և ավուր պատշաճի բարեմաղթու-
թյուններն ընելե հետո անուշն ուտելու:

Կարգը Համբարձում աղային եւ:
— Շնորհավոր նոր տարի, Կիրակոս աղա:
— Շնորհակալ եմ, կը պատասխանե տան տերը:
— Յեկ բարի կաղանդ:
— Շնորհակալ եմ:
— Յեկ աստվածահայտնություն տիառն մերու:
— Վողջ ըլլաք:
— Ռուտիք ե մեղ ութ որ և անձրևաբեր հողմունք:
— Ալո՞ւ:

Համբարձում աղան ալ կը կատարե յուր պաշտոնն,
թեև կը մոռնա Գերմանիո կայսեր գահակալության
տարեղարձը հիշելու:

Գարրիել աղան դգալն անուշամանի լերկնցնելով
կմկսի բարեմաղթությանց:

— Շնորհափոր նոր տարի և բարի կաղանդ և աստ-
վածահայտնություն:
— Շնորհակալ եմ:
— Աստված շատ տարինիրու հասցնե խնդությամբ:

— Բարեկամոք հանդերձ:
— Աստված քետեր չցցունե:
— Ամենս:
— Աստված քյար պերեքեթ տա:
— Ամենս:
— Տեր աստված ձեր տունը շնն պահե:
— Վողջ ըլլաք:
— Փեաներ առնեք, հարսեր առնեք:
— Շնորհակալ եմ:
— Թագերը, պսակները պագնեք:
— Շնորհակալ եմ:
— Թոռներ ունենաք:
— Աստուծով:
— Թոռներու թոռներ ունենաք:
— Աստված լսե:
— Թոռներու թոռներուն թոռներն տեսնաստ:
— Շնորհակալ եմ:
— Հիվանդություն և ցավ չտեսնաք:
— Այսեն:
— Խոր ծերության հասնիք:
— Դուք ալ: Անուշ ըլլա, Գաբրիել աղա:
— Շնորհակալ եմ, Կիրակոս աղա, հող բռնես վոսկի
դառնատ:
— Հրամմեցնք, պատվելիի
Պատվելին պարզ թեմեննահ մընելով, հաղիվ թե
դգալին կը դպչի, ափսեն աղջկան ձեռքեն կիյնա, և
պատվելիին վրան դլուխը կանուշանա և կը ջրանա:
Հյուրերն իրար կանցնին:
— Վախցար, որիորդ:

- Մի՛ վախնար, աղջիկս:
- Դինիի մեջ քիչ մը կրակ մարեցեք և թող տվեք,
վոր խմե:
- Խեղճ աղջիկ:
- Մենք պատճառ յեղանք:
- Թևեն արլուն առեք:
- Թաքլաք մը նետել տվեք:
- Ժեռոտելի բաստիլներեն¹⁾ տվեք:
- Սինկերի²⁾ կարի մեքենա մը չունիք:
- Վախցաք, որիորդ:
- Զե, չե, չվախցա, բայց կը ցավիմ վոր...
- Ցավերու բան չկա, որիորդ, ասանկ որեր շատ
կը պատահին, ասանկ փորձանքներ:
- Գնամ, հանգստացիր, որիորդ:
- Աղջիկն գուրս կելնե: Դյուրին ե գուշակել, թե ինչ
կըսե մտքեն:
- Պատվելի, մահանայով տուշ ըրիր հե...
- Քիչ մը թրջեցավ վրան:
- Ժեռոտելի բասթիլին քսեցեք վրան:
- Կը չորնա, կը չորնա: Մնաք . բարով, պատ-
վելի:
- Յերթաք բարով, եֆենտիմ:
- Մնաք բարով, պատվելի:

¹⁾ Ժեռոտելի բաստիլները Պարոնյանի ժամանակ մեծ բեկ-
րամով հաջակված քրանուկական հայտնի հաբեր ելին, վորոնք հեղ-
նանքով համարվում ելին միջոց գրեթե բոլոր հիվանդություն-
ների դեմ:

²⁾ Սինկեր = Զինգեր — ամերիկական հայտնի դորժարանատի-
րոջ ազգանունը. գործարանը հոչակվել ե իր կարի մեքենաներով:

- Յերթաք բարով, պելս
- Կեցիք բարով պատվելի:
- Յերթաք բարով եփենտիմ:
- Ա՛հ, աս քաղաքավարության ձեռքեն մեր քաշածը...
մանավանդ դասատուներուն քաշածը:
Բայց աս ալ բան մը չե, ավելի սարսավելինե-
րը կան:
- Մամիկ ըրեք:

* * *

Վաճառական մ'ես, Յեղ յես չեմ մեղադրել զքեզ
վաճառական ըլլալուղ համար, վորովհետեւ մեղավորը
դու չես, այլ այն, վոր զբեղ վաճառականութիւն ա-
ռաջնորդեց, Զեմ ալ նախատեր զքեղ, այլ, թող ներվի-
ինձ անաշառաբար խոսիլ, կը վարդիմ հետդ այն-
պես, վորպես պիտի վարդիմ քսակահատի մը հետ,
այսինքն քեզի հետ գործ ունեցած ժամանակս կը
զգուշանամ, վոր չխարվիմ, վոչ թե խրատվելով Վով-
նարկի¹⁾ սա խոսքեն, թե Շաճառականութիւնը խա-
րերայութիւն արհեստն եւ, այլ հենով անձնական
փորձառութիւնս, վոր հանդգնութիւն կուտա ինձ
բարձրաբարբառ խոստովանիլ ալսոր, թե հարցուր վա-
ճառականներու մեջ յերկու վաճառական ճանչցած եմ
միայն, վոր սուտ չեն խոսիր... բայց արի, տես, վոր
ալս յերկու վաճառականներն ալ բնավ չեն խոսիր:

Վաճառական մ'ես, ըսինք և ամշնալու պատճառ մը
չունիս— Առավոտուն կանուխ վաճառատունդ կեր-
թաս, վարդաբէթերդ կը լարես և ամեն բան կը նցութես,
վորպեսզի չփախցնես վորսն, վորուն կսպասես ժօմե
ժամ: Մեծ վաճառական մ'ես, ավելորդ և ըսել. թե մեծ
խարերա մ'ես, ուստի վաճառատանդ մեկ անկլունը
քաշված՝ աչերդ կը սեեռես վաճառատանդ դուն, ուս-

կեց պիտի դա վորսն: Քանի մի ժամեր կուգան, կը
հոլովին, կը սահին, կանցնին, կերթան, և ահա հա-
ճախորդ մը կերկա դուն առջևս Անմիջապես վոտքի
կելնես. կը վազես դիմավորելու հաճախորդդ և բազ-
մոցիդ վրա բաղմեցնելու: Խահիկ կը հրամցնես ի-
րեն, կը շողոքըրթես, կը շոյես զինքն, կը քծնիս իրեն,
չափաղանց հարգանքներով կը շրջապատես զինքն և
մեկ ժամ շարունակ սուտ կը խոսիս: Գրագիրդ ալ ու-
րիշ սուտերով հաստատություն կուտա սուտերուդ:

Հաճախորդդ քիչ մը պարարտ ե, յերեք-չորս հա-
ղար վոսկվա գնուու մը պիտի ընե: Այլ և այլ ապրա-
նաց որինակներ կուզե, ցույց կուտաս՝ գովեստներ
կարդարով անոնց վրա, միայն թե դափնյա պսակներ
չես բոլորեր ապրանացդ ճակտին վրա:

— Այս ապրանքը հրապարակի վրա չը գտնվիր,
մասնավորապես մեզի համար ապսպրած ենք:

— Շատ ընտիր ապրանք ե, կը հարե գրագիրդ,
վորուն հետ փոխասաց կը լլաս:

Սքանչելի ապրանք մ'ե, նմանը չկա:

— Ուր եր, թե քանի մը հազար հակ ունենայինք
այս ապրանքին:

— Ապրանք մը, վորու գունը չորջիր:

— Ապրանք մը, վոր հազար անգամ խսկ յեթե լվացվի,
չփոխեր յուռ գաղափարը:

— Սկզբունքի տեր ապրանք մը:

— Յեղ հաստատ սկզբունքի տեր, վորովհետեւ բնավ
չպատոիր:

— Հարյուր տարի կրնա գործածվիր:

— Ի՞նչ կըսիք, տեր իմ... հարյուր տարի... հարյուր
հիսուն տարի, յերկու հարյուր տարի, յելեք հարյուր
տարի...

1) Վափթառեկ Լյուկ-Նի-Պապ (1715 - 1727) ֆրանսացի
բարոյադես գրող եր, առաջինության աղյուրը համարում եր վոչ
թե բանականները, այլ սիրոս, վորակում ե վորպես «քրիս-
տոնյա—փիլիսոփ»:

- Ծիծաղ. — 1) Շիրիմ մը կանգնեցեք սա ապրանքին վրա, ով հարուստներ...
- Շատ պատվական ապրանք ե:
- Յեզ ամեն մարդու ալ չենք ցուցներ սա ապրանքը:
- Զձեզ մեր վաճառատան վարժեցնելու նպատակ ե, վոր հանեցինք այս ապրանքը:
- Ներեցեք մեզի՝ ձեզի աղաջելու, վոր չըսեք ուժին, թե այս ապրանքը մեր վաճառատունեն առիք:
- Ասոր նման հազար ու մեկ խոսքերով վերջապես կը հաջող/ք դու և գրագիրդ համեցնել ապրանքներդ: Կարգը կուգա սակարկության:
- Վերջնական գին մը պիտի զրուցեմ:
- Մեր եֆենտին սովորությունն ե՝ միշտ վերջնական գին մը զրուցել:
- Սակարկութենե չեմ ախորժիր:
- Մեր եֆենտին բնավ չախորժիր սակարկութենե:
- Թիրես աղեկ բան մը ըլլա սակարկությունը, բայց իմ նաթուրական հակառակ ե: Շատ խոսք չեմ սիրեր:
- Մեր եֆենտին շատ խոսիլ չմիրեր:
- Ռւսակի, մեկ խոսքով, այս ապրանաց համար պիտի վճարեք յերեք հազար ութ հարյուր մեկ քառորդ վոսկի և յերկու գահեկան:
- Մեր եֆենտի, սիսակցաք, չորս հազար վոսկի մեզի ապրանքը յերեք հազար յոթը հարյուր քսան վոսկի պիտի վճարեմ:
- Միաւ մեր պատվաստան մեջ գրագիր ըլլալի, միշտ հոս պիտի գալի ապրանք գնելու, կը մրմռա գրագիրը:
- Եթենտի, կը պատասխանե հաճախորդը, յես ալ վերջնական գին մը պիտի տամ այն ապրանաց համար, յերեք հազար յոթը հարյուր քսան վոսկի պիտի վճարեմ:
- Վորսը բոնվեցավ: Հինգ հարյուր վոսկի կը շահիս. կուրախանաս հաղթանակիդ վրա, բայց անմիջական հավանականության մը գալիքակություն պատճառելու հավանականությունը մեկ կողմե և քանի մ'ոսկի ավելի փրցը նելու անդիթյունը մկու կողմեն կը հարկադրեն զքեզ

1) Ծիծաղ — Պարոնյանի յերդի ծաբանական դրբերից մեկի վերջնակիրն ե: Ծիծաղը յերեմն Պարոնյանի յերկուում հանդես է գալիս վորպես գործող անձ:

— Սիսալ հաշիվ ըրեք, եֆենտիս, սիսալ, կեցիք, ցույց տամ այդ ապրանաց հաշիվներն, զորս Յեվրոպային մեր գործատանեն ընդունած ենք:

Գրագիրն շինծու հաշիվցույցիր կը բերե և կը նետե առջեղի:

Դուն ալ վորպես թե կը քննես և կը խոստովանիս սիսալած ըլլալի:

— Սիսալ հաշիվ եմ ըըեր:

— Չորս հազար հարյուր մեկ քառորդ վոսկի պիտի ըսելիք:

— Ինչ վոր ե, անգամ մը բերնես յերակ, խոսքս իետ չիմ առներ յես:

Գրագիրը սարկանալ կը կեղծե և յուր գըասեղանին առջե կերթա՝ քթին տակեն մրմռալու:

— Յերեք հարյուր վոսկի մասեն խոսքն իետ չառնելու համար:

— Այն, բերնես յերակ, կը վճարեք այդ գումարն և կառնեք ապրանքները:

— Մեղի պես ապուշներն ամեն որ կը խարեն ասանկ, յերեք յես այս վաճառատան մեջ գրագիր ըլլալի, միշտ հոս պիտի գալի ապրանք գնելու, կը մրմռա գրագիրը:

— Եթենտի, կը պատասխանե հաճախորդը, յես ալ վերջնական գին մը պիտի տամ այն ապրանաց համար, յերեք հազար յոթը հարյուր քսան վոսկի պիտի վճարեմ:

Վորսը բոնվեցավ: Հինգ հարյուր վոսկի կը շահիս. կուրախանաս հաղթանակիդ վրա, բայց անմիջական հավանականության մը գալիքակություն պատճառելու հավանականությունը մեկ կողմե և քանի մ'ոսկի ավելի փրցը նելու անդիթյունը մկու կողմեն կը հարկադրեն զքեզ

գարմացական լեղանակով մը պատասխանել հաճախորդիդ.

— Տղմ լիս, աղբար, ապրանքը չճանչցար ..
 — Այդ ապրանքն ամեն մարդու հանելու չե, կը
 մը մոա զրագիրն:

— Ներկցեք, մարդ խարելու համար նստած չենք հոս:
 — Քսան վոսկի յեվս տամ, կըսե հաճախորդը:
 — Քսան վոսկիի խոսքը կըլլմ... կուզեք նե, տարեք
 ապրանքներն և բարա մը մի վճարեք. բայց խնդիրն
 անոր վրա չե, ապրանքին արժեքը տալու լիք:
 — Տասն վոսկի ափելի տամ

Հասած ե ժամն համաձայնություն գոլացնելու և
 վոսկիներն առնելու. հետեապես կըսկսիս կարճ, բայց
 ազգու տաենաբանության մը, վորով կընդոնիս ինչ
 ինչ զիջումներ լնելու, և ահա ճիշտ ալս միջոցին կարճ,
 բայց ազդու մարդ մը կը մտնե վաճառատունդ:

— Քրիստոս հարլամփ ի մեռելոց:
 — Որհնյալ ե հարություն Քրիստոսի:
 — Ի՞նչպես եք աղեկ եք:
 — Փառք ասուուծո, Յենովք աղա:
 — Տիկինը ի՞նչպես ե:
 — Սղեկ ե:
 — Որիորդներն աղեկ են:
 — Աղեկ են:
 — Վողջ ըլլան. աղադ ի՞նչպես ե:
 — Շատ աղեկ ե:
 — Մայրդ:
 — Գեշ չե:
 — Մեծ մայրդ:
 — Հանդիսա ե:

— Փեսան ի՞նչ կընե:
 — Ի՞նչ ընե:
 — Զեղի՞ յե:
 — Չե:
 — Դուք փեսին տժւնն եք:
 — Չե:
 — Ո՞ւզ եք հապա:
 — Մեր տունը:
 — Շատ աղեկ, շատ աղեկ... Խահվե մը ապսպել
 տայիր ինծի, վորովհետե հոգնած եմ:
 — Շատ աղեկ:
 — Չես ըսեր, մեր պղտիկ շունը յակըռուլամիշ ըբակ
 իերիկ գիշեր:
 — Կընե յա:
 — Մեկ հատը ձեզի պիտի տանք:
 — Շնորհակալ եմ:
 — Բայց քիչ մը մեծնան տե, անանկ:
 — Շատ լավ:
 Հաճախորդն մեկնելու շարժումներ կընե. նշանացի
 կը պատասխանես իրեն, վոր քիչ մը համբերե: Կը
 բարկանաս, բայց քաղաքավարությունը չներեր, վոր
 Յենովք աղան վոնակն:

— Ի՞նչ ալ աղվորիկ լակոտներ են:
 — Այն:
 — Սա պիտի հարցնելի ձեզի, թե ի՞նչպես մեծնե-
 լու յի ասոնք Մայրերնին տկար ու հիվանդու ե, կաթ
 չունի... տոնեն ըսին, վոր պիպըռն առնենք ու անով
 կաթ տանք:
 — Այս
 — Կրլլմ մի:
 — Զիտեմ:

— Զիր թաղը սանկ շուն մը չկմ, վոր գա, մեղի
մնա ու սա լակոտները պեսլիմիշ ընեւ: Քուզում, կա-
զաչիմ, աշխատինք ու աղատինք սա խեղճները... պի-
պըսոնի խելքս չպառկիր իմին, Ասդին, անդին հար-
ցնելիք ու փնտռելիք ասանկ շուն մը...

— Շատ լավ, կը նայինք:
— Հիմա նայիցիք?
— Հիմա գործ ունիմ, անկարելի ին,
— Աս ալ գործ են, սեպատ են:
— Դլուխս քիրելու ատեն չունիմ այսոր:
— Յերբ կը նայիք:
— Ստիպողական: Գործիր ունիմ, յերբ նայելիքս
անդամ վորոշելու ժամանակ չունիմ:
— Ժամանակ անցնելու չի գոր, անանկ բան մ'են,
վոր...
— Գործ ունիմ, Յենովք աղա:
— Անանկ բան մ'են, վոր ուշացնելու չդար... մեկ
հատը քեզի պիտի ըլլա:
— Քառորդե մը կուզամ, կըսե հաճախորդն ու վա-
ճառատունեն գուըս կենե:
— Ե՞ռփ, Ե՞ռփ, Ե՞ռփ, կը հառաջես ինքիրմեզ:
— Լակոտներն անանկ ալ սատանա լեն, վոր տհս-
նելու բան են:
— Այս:
— Ուրեմն զարար տանք ու լմնցնենք:
— Այս:
— Պիպոն չըլլար:
— Չըլլար:
— Սոնտու շուն մը դանելու ին:
— Այս:

— Ուրիշ ճար չկա:
— Չկա:
— Կմ մի յմ:
— Չկա:
— Չե, թե վոր կա նե, ըսե:
— Չկա, Յենովք աղա, չկա, չկա, չկա:
— Բարկացաք:
— Չը բարկացա, բայց...
— Բարկանալու իրավունք չունիք, իսս ձեր սպա-
սավորը չեմ, ձեզմե շահ մ'ալ չեմ ակնկալեր, խահվե
մը խմեցի, կուզեք նե, անոր ալ բարան կուտամ, հոգ
կելտին; սեփա կելտին¹⁾:
— Չե...
— Գիտնալով, վոր շուներեն կախորժիս, ուզեցի
քեզի շուն մը հետիյե ընել, զուն շնորհակալ ըլլալու
տեղ ոտապաշշըի թավըր կը բռնես ինձի:
— Չե, Յենովք աղա:
— Յեր քուշուն եթի լեհնմեզ, ²⁾ աս ալ սորվե, չես
պիտեր նե:
— Եենովք աղան բարկութիամբ կը մեկնի:
— Գուն ալ հաճախորդիդ դարձին կսպասես:
— Յերեք ժամեն լետքը հաճախորդդ կուգա:
— Ալսոր ստակ չունիմ, քանի մ'որեն պիտի դամ
ատլանքներն առնելու, մնաք բարով:
— Յեկուր, մը կըրթաք... խոսք մ'ունիմ... վայը-

1) Հոս կեղտին սեթա կելտին (տաճկ.) բարով յեկար ուրա-
խությունով յեկար:

2) Հեր բուշուն եթի յենմեզ տաճկական ասացվածք և
նշանակում են ամեն թոշնի միս չի ուավին:

կյան մը... ինծի նայե... աղա... հֆենտի... բարեկամ...
չգմս... լեկուր տե, դարձւալ գնա... չենք ուտեր քեզի...
իւնդ ե, վոր լետ դառնա,

Կղզաս դժբախտաբար, թէ հաճախորդդ ուրիշ վա-
ճառականի մը հետ համաձայնած և ավելի դոհացուցիչ
պայմաններով: Քիչ մը դրագրիդ դեմ կը բարկանաս
և հետո կսկսիս հայրություններով փաթահէ Յենովք
աղային զլուխը:

Դառնանք ալժն ուրիշ տեսաբանի մը:

* * *

— Կը ճանաչե՞ք Բարթողիմեոս աղան:

Զարմանալի մարդ մ'եւ:

Դիցուք թէ առավոտ մը գործիդ գլուխը գտնվելու
համար վազելով կ'երթաս խանութդ բանալու: Մարդ մը
կելնե դեմդ, մեկ քիլոմետրո հեռավորութենե կը բա-
րես զքեզ, թեդ կը մանեւ և կըսե.

— Յես ալ քեզի տեսնել կուզելի, սանկ քիչ մը եր-
կընանք, խոսելիք ունիմ քեզի:

Այդ մարդն և ահա Բարթողիմեոս աղան:
(Խոսքը մեջերնիս մնա, Բարթողիմեոս աղան չի-
մանա):

Բարթողիմեոս աղան այնքան քայլ կառնե քեզի
հետ, վորքան վոր պետք և վորպիսությունդ հարցնե-
լու համար, և ահա խոսքի կը բռնիլի ուրիշ բարեկա-
մի մը հետ, վորուն կը հանդիպի:

— Ըսածդ կերպով ըրի, բայց չհաջողեցաւ:

— Անպատճառ սխալ մ' ըրած ըլլալու յես:

— Վոչ, ձուկը խորովցի և աղով ու լիմոնով պատ-
րաստված համեմի մեջ դրի; անհամ բան մ'եղավ:

— Զարմանալի բան:

— Կաղաչեմ, վոր որ մը գաս ու քու ձեռքովդ
պատրաստես. տիկինն ալ հետդ բեր, նստինք ու քիչ
մը ժամանակ անցունենք: Տիկինն ինչպես ե, աղեկ և

— Շատ աղեկ եւ:

— Հատկապես բարեկ կընեմ:

— Գլխուս վրա:

— Յե՞րբ պիտի խալսի:

— Ամիսե մը, յեթե աստված կամենա:

— Մանչ կը նմանի:
 — Հայտնի չեւ:
 — Մանչ և առաջ աստված: Տիկնոջդ ըսե, վոր չը
 նստի, միշտ շարժի, քալի ու քալեւ:
 — Շնորհակալ հմ, մնաք բարով:
 Բարթողիմեռու աղան նորեն քեզի կը դառնա և
 վրապիսությունդ դարձյալ հարցնելեն վերջը մսավա-
 ճառի մը խանութը կը մանեւ:
 — Այս վերջին անգամվան միսդ ուսկեռու բան
 չեր շիտակը:
 — Ամենեն պատվական միսեն տվի:
 — Սիսալ եւ տիկինն ըսավ, թե այս անգամվան
 միսն գեշ ու անհամ եր, կը խնդրեմ, վոր ուրիշ ան-
 գամ քիչ մը ուշադրություն ընես, յես քուկին քսան
 տարվան հաճախորդդ եմ, և չփայիր, վոր գեշ միսն ին-
 ձի տաս, վորովհատե յես կանխիկ կը վճարեմ միշտ:
 — Գալ անգամ ավելի ուշադրություն կը նեմ:
 Բարթողիմեռու աղան վերստին քեզի կը դառնա:
 — Ի՞նչ կա, ի՞նչ չկա, նայինք, չխոսիս...
 Յեվ ահա յերկար հասակով մարդ մը կելնե դեմն,
 վորուն հետ կսկսի խոսակցիլ:
 — Տակավին չմոռցա, կըսե, այս գիշերվան դրո-
 սանքը:
 — Յես ալ չմոռցա:
 — Քարեջուրն պատվական եր:
 — Ալու:
 — Ժանպոնն ալ համով եր:
 — Ընտիր:
 — Քսան բաժակ խմեցի այն գիշերը:
 — Անուշ ըլլա:

— Գալ շաբթու նորեն միանանք գիշեր մը ֆիւթե
 խանութը:
 — Միանանք: Մնաք բարով:
 — Մեզեն առաջուց պատրաստենք սակաւն:
 — Կըլլա: Մնաք բարով:
 — Բայց ոտարական չգտնվի մեջերնիս:
 — Շատ աղեկ: Մնաք բարով:
 — Մենք մեզի ըլլանք:
 — Այս: Մնաք բարով:
 — Բազմություն ըլլա նե, համ չըլլար:
 — Անանկ եւ Մնաք բարով:
 — Ծեսնվինք:
 Բարթողիմեռու աղան խոսքը ձեզի կուղղե վերըս-
 տին:
 — Ի՞նչ կընես կոր, նայինք:
 — Վոչինչ:
 — Բնավ չես յերեար, յեղբայր, անոր, ասոր կը
 հարցնեմ քեզի համար ու...
 Այս միջոցին տիկին մը կը տեսնե հանկարծ:
 — Ի՞նչպես եք տիկին, աղեկ եք:
 — Փառք Աստուծո, Բարթողիմեռու աղա, հրամանք-
 նիդ ընտո՞ր եք:
 — Սանկ, նանկ, Ընտո՞ր ըրիք դիխարեկը:
 — Վո՞ր գլխարեկը:
 — Անցյալ շաբթու գլխարկ մը կը սակարեկեյիր կոր,
 հարյուր քսանի չտվամի:
 — Խնտո՞ր ալ միտքդ կը մնա, Բարթողիմեռու աղա,
 իննըսունի առինք:
 — Աղեկ գլխարկ եր սակաւն, ձեզի շատ աղեկ վայ-
 լեց, տիկին, աղջիկ դարձաք:

- Թոհափ ես, Բարթողիմեոս աղա, աղջկությունս
մացեր եւ:
- Յես քեզի հազար աղջկի չեմ փոխեր:
- Տեր վողորմյա:
- Տունն ինտիր են, աղմկ են, աղադ ի՞նչ կընե,
առաջվան պես կերակուրն ուտելուն պիս կերթա, կը
պառկի՞:
- Ի՞նչ ընե, հոգնած հոգնած կուգա:
- Բարե ըրե:
- Շատ աղեկ:
- Տեսնվինք:
- Գլխուս վրա: Մնաք բարով:
- Յերթաք բարով:
- Բարթողիմեոս աղան խոսքը ձեզի ուղղելով՝
 - Ել, զրուցե՞նայինք:
 - Ի՞նչ զրուցեմ...
 - Առոռոռոռ, փառք տիրոջ, վոր աեսնվեցանք,
մւր եք, աղբար, մւր եք, կը հարցնե Բարթողիմեոս
աղան յոթանասուննոց մեկու մը:
 - Հոս եմ:
 - Համաձայնիցմք եետը:
 - Համաձայնելու մոտ ենք:
 - Համաձայնիցմք, համաձայնիցմք, անուշ տեղը
կալեցնք, հինգ վար, հինգ վեր, լմնցուցեք գործը:
 - Իմ միտքս ալ անանկ եւ:
 - Գործ ունիս, կուղես բաժնվիլ Բարթողիմեոս աղա-
յեն և խանոթդ յերթաւ, Բարթողիմեոս աղան բոնած ե
ձեռքեղ:
 - Ինձի հրաման, Բարթողիմեոս աղա,
 - Մեկ տեղ կերթանք հիմա, սա խոսքս լմնցնեմ,

-
- Ըսելիք ունիմ քեզի: Տահա ինտիր ես, նայինք...
 - Սանկ, նանկ, կերթանք կոր:
 - Բանի մը քաչի ես կառնես Բարթողիմեոս աղային
հետ, և ահա սրճարանի մը մեջ նստող մարդու մը
կուղզի:
 - Բարեվ, տիրացնւ:
 - Ծառ յեմ:
 - Ծառ ուրախացա, շառ ուրախացա:
 - Ծնորհակալ եմ:
 - Քեզմե աղեկը պիտի գտնալինք:
 - Վողջ յեղեք:
 - Մեզի ալ քեզի պես մեկը պետք եւ:
 - Յերախոտագեռ եմ:
 - Զեռնադրությունն յերբ պիտի ըլլա:
 - Ամիսե մը:
 - Ամբոն ի՞նչ ե, գալ շաբթու ձևոնաղբվի, լմնա,
յերթա: Անունդ պիտի փոխեմ:
 - Այս:
 - Ի՞նչ պիտի դնես:
 - Ամբակում:
 - Շատ հարմար անուն մ'ե, ծառա յեմ, տեր Ամ-
բակում:
 - Յերթաք բարով:
 - Բարթողիմեոս աղան այսպես քու ոձիքեղ ըունելով՝
քեղ կը տանի մինչև հոն, ուր պիտի յերթար, Յուր
յերթալիք տեղը հասնելուն պես՝
 - Զես խոսիր կոր, աղքար, կըսե քեզի:
 - Ի՞նչ խոսիմ:
 - Ուրիշ որ մը յերկար բարակ տեսնվինք, սանկ
խոսինք, Մնաք բարով. տեսնվինք սակայն:
 - Հ. Պարոնյան—3

- Յերթաք բարով:
- Հսկիք ունիմ քեղի:
- Շատ լավ:

Կը բարկանաս, բայց քաղաքավարությունը կարպիմ քեղի յերեսել իրեն անկրթությունն: Կերթաս, խանութդ կը բանաս և գործերդ նույն որը ձախորդ կերթան: Կը հիշեք որ մը, ուր բարկացած ըլլաք և հաջողություն ունեցած ըլլաք:

- Յես չեմ հիշեր:

Այսու ամենայնիվ Բարթողիմեոս աղան ալ կը մարսվի, անանկ անմարսելի բաներ կան, վորոնց սլատմությունն իսկ սոսկում կը պատճառե մարդուս:

Քիչ մը համ բերեցնք:

* * *

— Գամիկ աղա, այս իրիկուն կերակուրը մեկ տեղ ուտենք:

— Շնորհակալ եմ, Մարկոս աղա, բայց չեմ կրնարգար վորովհետեւ ուրիշ առւն մը հրավիրված եմ:

— Կաղաչեմ:

— Կը խնզիեմ:

— Խոսքս մի կոտրեր:

— Մի ըներ:

— Չե մի ըսեր:

— Մի ստիպեր:

— Ի՞նչ կըլլա, մեկտեղ ժամանակ կանցունենք քիչ մը:

— Աղեկ, բայց...

— Բայցս ալ ի՞նչ ե, յերթանք:

— Վորովհետեւ այսչափ կստիպես կոր, յես ալ չեմ մերժեր. յերթանք:

— Կեցցնս Գամիկ աղա, շնորհակալ եմ:

— Յես ալ շնորհակալ եմ:

Այս խոսակցությունը տեղի կունենար Բերա մեծ փողոց, գինետան մառջե:

Մարկոս աղան հրավերն ընդունել տալուն պես բարեկամին ձեռքեն բռնեց և գինետունը տարավ:

— Մասթիքմ կը խմեք,

— Վաչ:

— Անանկ ե նե, տյուզ կը գործածեք:

— Վաչ:
 — Բամ:
 — Վաչ:
 — Բաել ե՝ գոնյաք կը խմեք,
 — Վաչ:
 — Ի՞նչ կը խմեք ուրեմն:
 — Վոչինչ. չիտե՞ք, քանի մը տարի կա, վոր ւես
 ըմպելիք չեմ գործածեր:
 — Էպելիք չես գործածեր:
 — Վաչ:
 — Վոտքդ պաքնեմ:
 — Վաչ:
 — Իրավ կըսես:
 — Ինչնե սուտ խոսիմ:
 — Աստվածդ սիրես:
 — Զեմ խմել:
 — Կատակ կընես հետո:
 — Ի՞նչ հարկ կա կատակ ընելու:
 — Հիմա մասթիքա չես խմել դուն:
 — Վաչ:
 — Տյառզ:
 — Վաչ:
 — Բամ:
 — Վաչ:
 — Գոնյաք:
 — Վաչ:
 — Ինչնե կապրիս կոր ուրեմն, կը պոռա հաճա-
 խորդներն մինչ լեցնելով գավաթը:
 — Կը խմե, կը խմե, կատակ կընե կոր, կը պատաս-
 խոնե Մարկոս աղան

— Զեմ խմեր, Մարկոս աղա:
 — Ամոթ ե, աղբար, չխմել կըլմ, լսված բան ե,
 նստողները վրանուս խնդացունենք պիտի:
 — Սովորություն չունիմ, յեղբար ինչնւ կը ստիպեք:
 — Կնիկ ես, ի՞նչ ես, պե մարդ, ողին չըխմվի՞ր,
 կըսե մին:
 — Բերնին համը ի՞նչ գիտե անիկա, կը հարե վոմն:
 — Պարզ մարդ մ'հ, կըսե յերրորդ մը:
 — Ճգնավոր, կը պոռա ուրիշ մը:
 — Հա հա հա, ողի չխմեր յեղեր, վալ ապուշ, վայ,
 կը թոթովի գինեմոլ մը խնդալով:
 — Կը խնդրեմ, Գամիկ աղայ, վերջացնենք սա
 խաղը, կըսե Մարկոս աղան:
 — Ի՞նչ ընեմ:
 — Գավաթ մը միայն խմե: Մեղի շիշ մը մասթիքա
 բերեք:
 — Գավաթ մը կը խմեմ խաթերդ համար:
 — Շնորհակալ եմ. ժամանակին հարմարելու յե.
 չխմողի վրան կը խնդան հոս, թող վոր չխմելն ալ պաղ
 բան մ'հ:
 — Շատ աղեկ:
 — Հրամմեցեք:
 — Կենդանություն:
 — Անուշ:
 Գամիկ աղան կը ստիպի քանի մը գավաթ ևս
 խմել՝ գայթակղություն չպատճառելու համար հարբե-
 ցողաց մեջ:
 Ժամը տասներկութին կը մոտենա: Գամիկ աղան
 անօթի յե. ամեն յերեկո սորված ե ընթրել առ առա-
 վելն ժամը կհսին,

- Յելենք, Մարկոս աղա, յեթե կը հաճիք, կըսե
ֆամիկ աղան:
- Դեռ կանուխ ե:
- Տասներկուքին մոտեցավ:
- Առածը չի տես. միսաֆիր եվ սահիպինին գու-
ղուսուտ տուր¹⁾:
- Գիտեմ, բայց...
- Իմ կը տաս չլմնցավ դեռ: Ճիշտ յերկու շեշ-
պիտի ըլլա:
- Շատ աղեկ:
- Մարկոս աղան կը շարունակե յուր կը տան ինվ
ֆամիկ աղան յուր անոթությունը:
- Ժամանել քանին պիտի նստինք հոս, Մար-
կոս աղա:
- Ինչժև կաճապարես կոր, բարեկամ, նստինք, խո-
սինք, տուն յերթանք ինչ ընէնք հիմա. այս ատեն
կերակուր կուտվի, անսառնները կուտեն հիմա...
ինչ... անոթի իս դուն:
- Զե, չե, բնավ չե:
- Յեթե անոթի ես, յերթանք:
- Զե, այս ատեն կերակուր կուտվի:
- Շիտակ զրուցե, կաղաչեմ. իս կուզեմ, վոր ել-
լինմիշ ըլլա դուն, ֆերահլանմիշ ըլլաս... չե նե, ինչ
հասկցա... յես կուզեմ, վոր ելուրս քեյֆլենմիշ ըլլա...
լերթանք, թե վոր անոթի յես...
- Զե, չե, բնավ չե:
- Կը կըկնեմ, յեթե անոթի յես, յերթանք:

1) Միսաֆիր եվ սահիպինին գուղուսուտ տուր տաճկական
տապակածք ե, նշանակում ե՝ հյուրը տանտիրոջ դասն եւ

- Զե, այս ատեն կերակուր կուտվի:
- Կը կըկնեմ՝ շիտակ զրուցե, կաղաչեմ. իս կուզեմ,
վոր ելլինմիշ ըլլաս դուն, ֆերահլանմիշ ըլլաս, չե նե,
ինչ հասկցա... յես կուզեմ, վոր ելուրս քեյֆլենմիշ ըլլա,
յերթանք, թե վոր անոթի յես:
- Անոթի չեմ:
- Խոսե ուրեմն, բան մը պատմե, արձանի պես
ինչու մունջ կեցեր ես: Կենդանություն:
- Անուշ անմահություն:
- Հատ մ'ալ քեզի տամ:
- Զե, գլուխս կը դառնա կոր:
- Խոսե նայիմ: Կենդանություն:
- Անուշ:
- Գործ մ'ունելիր նե, ինչ ըրիր ան:
- Վար գործը:
- Վորն ըլլա նե, ըլլա, գործ մ'ըլլա տե, մերամ
ժամանակ անցունել չե՞ մի:
- Անանկ ե լա:
- Չխոսիս, աղբար. գիշերներն ինչպես ժամանակ
կանցունեք կոր, ցերեկներն ինչ կընեք կոր, առառ-
ները ինչով կը զրազիք կոր:
- (Մեկուսի) Անոթութենե մարելիք կուզա
կոր վրաս:
- Ինչպես լեղավ նայինք ալդ գործը:
- Մելքոնին գործը:
- Հա, Մելքոնին գործը. (մեկուսի) պարե
գիտնամյ...
- Մելքոնը հանցավոր եր այդ գործին մեջ. (մե-
կուսի) ժամ մ'առաջ յերթալինք ու սեղան նստելինք:
- Իրավ կըսես, վայ անպիտան վար, վար, Մելքո-

- նեն չելի հուսար. (մեկուսի) — պարե ճռնշնմմ:
 — Զար տղա յե:
 — Ան զիտմն, պատմի, նայինք:
 — Յերկար և պատմությունը (Մեկուսի) Գալլի
մը պես անոթի յեմ:
 — Թող տրկար ըլլա, ատմա (Մեկուսի) Սըլիկա
քիչ մը խոսիլ տամ, վոր բացվի. կը նեղանա կոր
զագալը մարդը:
 — Հիմա չեմ կընար պատմել (Մեկուսի) Անոթի
փորանց:
 — Կենդանություն անանկ ենե:
 — Անուշ, ժամը մեկ ե:
 — Շատ աղեկ, կերթանք, Սա հաշիվս մաքրեմ:
 Մարկոս աղան հաշիվը մաքրելու կը զբաղի. Գամիկ
աղան ինքզինքը գինետունեն դուրս կը նետե և փո-
ղոցին մեջ կսպասե Մարկոս աղային, վոր վերջին գա-
վաթները կը խմե մի ըստ միոջեն:
 Գամիկ աղան քառորդի մը շափ կսպասե փողոցին
մեջ և հետո գինետան սելին վրա կենե ու կը կանչե
Մարկոս աղան:
 — Մարկոս աղա, ուշ մնացինք:
 — Կուգամ կոր:
- Գամիկ աղան քառորդ մ'ալ կսպասե. համբերությունը
հատնելու վրա յե, կուզե մեկնիլ, բայց քաղաքավա-
րությունը չը թողուր, Աւստի նորեն կը կանչե.
 — Մարկոս աղա, Մարկոս աղա, յերթանք:
 — Հիմա:
 Գինովներուն հիման առ նվազն քառորդ ժամ ե,
 — Մարկոս աղա, յերկար ըրիք:
 — Յեկա,

- Գինովներուն յեկան ալիտի գամ ե:
 — Մարկաս աղա:
 — Կաղաշեմ, քիչ մը... հերս լեկուր, մեկտեղ լելենք:
 — Զեմ զար:
 — Յեկուր:
 — Վաչ:
 — Կը բարկանամ:
 — Բայց պիտի յերթանք:
 — Այս, Ահա յեկա, կարծեմ քեղի սպասցուցի քիչ մը:
 — Վնաս չունի:
 — Քեղի տեսա, չիտես, վորչափ գոհ յեղա, այս
իրեկուն քեյփս քեզի պարտական եմ. վոտքի վրա հատ
մը կը տնկես:
 — Զե, յերթանք:
 — Շատ աղեկ, յերթանք: Կենդանություն:
 — Անուշ, Յերթանք:
 — Ալո, յերթանք:
 Յերկու բարեկամները ճամբա կենեն և քանի մը
փողոց դառնալի հետո տուն կը հասնին:
 — Վալ, Գամիկ աղա, հրամմեցեք, ըսելով հյուրը
վեր կը հրամցնե Մարկոս աղային տիկինն, վոր իւն-
դումերես և քիչ մ'ալ—սիրտը չվիրավորվի—շատա-
խոս ե:
 — Գամիկ աղան հյուր բերի, տիկինն:
 — Շատ աղեկ ըրիք, վայ Գամիկ աղա, վալ:
 — Բարի, յեկաք, կըսեն Մարկոս աղային աղջիկ-
ները Գամիկ աղային ու անոր ձեռքը կը թոթվեն:
 Գամիկ աղան աչքերով սեղան կը փնտեն:
 — Վալ, Գամիկ աղա, վայ, և, տահա ինտեր ես,
նայինք:

- Փառք աստուծո, տիկին, դուք ինտեր եք;
- Զեզի տեսանք, ավելի աղել յեղանք, վայ, Գամիկ աղա, վայ, դուն ալ ոս պիտի գաս յեղեր:
- Սա բախըլի թեփսին շոկեցեք, կը հրաժայի Մարկոս աղան:
- Վայ, Գամիկ աղա, վայ, բնավ մտքես չեր անցներ, վոր Գամիկ աղան մեղի հյուր պիտի գա ալս դիշեր. վոր հովը վչեց ասանկ, վայ, Գամիկ աղա, վայ, ել ինտոր եք, նայինք, ինչ կընեք կոր, շիտակը հաւվատալիքս չգար կոր, վոր դուք հոս եք, վայ, Գամիկ աղա, վայ... եյ, խոսե նալինք... մեղի չաւսնելին ի վեր ինչպես ժամանակ կանցունեք կոր. աֆերիմ, Մարկոս աղան, շատ աղել ըրեր ես, վոր Գամիկ աղան ըրեր ես, վայ, Գամիկ աղա, վայ: Գամիկ աղային ողի մը տվեք. շատ բան, շատ բան, վայ Գամիկ աղա, վայ, մեղի տեսնալ պիտի գաս յեղեր աս գիշեր, վորո՞ւ մտքեն կանցներ, աֆերիմ, Գամիկ աղաս... ողի մը տվեք, աղջիկներ:
- Ողի չեմ խմեր:
- Հատ մը խմե, կըսե Մարկոս աղան:
- Զե, Մարկոս աղա:
- Վայ, Գամիկ աղա, վայ... տահա ինտոր եք, նայինք, չոլուխ չոճուխը ինչպես ե...
- Աղեկ են:
- Աղեկ ըլլան, վայ, Գամիկ աղա, վայ:
- Գամիկ աղա, կըսե Մարկոս աղան, դուն մեր թեքլիքսիդ հյուրն ես. մեղի մի նալիր, յեթե անոթի լես, ըսե, ուտենք, մեղի համար հոդ չե:
- Քա ձանըմ, կեցի հելե, քիչ մը յերեսը տեսնանք, ան ալ հանդստանա քիչ մը, ու վերջը կուտենք, աստծո

տվածեն հարկավ բան մը պիտի գտնինք ուտելու, անոթի չպիտի մնանք լա. ամա ինչ ընենք, Գամիկ աղան կերակուրներուս չպիտի հավախի յեղեր, միսաֆիր ումտուղունու յեմեղ, պուղուղունու յեկը¹⁾, հա հա հա, անանկ չե մի. ամա, Գամիկ աղա, շիտակը զրոցի, դուն շիտակը խոսող մարդ մ'ես, հա հա հա, վայ, Գամիկ աղա, վայ, Ե, վայ, Գամիկ աղա, վայ, Գամիկ աղան յապանձի չե, քի վախնամ, վոր յերթա, ուրիշ տուներ մեր կերակուրը ավրե. Գամիկ աղան թեքլիքսիդ ե, այսոր չպիտի ճանչնանք դիրար լա. վոտքդ պաքնեմ, Գամիկ աղա, իրավունք չունիմ մի, ամտ... ասանկ հեե, Գամիկ աղա, ալս գիշեր հոս պիտի գաս յեղեր. բարի յեկար, հազար բարի, ամեն որ հրամմե, մեր դուռը բաց ե, Ե, տահա ինտոր եք, նայինք, ինչ կա, ինչ չիկա, նայինք, դրացիներնիդ ինչպես են, Յեպրոս հանըմը ինչպես ե, Մաքրուհի հանըմը նշանվեցավ մի... Թորոս աղան գործ մը գտավ մի... հավերը մորթեցիք մի, վոր մեկը հարցնեմ, չիտեմ քի. քեղի տեսա նե, կարծես քի գանձ մը գտա, վայ, Գամիկ աղա, վայ, ալս գիշեր պիտի գաս յեղեր. ինչնւ համար ողի չես խմեր կոր. Գամիկ աղա... մի խմեր, իս զոր չեմ ըներ, ինտոր կուզես նե, անանկ ըրե, քեֆդ նայե, սանկ հանդիսա նստե, կաղաչեմ, կոնակդ բարձին տուր... կուզես նե, հենվե, ենթարի մը բերեն, բապուչ բերեն... սանանկ հա, վայ, Գամիկ աղա, վայ, են, ապրիս, վող մնաս:

- Կնիկ, թող չես տար, վոր քիչ մ' ալ յես խոսիմ:
- Տեր ողորմյա, բերանդ ով բռնած ե... վայ, Գա...
- 1) Միսաֆիր ումտուղունու յեմեղ, պուղուղունու յեյեր (տաճկ) հյուրը յուր ակնկալածը չի ուտում, դաշճն ե ուտում

միկ աղա, վայ, շատոնց ե տեսած չունիմ տե. ուրա. խություննես ինչ ընկելիքս չեմ գիտեր կոր... անոթի լես նե, նստինք սեղան։

— Գեղ չըլլար։

Գամիկ աղան յերկար շունչ մը կառնե,

— Աղջիկներ, պրիզուան կըակի վրա դրեք, ձուկն ալ տապէկեցնեք...

— Ոչ, ոհ, ոհ, ըսավ ինքն իրեն Գամիկ աղան, ասկից վերջը կերակուր պիտի յեփի, ու պիտի ուտենք։

— Վայ, Գամիկ աղա, վայ, մինչև վոր կերակուրը պատրաստվի, կընաք քանի մը գավաթ ողի խմել. ախոր ժակնիդ կը բացվի։

— Շնորհակալ եմ, Մարկոս աղան թող խմե։

— Պրիզուան հիմա կըլլաւ: Հիչ չպիտի մոռնամ ալս գիշերվանը. վայ, Գամիկ աղա, վայ։

Սեղանի զանգակը կը զարնե։

Կը ցատկե Գամիկ աղան և ճաշի սենյակը կիջնե։ Զմոռնանք հոս հիշել, թե հարբուխը Գամիկ աղային ակրաներուն յերեք քառորդը հափշտակած ե։

— Պրիզուային սա կտորն առեք, Գամիկ աղա, կըսե Մարկոս աղան։

Գամիկ աղան կառնե միսն և սպառագինվելով դանակով ու պատառաքաղով, յուր բոլոր ուժով կաշխատի հոշոտել միսն։ Դանակը չկտրեր. առկաներն, վոր արդեն կորուսած են իրենց մեծամասնությունն, կարողությունն չունին կտրելու. Գամիկ աղային անոթության վրա բարկությունն ալ կը բարդվի, և սական քաղաքավարությունը կը պահանջի, վոր մսի խոշոր կտօրներն առանց կոտորակելու. կլի և ցամաք հացով փորը կշտացնելու աշխատի։

— Գամիկ աղաս, պրիզուային չե՞ք ախորժիր, կը հարցնե տիկինը։

— Շատ կախորժիմ, կուտեմ կոր, կերա, շնորհակալ եմ. պիտի ուտեմ, հոգ մի՛ ընեք։

— Գինի հրամմեցնք։

— Կը խմեմ, շնորհակալ եմ։

Գինին քացախ ե, և քաղաքավարությունը թող չտար, վոր հուր մը տան տիրոջը հայտնե ասանկ ճշմարտություններ։ Գամիկ աղան չուզեր խմել. տիկինը կստիպե։

— Իմ խաթերս համար սա բաժակը պիտի խմես։ Գամիկ աղան կստիպվի խմելու։

— Բաժակ կառաջարկեմ Գամիկ աղային կենդանությանը։

Գամիկ աղան կստիպվի խմել յերկրորդ բաժակն ալ։

Մարգս վոչ միայն յուր թերություններն, այլ յուր սեղանին թերություններն ալ չտեսներ յեղեր։

Գամիկ աղան անոթի փորանց քացախ կը խմե, մինչև վոր վերջապես ձուկը կը բերվի սեղան։ Դանակներն, պատառաքաղներն ու պնակները կը փոխվին, Գամիկ աղան պատառաքաղով ու դանակով ձուկ կերած չե կյանքին մեջ, մատները կը գործածե անոնց տեղ։ Բայց ախոր քաղաքավարությունը պարա կը դնե վրան՝ տան տիրոջը սովորության սորվիլ Յե՞րբ պիտի սորվի և յերբ պիտի ուտե։

— Զեք ուտեր կոր, Գամիկ աղա, կըսե Մարկոս աղան, կարծեմ չախորժեցաք մեր կերակուրներն։

— Քավ լիցի։ Կուտեմ կոր։

— Զուկը գեղ չե յեղեր։

— Աղեկ ե։

— Վալ, Գամիկ աղա, վար, Միայն թե փուշը քեչ
մը շատ ե, ըստկելը դժվար ե:
— Ինձի համար բան մը չե:
— Մի քաշվեք, կաղաչեմ:
— Հոգ մի ընեք:
— Իմ կենդանությանս բաժակ մը չեք խմեր:
— Ինչպես չխմե, քառասուն տարին անգամ մը մեզի
կերակուրի լեկավ տե... վալ, Գամիկ աղա, վալ, իրավ
գոր շատ գոհ յեղա ձեր գալին:

Գամիկ աղան լերորդ անգամ կը կլեք քացախը:

Յերրորդ կերակուրը կը բերվի. սերկելով միս:
Գամիկ աղան բնավ չախորժիր այդ կերակուրեն, բայց
ուտել ձեացնելով պանիր ու հացով կը կրտանա:

Կերակուրեն հետո խահվե կը բերվի, և Մարկոս ա-
ղան կսկսի, ոգնությամբ տիկնոջն, չորս ժամ շատախո-
սությամբ գլուխն ուռեցնել իր հլուրին, վոր կսկսի
մրափել նստած տեղը:

Պառկելու համար սենյակ մը ցույց կը տրվի Գա-
միկ աղալին: Հազիվ կը մտնե անկողին, մլուկները
վրան կը հարձակին և կը ստիպեն զինքն յելնել, ճրագ
վառել և տեսնել, թե մլուկներն վոչ թե միայն անկող-
նուն մեջ բանակատեղի հաստատած են, այլ պատե-
րուն վրա ևս կելնեն ու կիշնեն:

Գամիկ աղան մինչև առտու կը տքնե: Ի՞նչպես:
Ամենուս հայտնի յե, մարդ չկա, վոր կենաց մեջ գոնե
անգամ մը մլուկներու բանակին մեջ չինա:

Հետեւալ առավոտ Մարկոս աղան և տիկինն կը
հարցնելին Գամիկ աղալին.

— Ի՞նչպես անցուցիք գիշերը:
— Շատ հանդիսա:

— Մլուկ կմը:
— Զկար:
— Ի՞նչ քաշեցի յես, մինչե վոր մլուկները սատ-
կեցուցի նե, կը պատասխաներ տիկինը:
— Մնաք բարով, ձեզի նեղություն ավի:
— Աս ի՞նչ խոսք ե, այս գիշեր ալ հրամմեցնք,
գարձյալ հրամմեցնք, Գամիկ աղա:
— Գլխուս վրա:
— Տունը բարե ըրեք:
— Լավ: Մնաք բարով:
— Յերթաք բարով:
— Յերթաք բարով:
— Վայ, Գամիկ աղա, վայ, — ըսավ տիկինը վերջին
անգամ և զուրը գոցելով ներս մտավ երկանը հետ:
Գալով Գամիկ աղալին՝ հսկայաքայլ կերթաք
մռմռալով.
— «Գիտեմ յես, մարդու տուն մնալն ասանկ ե,
մարդս լուր տունին մեջ միայն կրնա հանգիստ ըլլալ-
զորով ողի խմե, մինչև ժամը լերեք անոթի փորանց
քացախ խմե, բերնիդ հարմար կերակուր մի գտներ,
ցամաք հացով կշտացիր, պարապ խոսքեր մտիկ ըրե,
այնուհետեւ մինչև առտու քնատ մնացիր, ինչու հա-
մար. քաղաքավարության համար Այս քաղաքավարու-
թյան տակեն պարզապես եղություն կելլե կոր: Իրենց
ըսկելու ելի, յես տամներկուքին կերակուրս կուտեմ,
ողի չեմ խմեր, շատախսոսութենե կը ձանձրանամ, քացախ
խմելու սովորություն չունիմ, ձեր դանակները չեն
կտրեր կոր, միսաֆիրի համար անանկ փշոտ ձուկ չեն
առներ, սերկելով միսն ուտվելու կերակուր չե, ձեր

սենյակը լեփ լեցուն մլուկ ե, չեք ամշնար դուք, մինչեւ
առառու չկրցի քնանալ, մեղք չե՞ ինծի... շիտակը ձեզի
չվալլեցուցի, վոր հյուր մ'ասնակ տանջեք, ավանակի
տեղ դրիք զիս... կամ մարդու տեղ չդրիք զիս... ձեր
ըրածը անկրթություն ե, այն, այն, և մեծ անկրթու-
թյուն ե..., կամ այսպիս վարվելու չեցին ճետս... կամ
բացե ի բաց զրուցելու եյի, թե ձեր ըրածը պարզապես
եշություն ե...»:

Վայ, Գամիկ աղա, վայ...

* * *

— Մելիտոս աղա, ամոթ լեղավ, գիշեր մը չկրցինք
եֆենտիին լերթալ. Այս գիշեր լերթանք, քանի մը
ժամ կը նստինք, կը դառնանք:

— Գիշեր մը կերթանք, կնիկ:

Հետեւալ լերեկոյին Մելիտոս աղան տուն կը դառ-
նա և ձեթի հաղարնոց շիշը, զոր Պոլիս¹⁾ լեցուցած
եր, կնոջ կուտա:

— Մելիտոս աղա, ամոթ լեղավ, այս գիշեր լերթա-
յինք եֆենտիին:

— Կնիկ, հոգնած եմ, այնքան մտմտուք ունիմ,
վոր զրունելու, ժամանակ անցնելու ախորժակ չու-
նիմ:

Տերբորդ լերեկոյին Մելիտոս աղան տուն կը դառնա:

— Մելիտոս աղա, ալ մեծ ամոթ լեղավ, այս գի-
շեր անպատճառ յերթալու լենք եֆենտիին. կտոր մը
կը նստինք, կելլենք, կուգանք,

— Այս գիշեր թող մնա:

Զորբորդ լերեկոյին.

— Մելիտոս աղա, այս գիշեր ալ չերթանք նե, ալ
բարեր կտրելու յե անոնց ճետ:

— Կերթանք գիշեր մը, կնիկ, կերթանք, հոգնած
իեկա, թող տուր, վոր շունչ առնեմ:

— Կուղես՝ գնա, կուզես՝ մի՛ յերթար, մել մ'ալ
բերանս չեմ բանար:

¹⁾ Պոլիս բառը ունի մասնավոր, հատուկ նշանակություն. այս-
պիս կոչվում ե ներկայումս բյուզանդիոնի բուն մասորդը, վոր
այժմյան Պոլսի մը փոքրիկ մասն ե կազմում:

Յեվ յեղեվ յերեկո հինգերորդ:
 — Մելիտոս աղա:
 — Ի՞նչ կա, ի՞նչ կա, ի՞նչ կա:
 — Ալ այս գիշեր պիտի յերթանք, ալնպես չե՞տ
 — Յերթանք, յերթանք, վոր խալսիմ ձեռքեդ: Յերթանք, ամեն գիշեր յերթանք, լմբնցա նե... ե՞թ...
 — Կերակուրնիս ուտենք...
 — Յերթանք:
 — Յենհնք...
 — Յերթանք ըսկինք ա':
 — Յերթանք...
 — Քանի անգամ կըսեն:
 — Քիչ մը նստինք...
 — Նստինք:
 — Յելինք, դանք:
 — Յելինք, գանք. ուրիշ...
 — Կերակուրնիս ուտենք, շտկվինք, շտկուտվինք,
 գուն ալ շապիկդ փոխե, հֆենտիին տունը մեծ մարդեր
 կուգան, խաղք չըլլանք:
 — Կերակուրնիս ուտենք, շտկվինք, շտկուտվինք,
 լես ալ շապիկս փոխեմ, հֆենտիին տունը մեծ մարդեր
 կուգան, խաղք չըլլանք... լմնցալի:
 — Գեշ կը խոսիմ կոր:
 — Գեշ չես խոսիր կոր:
 — Քեզի համար կըսեմ կոր:
 — Ինձի համար կըսես կոր, լմնցալը:
 — Սա բարկանալու բան մը չեմ տեսներ կոր յես.
 այս գիշեր յերթանք, ըսի, այս գիշեր յերթանք ըսկը
 հանցանք ե նե, մեղա:

— Բարկանալու բան չկա, իրավունք ունիս... լմնցը-
 նենք ալ, այս գիշեր պիտի յերթանք:
 — Կը նայիմ, վոր պարապ տեղը կը բարկանաս:
 — Կը բարկանամ, Ամոն իրիկուն ե աս, յերթանք,
 այս գիշեր յերթանք, յերթանք այս գիշեր, այս գիշեր
 չերթանք նե, չըլլար... զլուխս ուռեցավ, հատա լմնցա
 նե... քանի որվան կըսնքս մնաց... յերթատատատանք...
 կը լմնցնեն ալ:
 Կինը կը պատրաստե սեղանը, կը բերե կերակուր-
 ները, կուտեն, կելնեն սեղանեն, այցելութլան հա-
 գուստները կը հագնին և ճամբա կելնեն:
 Եֆենտիին, վորու տունը կերթալին Մելիտոս աղան
 ու կինն, Մելիտոս աղային կնոջ ազգականն ե: Ընդ-
 հանրապես կանալք, վոր հարուստ ազգական և աղ-
 քատ ամուսին ունին, իրենց հարուստ ազգականին
 վրայոք կը խոսին իրենց ամուսնուն շաբաթը առնվազն
 չորս անգամ յերկու ժամ: Յեվ ի՞նչ խոսեն: Ավասիկ.
 «Եֆենտիին գորգը ի՞նչ աղվոր ե, սրան անանկ
 զարդարած ե, վոր դրախտ կը նմանի. ինչժե քուկին
 բանթալոնիդ ձեն աղեկ չե, եֆենտիին բանթալոնները
 միշտ ձեալվոր են... եֆենտիին հիսուն չեքի փատ ե ա-
 ռեր առջի որը, եֆենտիին վոսկիլի շղթան վորչափ հաստ
 ու յերկայն ե... եֆենտիին խոհարար փոխեր ե... գաղ-
 ղիացի խոհարարունի մը պիտի առնե յեղեր... եֆեն-
 տիին ամեն որ կառքով կերթա գործին զլուխը... եֆեն-
 տիին... մեր եֆենտիին շաբաթը յերեք անգամ կ'ածիլվի.
 տուն մ'ալ պիտի զնե յեղեր... եֆենտիին սեղանին
 վրա ամեն իրիկուն ձուկ պիտի ըլլա... եֆենտիին առ-
 անց ձուկի չըլլար... եֆենտիին կինը կը ո՞ն շըր-
 ջազգեստ մը հագած եր, վոր կը վառեր կոր կարծես... ե-

ֆենտիին ձին անձնական տկարություն ունի յեղեք քիչ մը... (բանավոր պատճառ մը, վորով ազգակին յերեսփոխան մը կընա բացակա գտնվիլ ժողովեն):

Այս կանայք կը պնդեն նաև, վոր գոնե ամիսը մեկ անդամ իրենց ամուսինները տանին իրենց հարուստ ազգականին տունը: Կերեի թե կանալք փառավորվիլ, իրենց ամուսիններուն վրա ազնվականության կամ կրթության առավելություն մ'ունենալ կը կարծեն՝ իրենց հարուստ ազգականին տունը տանելով իրենց ամուսիններն և ըսելով լրելլայն:

— Տես, յես հարուստ ազգական ունիմ, դուն ի՞նչ ունիս, զիս հանդիմանելու մարդ ես, լաթերդ լվալու, կերակուր յեփելու, տախտակ շփելու կնի՞կ եմ յես, ճանչիր արժեքս և ըստ այնմ զարվե հետս: Յեվ յեթե նորեն զիս տանջես, դիտցած յեղիր, վոր ամեն ըան կը պատմեմ եֆենտիին և պատժիլ կուտամ զքեզ:

Կերեի դարձալ, թե Մելիտոս աղան ալ այս՝ լուսթյամբ արտասանվելիք խոսքերը լուսթյամբ չըլսելու համար եր, վոր չեր ուզեր յերթալ եֆենտիին տունը, ըաց խոսքը, վորպես կըսեն, կարճ կապելու համար հավանած եր յերթալու և ճամբա յելած եր:

Հետեինք ուրեմն իրենց:

— Գիտցած ըլլաս, վոր շատ չեմ նստիր, ըսավ Մելիտոս աղան կնոջն, յերբ մոտեցան եֆենտիին տունը: Բայիսեցին և բացվեցավ:

— Հրամմեցէք, տիկին, ըսավ հարգանոք տանն ըսպասավորն և տիկնող թեր մտնելով՝ սանդուխեն վեր հանեց:

Մելիտոս աղան սանդուխին, առաջին աստիճանին վրա նստեցավ և հանեց լուր վոտքի ամանները, վոր

քանի մի կարկտանք ունելին: Հետո վեր լելավ՝ զգացված սպասավորի կողմեն իրեն յեղած պարզ ընդունելության և մտավ ընկունելության սենյակը:

Եփենտին քանի մի բարեկամաց հետ թուղթ կը խաղար: Մելիտոս աղային տիկինն և ֆենտիին տիկնոջը քովը նստած եր, Վահրամն ալ, եփենտիին տղան, հազով յերկու տարեկան, սենյակին մեջ կը պատըտեր վանկեր շինելով:

Յերբ Մելիտոս աղան ներս մտավ, եփենտիին կինը գլուխը կես սանթիմեթրո ծռեց, վորպես թե հյուրին բարեկամներն համար, եփենտիին չտեսնել կեղծեց Մելիտոս աղան:

Մելիտոս աղան քիչ մ'ալ զգացվեցավ և մոմոաց քթին տակեն. «յերթանք, յերթանք, ահա յեկանք»:

Եփենտիին բարեկամներն քաջալերված անջուշտ այս պաղութենեն, զոր եփենտիին ցույց տվավ Մելիտոս աղային, սկսան իրենց մեջ խոսիլ:

— Ի՞նչ անկիրթ մարդ եւ:

— Ո՞վ ե այդ վայրենին:

— Կոչիկները վարը ձգեր եւ:

— Անասուն կը նմանի:

Մելիտոս աղան կիմանա այս խոսակցությունն, բայց քաղաքավարությունը կը պահանջե, վոր կլեա այդ ծանր խոսքերն, վորովհետեւ ցած ձախով կարտասանվին անոնք. ըստ քաղաքավարության վոչ վոք իրավունք ունի բողոքել իրեն ուղղված այն հայոցությանց զեմ, վորք առաջին ձայնով չեն յերգվիր:

Թղթի խաղը կը շարունակվի. եփենտիին մերթ ընդ մերթ հետեւյալ հարցումները կուղղի Մելիտոս աղային տիկնոջ.

— Ի՞նչպես եք, նայինք:
— Աս ուր ե, չեք լիրեար կոր:
— Հանգիստ ես:

Մելիտոս աղան, վոր բազմոցի վարի կողմը նստած եր և ամեն պատրաստություն տեսած եր կանխալ եֆենտիին կողմե գալիք հարցմանց քաղաքավարությամբ և ակնածությամբ պատասխանելու համար, ակնուներ եֆենտիին բարեին գալատյան:

Մելիտոս աղալին կինս յերբեմն յերբեմն ակնարկություն կըներ երկանն, ակնարկություն, վոր կը թարգմանվեր այսպես:

— Ի՞նչու միս-մինակ նստեր ես, քովերնիս չգմս.

Յեվ Մելիտոս աղան այս ակնարկության կը պատասխաներ այնպիսի նշաններով, վոր կը նշանակեյին, գետնին տակը անցնիս, վոր բանությամբ հոս բեր դիս:

Յել ահա Վահրամն բառեր թոթովելով Մելիտոս աղային կը մոտենա, Մելիտոս աղալին գիրկը լենել կուզե, Մելիտոս աղան կը գրկե Վահրամն և կակսի տանտանմա տանտան տանտան տանի:

Հայրական սեր... Ի՞նչպես հայրերու կամքը կը ջախջախես:

Եֆենտին Մելիտոս աղալին գրկացը մեջ Վահրամին խաղան տեսնելով՝

— Ո՞ոռ, ըսավ, Մելիտոս աղան ալ հոս ե յեղեր, յերբ յեկալ, չիմացա գալը, ինչու մեկ ծակը քաշվեր նստեր ես, չմոտենամ:

— Յես ալ հոս եմ, տիկնոջս հետ յեկա, գալս չիմացաք, հոս հանգիստ եմ, կը պատասխանե Մելիտոս աղան:

— Իրավ, ինչու մինակ նստեր եք, մեր քովը յեկեք, նստեցեք, կըսեն եփենտիին բարեկամներն, վորքիչ մ'առաջ անկիրթ և վայրենի պատվանուններով պատված ելին Մելիտոս աղան:

Վահրամը Մելիտոս աղալին պէսերը կը քաշե, մատն անոր աչքին կը խոթե և կուզե, վոր աանտանա ընեզինքը:

Մելիտոս աղան կը հոգնի, բայց չի կընար գետինը ձգեւ վորովհետև թող չեն տար:

Ի՞նչպիս:

— Շատ բան, շատ բան, Վահրամը վորքան կը սիրե կոր Մելիտոս աղան, չնայիս, անկե բաժնվիւ չուզեր կոր, կըսե Վահրամին մայրը:

— Բոլոր տղաքները կը սիրեն Մելիտոս աղան, կը պատասխանե Մելիտոս աղալին կինը:

— Զանձրություն տվալ քեզի, գետինը ձգե, Մելիտոս աղա, կավելցնե Վահրամի մայրը:

— Զանձրություն չուր ինձի, կը պատասխանե Մելիտոս աղան, վոր թևերն վերցնելու կարողություն չունի:

— Տեր վողորմյա, ինչու ձանձրություն տա... տղու մը ձանձրությունն ինչ պիտի ըլլա, արդեն Մելիտոս աղան խենդ կըլլա տղայոց համար:

— Յես խենդ կըլլամ տղայոց համար, կը կրկնե Մելիտոս աղան հեալով:

Վահրամը ցատկել ցատկուտել կուզե:

Մելիտոս աղան կը գոհացնե Վահրամին կամքը:

— Հոգնեցար, Մելիտոս աղա, վար ձգե, կըսե նորեն Վահրամին մայրը:

— Զանձրությա, հոգ մի ընեք, տիկին, կը պատաս-

խանե Մելիտոս աղան շնչասպառ և մեկուսի կանիծն
ժամն, հորում եֆենտիին տունն վոտք կոխեց:

Խահվե կը բերեն:

Մելիտոս աղա առիթեն ոգուտ քաղելով Վահրամը
քովը կը նստեցնե:

Վահրամ կսկսի լալ բարձրաձայն: Մելիտոս աղան
կ'ստիպվի նորեն դրկել Վահրամն և խահվեն այնպես
խմել:

Վահրամ հանգիստ չկայնիր, կը ջարժի և խահվեն
կը թափվի Մելիտոս աղային շապիկին վրա:

— Վահրամ, Վահրամ, կըսե մայրն, ատ թնչ ըրիր:

— Վնաս չունի, վնաս չունի, կը պատասխանե Մելիտոս աղան՝ ի ներքուստ ակռաները կրճտելով:

Միջադեպը կը փակվի:

Վահրամ կուզե Մելիտոս աղային կոնակն յելնել
կը հնազանդի Մելիտոս աղա:

Վահրամ կը կամի, վոր Մելիտոս աղան վոաք յելնել:
կը հոժարի Մելիտոս աղան:

Վահրամ կը փափաքի, վոր Մելիտոս աղան քալի:
Մելիտոս աղան կը համառի:

Վահրամ կսկսի պոռալ:
— Սըվոր ձայնը կտրեցեք, կը պոռա եֆենտին:

Յեկ Մելիտոս աղան կսկսի քալել:
— Շատ բան, շատ բան, չթողուց մարդն, վոր քիչ

մը նստի, կը ճոմուա եֆենտին:

— Արդեն Մելիտոս աղան ալ կախորժի կոր տղաք-
ներեն, եֆենտի, կըսե Վահրամին մայրը:

— Կախորժի, կոր, բայց հոգնեցալ:
— Ալսափ ալ խենդենալ տղալոց համար, զարմա-

նալի՛ բան, կըսե ինքն իրեն եֆենտիին տիկինը: Վահ-
րամը քեզի տանք, առ, գնա:

կը լա կը պատասխանե Մելիտոս աղան, ճանա-
պարհորդելով սենյակին մեջ:

— Հոգնեցար նե, ձգե, Մելիտոս աղա:

— Վոչ: (Մեկուսի) Աներեսներ, չե՞ք հասկնար կոր,
թե հոգնած եմ:

— Աղեկ, լիս ըլլայի նե, թեերս կը բրդելին... Մե-
լիտոս աղան ուժով ե յեղեր, շիտակը կը զարմանամ կոր:

Մելիտոս աղան, վորուն ինչպիս ըսինք, ուսերուն
վրա բազմած եր Վահրամ, վորոտման ձայներ կը լսե:
Կարեռորություն չտար, վորովհետեւ քաղաքավարության
հակառակ ե ամեն բան լսելը: Թիշ մը յիտքը ծոծրա-
կին վրա տաք տաք անձրեւ գալը կզգա: Բարկութենե
կը կատուի, դուրս կը տանի բեռը և սպասուհվուն կը
հանձնե:

Վահրամ աշխարհ տակնուվրա կընե, կը պոռա, կը
կանչե կուլա: Սպասուհին իր պարտքը կը կատարե՝
հարկ լսելած լաթալին փոփոխություններ մուծանելով
Վահրամին լաթերուն մեջ: Վահրամ բարկացած ե սա-
կայն, քը հ կըսե Մելիտոս աղային, կապտակե զայն
պղտիկ թաթեկներովը. Մելիտոս աղան թող չտար-
սպասավորները կը հրավիրեն Մելիտոս աղան քանի
մը ապտակ առնուլ, վորպեսզի տղան լոե, յեթե վոչ,
կըսեն, եֆենտին տղուն ձայնը առնելուն պես կը սրդողի:

Վահրամ կապտակե Մելիտոս աղան և կուզե, վոր
խոհարարն ալ քանի մապտակ հանե Մելիտոս աղային
Յեկ խոհարարը կստիպվի թեթե կերպով ապտակել Մե-
լիտոս աղան: Բայց վերջապիս խոհարարի ապտակն
վորքան ալ թեթե ըլլա, կերկի, թե ծանր յեկած ե Մե-

լիտոս աղաւին, վոր քանի մ'ապտակ առնելեն յետքը
ըսավ.

— Առ ինչ ե, կը ցավցնես կոր:

— Տղա յես, ապտակ կըսեն անոր: Տղան լոեցնե-
լու համար սանկ յերեսդ կը քերիմ կոր: Թող տուր,
աստվածդ սիրես. քանի մը անդամ ալ զարնեմ, վոր
լու սա չարաձձին.

— Տիկինին իմաց տվիք, յես կերթամ կոր:

Դեռ կանուխ ե, այս ատեն կերթվի:

Մելիտոս աղաւին համբերությունը կը հատնի, վեր
կելե, դուռը կը բանա, սենյակը կը մանե ու՝ օներե-
ցիք, ձեր հրամանով յերթանք, վորովհետեւ վաղը առ-
տու կանուխ պիտի յելլեմ», կըսե:

— Մելիտոս աղան, կանուխ ե գեռ, կը պատասխանե
եֆենտիին կինը:

— Վոչ, ժամանակ ե:

— Դուք գնացիք, տիկինը թող նստի քիչ մ'ալ:

— Կաղաչեմ:

— Տիկինը թող չեմ տար, այս գիշեր թող հոս մնա:

— Դուն գնա, յես վերջը կուզամ, կըսե կինը:

— Շատ աղեկ, կը պատասխանե Մելիտոս աղան
շեշտով մը, վորու հավատարիմ թարգմանությունն ե.

— Առնելիքդ ըլլա:

Յել Մելիտոս աղան տուն կը դառնա և կըսպասե
աիկնոջը դալստյան, վոր վրեթը լուծե:

Յերեք ժամ հետո տուն կուզա կինն ու վեր յելլելով՝

— Մելիտոս աղա, զարմանալի մարդ մ'ես, աեղ
մը չես կրնար նստիւ. ինչեւ աճապարեցիր:

— Ինչիւ աճապարեցի:

— Քիչ մ'ալ նստելիը, մեկտեղ կուզայինք:

— Հոգիս բերանս բերին...

— Գե՞ յեղավ, ժամանակ անցուցինք քիչ:

— Անցուցինք, տղան խաղուցինք, խահվեն վրաս
թափեցին, իշու պես ուսերուս վրա առի Վահրամիկ
պեյը և պտացուցի, վրաս մնտուց, վերջն ալ ապտակ
կերանք... մս եր ժամանակ անցնել ըսածդ. ինչ ան-
կերթ մարդ են յեղեր ասոնք, ատմնկ կը մեծնեն
տղա: Յեթե յես անքաղաքավար մեկն ըլլալի, քանի
մը խոսք կընեյի իրենց, անպիտաններ... եղությունն
իմս եր ա... ինչ վոր ե, յեղավ. տուներնիդ հյուր յե-
կած եմ, չըսեք սպասավորներուդ, վոր տղան վար
տանին...

— Դուն ալ յերկար կընես, Միլիտոս աղա:

— Յերկար մի կընեմ. տուներնին հյուր գացած
եմ, նստեցնեն զիս, «ինչպես ես, աղեկ ես. Մելիտոս
աղա» ըսեն, ես ալ «փառք աստծո, աղեկ եմ, դուք
ինտոյը եք», ըսեմ, «շնորհակալ ենք», ըսեն, «սանկ
նստե» ըսեն, «հանգիստ եմ» ըսեմ, սիկարա հրամցնեն,
«չեմ ուղեր», ըսեմ, «նստինք, շենք շնորհք խոսինք».
ասոնց վորը յեղավ. դացի, չպացի, տղան ձեռքս տվին,
եշորս ժամ շարունակ տղան կրեցի... ավանակ մը
դատան ա, հոգերնին ե... ինչ ըսեմ յես իմ բնավորու-
թյանս, վոր յերեսս չը բուներ, չեմ խոսիր ու յեաքը
ինքինքս կուտեմ. աղնվականությունն չունին, չունին:

— Մի ըսեր ատանկ խոսքեր, եփենտիին ականջը
կերթա:

— Թաղ լերթա:

— Կը բարկանա:

— Թաղ բարկանա:

— Ինչու բարկանա... չտեսար գորգը, մեծ հայելիները...

— Ինչուս պետք; գորդ ունեցողը, մեծ հայելիներ ունեցողն անկիրթ ըլլալու յե անպատճառ:

— Հսել կուզիմ, վոր ատանկ մեծ մարդոց հետ ինախն աղեկ չե: Արդեն յեղածն ինչ ե վոր... տղան քիչ մը խաղուցիր... Ի՞նչ մըսաս ունի... մեկ բանը կառնես, կանցնիս, գուն ալ... ումուր կընես:

Մելիտոս աղան չպատասխաներ, բայց մինչև առավոտ չը կընար քնանալ բարկութիւնը պատճառով:

* * *

Մերկեր աղան ճշտապահ մարդ մե: Տասն և մեկին տուն կը դառնա, կը հանվի, գիշերազգեստը կը հաջնի և կեսին սեղան կը նստի:

Սեղանեն կելնե, խահին կը խմե, զավակները կը սիրե, կը համբուրե, տիկնոջ հետ սքանպիւ մը կը խաղա և կերթա քնանալու: Կենացը մեջ գինետուն մտած չե բնավ, Ընկերության հետ հաշտ չե, վոչ հյուր կընդունի, վոչ ալ հյուր կըլլա: Արի, տես սակայն, վոր մարդս յուր անձին իշխանը չե:

Մերկեր աղան որ մ'երկելոյան ժամը տասնեմեկ ու կեսին տանը դռան առջե աթոռ մը կը դնե և կը նստի զավակը գրկած: Նույն միջոցին մարդ մը, վորու հետ սերտ բարեկամություն չուներ, կանցնի և բարեվիլեն հետո Մերկեր աղան՝ կըսե անոր.

— Սա քուկին ասանկ դռան առջև նստիլդ բան մի ձգեց միտքս:

Ցեկ Մերկեր աղային գիմացը կանգնած՝ կսկսի պատմության:

— Ժամանակալ, կըսե, համետագործ Բարադամ աղա մը կար: Համետագործ կըսեմ նե, խոսքը, խոսրաթան տեղը, շուքը ծանը, տհօքոտ, խելացի մարդ մ'երս կուսերու մեջ պառկի: Հիմակվան համետագործ ներուն պես չեր, տունը յերթայիր նե, քառոսուն տեսսակ կերակուր կը հաներ, տեսակ տեսակ անուշեղեններ, աղած ձուկեր, ընտիր ողի, գինի, մանավանդ գինին, քնավ չեմ մոռնար, լուսերու մեջ պառկի, սպասա-

վոր, աղախիններ. այսպես վոր կը կարծեյիր, թե ամիրայի մը տունը կը մտնելիր: Համետագործ, բայց հիմակվան դերձակներն ավելի վարպետ և յերջանիկ: Ատանկ համետագործ չկա հիմա, դիմացը յելլայիր նե, քայվելով կելլայիր. բարի մարդ եր սակայն, ձեռքեն լեկած բարիքը կըներ. բարեպաշտ մարդ ալ եր, լուսերու մոջ պառկի. ուսկի՞ց ալ միտքս յեկավ, քսան տարվան բան և պատմիլիքս:

— Պատմածիդ նախելով բարի մարդ և յեղեր Բարաղամ աղան:

— Բարին ալ խմսք ե, կավելցնե Ղուկաս աղան, ալս և պատմիչին անունը:

— Այսինքն շենքով շնորհքով մարդ և յեղեր, կը հարե Մերկեր աղան:

— Ենքով շնորհքովին խմսքը կըլլա:

— Այսինքն ծանր մարդ:

— Ի՞նչ ծանր, ի՞նչ ծանր... ի՞նչպես հասկցնեմ քեզի. ծանր, բայց հիմակվան թեթևներուն պես ծանր չի:

— Այսինքն աղդեցիկ մարդ:

— Վողջ ըլլալու եր ու քեզի ցուցնելու ելի, վոր մարդ տեսնայիր, Մարդ եր, մարդ, կը հարե Ղուկաս աղան՝ քթին ծակերուն քթախոտ թխմելով յերկու մատներով:

Մերկեր աղան կը գուշակե, թե պատմիչին պատրասխներն պատմութիւն ավելի յերկարելուն պիտի նպաստե, ուստի միտքը կը դնե բառ մ'անգամ չարտասանել:

— Այս Բա...ափշու...Բա...փսմւփսմւ...բաղա...փսմւ սմւ... դամ աղան... փսմւմմւ... ալս Բարաղամ աղան,

կը շարունակե Ղուկաս աղան՝ գունավոր թաշկինակով մը քիթը սրբելով և հնչեցնելով զայն այնպիսի ահագնագուշ ձայնով մը, վորու նմանն վերջին զատաստանին ահագին սրջ լսել կերեակայիր Մերկեր աղան:

— Բարաղամ աղան... եեխուռուռուռ...

Մերկեր աղան թեև չախորժիր յուր բարեկամեն, վոչ ալանոր յերկարապատում ճառեն և քիթեն, կղզա սակայն, թե քաղաքավալարութիւնն համաձայն չե, վոր ինքը տթոռի վրա նստած ըլլա, և հյուրն վոտքի վրա կայնի. ուստի կես-բերան կըսե Ղուկաս աղային:

— Ներս չեք հրամմեր քիչ մը:

Ղուկաս աղան անմիջապես տունը կը մտնե ըսելով.

— Կըլլամ մի յա... ժամանակն ուշ չե մի... ինչ կըսես... տղաքս չեն սպասեր... ձեզի ալ կոտրել չեմ ուզեր... սանկ քիչ մը նստիմ... առաջուց ըսեմ սակայն, վոր շատ չեն նստիր, չեե:

Մերկեր աղան հյուրին հետ վեր կելնե:

Ղուկաս աղան կը նստի բաղմոցի վրա, մեկ գրպանեն ծխախոտի տուփը կը հանե, մյուս գրպանեն քը-թախոտի տուփը կը հանե, բարձին վրա կը դնե, ուրիշ գրպանեն մը թաշկինակը կը հանե, քովը կը դնե, քովի գրպանեն համրիչը կը հանե, աջ կողմը կը դնե, յետեի գրպանեն ճերմակ և ծալված տոպրակ մը կը հանե, ձախ կողմը կը տեղավորե, առջևի գրպանեն զմելին կը հանե, թաշկինակին վրա կը նետե. ներսի գրպանեն ողպտիկ ծխափող մը կը հանե և բարակ թելի մը ծայրն քիչ մը բամբակ դնելով ծխափողին մեջն կանցունե և զայն մաքրելու սկսելով հանդերձ ձեռք կառնե խոսքին ալ:

— Այս Բարաղամ աղան, ի՞նչպես ըսի, աղեկ մարդ

մեր, թեև քիչ մը խիստ եր: Մարդս ալ քիչ մը խիստ ըլլալու յէ, թուլքերան մարդիկը պարապ մարդիկ են, անանկ չե մի... Մերկեր աղա, մարդ հրամցնողը ողի կը հանե, ուր ե նայինք ողին, արկինին ալ յերեսը չահանք... տիկինը ուր ե:

— Կերակուրի պատրաստություն կը ահսնե, վորովհետեւ յես ժամը կեսին կուտեմ:

— Շատ աղեկ կընեք, շատ աղեկ կընեք, յես ալ անանկ կընեմ, կեցցես, սիրած մարդ եւ, Յես ինչո՞ւ կը սիրեմ քեզի:

— (Մեկուսի) Ուր եր, թի սիրած մարդու չըլլայի, ու կըսվեիր յերթաչիր:

— Վորովհետեւ գիտեմ, վոր դուն ալ կը սիրես ինձի. սերը յերկու կողմեն ըլլալու յէ, կըսին նախնիք, ախ... այս նախնաց խոռքերուն մեջ շատ աղվոր խոռքեր կան, մարդիտի պես խոռքեր կան, բայց մենք չենք ճանչնար... Հրաման ըրեք, ողի բերեն, Մերկեր աղա, աս ինչ ե, տրատում, տիսուր նստինք պիտի... այս իրկուն քիչ մը տիսուր կերեաս կոր... ինձի անանկ կերեա կոր, չե նե... ինչու տիսուր ես... մարդս աշխատելու յէ, վոր միշտ ուրախ ըլլա, մինչև անդամ ակամ ուրախ, բռնի ուրախ... ցավ մը ունիս նե, ըստ ինձի, բացվե, ինչ վսաս ունի... բարեկամ ենք...

Այս միջոցին աանտիկինը կը մտնե սենլակն ե երկանը գեմքեն առած հրահանգաց համաձայն՝ կատարյալ պաղությամբ կը բարեկ զուկաս աղտօն:

— Ներեցեք, տիկին, մինչև այսոր հոս չգտուս համար, շատոնց կը փափագելի տեսնել ձեզի, բայց ժամանակները... ժամանակները... կը հասկնաք ա... չենք, մենք Մերկեր աղալին հետ յեղբոր պես ենք,

գրեթե ամեն որ մեկ տեղ ենք, այս իրիկուն ալ չեցի գար, բայց չկրցի գիմանալ Մերկեր աղալի թախանձանաց. ոձիքս թող չտվավ, անպատճառ ներս պիտի գաս, ըստավ. Մերկեր աղային խոսքը կը կոտրեմ ես:

Յեկ պատուհանը բացավ, փողոցը նետեց թելն, վորով ծխափողին կորկը մաքրած եր:

Տիկինը վար իջավ: Քանի մը վայրկանեն հետո ողի բերին:

— Մելմեկ հատ ճնկենք, ըստավ Ղուկաս աղան և գալաթն մինչև բերանը լեցունելով մեկումազով պարպեց:

Մերկեր աղան չեղոքություն պահեց: Ղուկաս աղան գալաթ մ'ալ տնկեց:

— Այս Բարաղամ աղան...

— Սեղանը պատրաստ ե, պոռացին վարեն: Ղուկաս աղան գալաթ մ'ալ խմեց:

— Կը ներեք, Ղուկաս աղա, աղաքը, գիտեք ա, վարժված են կանուխ ուտելու, անոթի չեն կրնար սպասել:

— Ինչու սպասեն, եֆենտիմ, ինչու... հրամմեցեք, իջնանք, միայն թի մեկը զտնալինք ու մեր տունը զրկելինք, վոր չսպասեն ինձի:

— (Մեկուսի) Յեկուր տե, մի ճաթիր:

— Զքեղ չկոտրելու համար ե, վոր հրավերդ ընդունեցի. չե նե, ուրիշին տունը կերակուր կերած մարդ չեմ: Մելմեկ հատ ալ խմենք... գինի ունիս, հարկավ ունենալու յես... Բաշա կրմանթ յի:⁽¹⁾

— Բան մը կընենք: (Մեկուսի) Համբերելու յի, ուրիշ ճար չկա:

1) Բառա Լիմանի — Պոլսի արվարձաններից մենակա ասիական ափին հայտնի յիք իր գինիսով, վորը պատրաստվում եր յեփելով չ, Պարոնյան — գ

— Ինչու այս գիշեր սանկ տիսրության պես բան մը կա վրադ:

— Վոչինչ:

— Մեքենակ հաս ալ խմենք:

— Յես չեմ խմեր:

— Յես կը խմեմ քեզի համար:

— Կերակուրը պատրաստ ե, կը կրկնեն վարեն:

Դուկաս աղան ողին հետն առած վար կիջնա, սեղանը կը բազմի ե, վորպես տանտեր, սեղան կը հրամցընե Մերկեր աղան, անոր կինն ու զավակները: Սեղանի վրա ինչ ինչ կարգադրություններ կընե. «Պուն քիչ մ'ասդին յեկուր», կըսե մ'իուն, «Պուն ալ քիչ մ'ասդին գնա», կըսե մ'յուսին, «քիչ մ'առաջ յեկուր», կըսե մեկալին, «Չուրի սրվակը իմ առջես զբեք, ճրագն անդին տարեք, վոր արգելք չըլլա ձեզի, աղցանը քիչ մ'անդին քշեցեք, կերակուրը քիչ մ'ալ ասդին բերեք, գինին իմ քովս տվեք, ճրամմեցեք, նալինք», կըսե և մսի լայնածագալ կտոր մը կառնե առջեր:

Զրկիր մը կը զբութի Դուկաս աղալին տունը՝ իմաց տալու համար, թե Մերկեր աղալին տունը կընթըն Դուկաս աղան:

Դյուրին ե յերեակալել, ինչ վոր կղգար Մերկեր աղան արարողությանց միջոցին. մերթ կը մտարերեր հյուրին թևեն բանել ու վորոցը նետել զայն, բայց քաղաքավարությունը կը հակառակեր այս որինակ է երթա և բարովի ին:

— Ինչու գինի չենք խմեր կոր, կը հարցնե Դուկաս աղան քանի մը կտոր միս կլելեն յետքը և չուրի բաժակ մը գինիով լիցնելով կը խմե և համա յուր սեղանակիցներուն կը մատովակե:

— Շնորհակալ ենք, կը պատասխանեն տանտերն ու կինն՝ առնելով հյուրեն մատովակլալ բաժակները:

Դուկաս աղան սեղանի վրա խոսելու սովորություն չունի. կուտե և կուտե, կը խմե ու կը խմե, մերթ ընդ մերթ յերկար ոհ մը կարձակե սրտին խորեն և նորեն կսկսի ուտելու ու խմելու. Միայն լերեմն յերեմն Մերկեր աղալին դառնալով կըսե.

— Բարաղամ աղան ալ ինչպես միտքս ինկուվ այս զիշեր:

Մերկեր աղան բարկությանը պատճառավ հաղիվ յերկու յերեք պատառ բերանը կը զնե, կինն առն բարկությունը տեսնելով կը կորսունե ուտելու ախորժակը և կսկսի Յերվանդը, պղտիկ տղան հանդիմանել և կը պատժին ուրիշներու հանցանաց համար:

— Կաղաչիմ, տղան մի ջտիսեր, տիկին, բան մ'ըրած չունի տղան, գառնուկի պես նստեր ե, կըսե Դուկաս աղան:

— Ի՞նչպես գառնուկի պես նստեր ե, հանգիստ չկենար:

— Իրավունք ունիս, բայց վերջապես տղա յե, կը պատասխանե Դուկաս աղան՝ զինիի շիշին հատակն ցույց տալով յուր բաժակին:

Մերկեր աղան կը կատդի:

— Ուրիշ գինի չունիք, Մերկեր աղա:

— Վոչ:

— Աղեկ վոր չունիք, բավական խմեցինք այս գիշեր. զարմանալի բնավորություն մ'ունիմ, բարեկամիս տունն ըլլամ նե, առանց քաշվելու կուտեմ, չեմ քաշվիր:

— Յերվանդ, թեղ քաշե, կըսե Մերկեր աղան։
Տղան կոկոի լալ։
— Յերվանդ, լուն, հիմա վոտքերուս տակ կառանեմ ու...
— Աս ալ մյս դիշեր յելափ, Մերկեր աղան, տղան լինչ ըրած ունի... վաչ, մեղքին... յես ջախեցի չա, հերիք եւ։
— Պապանձե, Յերվանդ։
— Տեր վողորմյա, տեր վողորմյա, յերկու կտոր միս կերա, կոնակս զնաց։
— Սա խնձորեն կուտե՞ք, տիկին, կըսե Դուկաս աղան՝ խնձոր մը տալով ախնով։
— Յերվանդ, լուն, կը կրկնե Մերկեր աղան՝ քիչ մալ բարձրացնելով ձայնը։
Յերվանդ ալ բարձր ձայնով կոկոի լալ։
Մերկեր աղան յերկու թեթև պալտակ կը հանե տղուն։ Տղան հեկեկանոք կուլա։ Մալըն կը գրկե տըզան և սեղանեն կենե բարձրությամբ։
Դուկաս աղան, վոր այս միջոցին յուրաքանչյուր խնձորն կիսագունտի բաժնելով կուտեր, տանը տիկենով բարկությամբ սեղանեն յենելու վրա Մերկեր աղային կը դառնա ու կըսե։
Կարծեմ տիկինը բարկացավ քիչ մը, իրավունք ունի. տղա չե, կուլա, լալով կը մեծան անոնք. մեր տղաքն ալ շատ կուլան։
— Յես չեմ ուղեր, վոր լան։
— Ի՞նչ ողուտ։
— Յես կը կատղիմ, առ ե բնավորությունս, առոթ չե լա։

— Ի՞նչո՞ւ ամոթ ըլլա. իմ ըսելիքս ալ սա չե, վոր ինչո՞ւ պարապ տեղը տիկինն ալ վշտանա։
— Վնասս չունի։
— Վեր յերթանք, ու հաշտեցնեմ ձեզի։
— Զկովկեցանք, վոր հաշտվինք։
— Քալե դուն, քալե։
— Զգե, յեղբար, կատակի ժամանակ չե։
— Քալե դուն, քալե... պարապ բան ե ձեր ըրածը, տիկինով սիրու առ, մեղք ե, Զեզի չհաշտեցուցած՝ պըկե հուսա չեմ կրնար յերթար յես։
Դուկաս աղան բազուկները տարածելով փառք քեզ աստված մը կարտասանն մեծաձախն, սեղանեն կինեն և ընկերակցությամբ Մերկեր աղային կը մըտնե սենյակն, ուր տանը տիկինն Յերվանդն զբկաց մեջ քնացնելու կաշխատեր։
— Տիկին կըսե Դուկաս աղան բազմոցին վրա նստելով, այս դիշեր քիչ մանհանգիստ յեղաք։ Վնաս չունի։ Մերկեր աղան ալ քիչ մը նեղսիրտ ե, ի՞նչ ընենք, տուն չկա, վոր խոսք չըլլա. սանկ քովե քով նսացեցք, նայիմ։
Վորպեսպի խնդիրը չմեծնա, ալր և կին քովե քով կը նստին։
— Վոհն, տեսմք մի հիմա... ի՞նչ մեղքս պահեմ, գինի մը ըլլար նե, կը խմելի։
— Կը ցավիմ, վոր չունինք, կը պատասխանե Մերկեր աղան։
— Կատակ ըրի յես. արդեն չեմ կրնար ավելի խըմել վոր... սա Բարաղամ աղային պատմոթյունը չըկրցինք լմնցնել. կեցիր սա սիկառս պիորեմ անգամ մը,
— Տեր ասաված, դուն համբերություն տուր ինձի,

վոր կարենամ դիմանալ սա մարդուն անհոգության,
կըսե ինքնիրեն տան տերը:

— Խանվենիս ալ խմենք:

— Ի՞նչ անհոգ մարդ ե, աստված իմ, կըսե տիկինն
ուրովի:

— Քթախոտ մալ քաշեմ նախ:

Քթախոտը կը քաշե և այնպիսի հնչմամբ մը կը
փռնդուա, վոր Յերվանդ կը ցնցվի մորը դբկաց մեջ և
կոկի լալ:

— Ի՞նչ յեղավ ալս գիշեր այս տղուն, կը պոռա
հայրն՝ վոռքը զետին զարնելով:

— Ինչու կը պոռաս, Մերկեր տղա, կը պատաս-
խանե կինն աղերսալի ձայնով մը, ի՞նչ հանցանք ունի
տղան:

Փանդտալուն կը հաջորդե հազար

— Աստուծմե գտնաս, մարդ, կըսե ինքնիրեն Յեր-
վանդին մայրը, պղտիկս ալ պիտի արթնցնե, կորսվիմ,
լերթամ սկեց:

Յեվ իրոք պղտիկն ալ, վոր որորոցի մեջ կը քնա-
նար, կըսկըսի լալու:

— Ինչու չես լոեցներ տըվոնք, տիկին:

— Մի բարիկանար, Մերկեր աղա, կըսե Ղուկաս
աղան, յես ոտարական չեմ, տղա յեն անոնք, թող
ան, յես անհանգիստ չեմ ըլլար, կաղաչեմ, ինձի հա-
մար հոգ մի ըներ, չե նե, կելլամ, կերթամ հաս...
խըյաննթ, յես քեզի յեղոր տեղ դրած իմ, ինչու ա-
նանկ կըսնես: Թող տուր, վոր սա Բարաղամ աղան
պատմեմ քեզի:

Այս միջոցին դուռը կը զարնիի: Մերկեր աղային
տղան կը բանա գուռն և վեր կուգա վաղելով,

— Ո՞վ ե, Գարիկի:

— Յերկու մարդ յեկեր են Ղուկաս աղան կուղեն:
Մերկեր աղան յեվ կինն կուրախանան այս լուրին
վրա և Ղուկաս աղային յերթաք բարով ըսելու
նախապատրաստական ձեր և շարժումներ ցուց կու-
տան, մինչդեռ Ղուկաս աղան զեալի պատուհան կեր-
կըննա և գլուխը դուրս հանելով կը հարցնե.

— Ո՞վ ե ան:

— Բարիկուն, Ղուկաս աղա, կը պատասխանե վա-
րեն հաստ ձայն մը:

— Դուք եք, Կիրակոս աղա:

— Բարիկուն, Ղուկաս աղա, կը պոռա վարեն ու-
րեց մը:

— Ո՞ո, դժուք ալ յեկեր եք, Զաքար աղա... իրավ,
այս գիշերվան համար խոսք տված ելի ձեզ, բայց Մեր-
կեր աղան թող չտվավ, վոր զայի... վեր հրամմեցեք,
վեր հրամմեցեք, սանկ քիչ մը նաևինք, Մերկեր աղան
ոտարական չե, սեպե, թե աս ալ իմ տունս ե:

Մերկեր աղան յերկար ախ մը քաշեց. կինն
տղան, զոր արդեն զրկած եր, քովի սենակը տարավ,
Գարիկն ալ լուր պղտիկ յեղբայրը գրկեց և մորը
հետեւցավ:

— Յերկուքն ալ պապա մարդեր են, ըստ Ղուկաս
աղան, յերբ Մերկեր աղային հետ մենակ մնացին. Կի-
րակոս աղան զվարճախոս ալ ե, թեե բերանը մաքուը
չե. Զաքար աղան ըսես նե, կամացուկ կամացուկ կը
խնդա, բրեֆայի ընկերներս են:

Յերկու նորեկները ներս մտան և բարեկեցին Մեր-
կեր ու Ղուկաս աղաները:

— Ի՞նչպիս եք, նայինք, ի՞նչ կա, ի՞նչ չկա,

- Սանկ, պատասխանեց Զաքար աղան: — Նանկ, հարեց կիրակոս աղան կտրուկ կերպով մը: — Վալրկւան մը ներեցեք ինձի, ըսավ Դուկաս աղան նորեկներուն և Մերկեր աղային դառնալով՝ ավելցուց կարճ կապենք ալսոր, ուրիշ որ մը յերկար բարակ կը պատմեմ քեզի Բարաղամ աղան... — Վաչ, հնու ալ Բարաղամ աղա, պոռաց կիրակոս աղան:
- Աղբար, քառսուն անգամ ալ յս մտիկ ըրած եմ, հարեց Զաքար աղան:

— Մերկեր աղան չիտես: Այս Բարաղամ աղան ճիշտ քեզի պես իրիկուն մը դրան առջև աթոռի վրա նստած եր, Մել մ'ալ կը տեսնե, վոր սիրած բարեկաներեն մին կանցնի. վոտք կելնե, խնդումով քիչ մը կը խոսակցի հետը վոտքի վրա անշարժ և հետո բարեկամին յերթաք բարով կըսե ու նստիլ ուղելով կանակի վրա ինալ մը կինա, վոր վոտքերը կը տնկիլին, ֆեսը մեկ կողմ կերթա, հողաթափներն ողի մեջ գլուրելով գետինը կինան: ԵՅ, վորմւ քով հողի մնաց վոր. խընդալեն կը ջարդվէինք, աստված լուսալորե հողին: յս յերկու կողերս բռնած, կոնակս պատի տված՝ խնդալին մարելիք յեկավ վրաս. դիմացի տուներեն կոնիկներն ըսես նե, աստված լուսավորե հոգին, անանկ քահքահով կը խնդային, վոր փողոցը կը թնդացնելին: Վողօրմած հոգին, տեր աստված ի դաս սրբոց դասեցե, գլուխը վեր առավ սանկ և չորս կողմը նայելով ինքն ալ մկան խնդային՝ «ամեն գործին մեջ խեր մը կա» ըսելով: Սպասուհին սեղանը պատրաստած տեսն՝ աթոռին մեկը պակսեր ե, և դռան առջին տեսնելով զայն առեր, տարեր ե: կուսահոգին, տեր աստ-

ված ի դաս հրեշտակաց ընկալցի, կարծեր ե վոր... հա հա հա... կարծեր ե վոր հա հա... քանի կը հիշեմ, չեմ կրնար խնդաւ բռնել. կարծեր ե, վոր աթոռը տեղը դրած ե: Ասանկ մարդ մ'եր Բարաղամ աղան, աստված վողորմի հոգուն:

Մերկեր աղան հարկադրվեցավ խնդալու պես ընել: — ԵՅ, ընկերներ, ձեր միտքը կը հասկնամ, ըսավ պատմիչն նորեկներուն դառնալով, դուք ըսել կուզեք, վոր պատիկ բոհքա մը դարձունենք.

Մերկեր աղան կայծակնահար յեղագի: — Յեկեք, նայինք, հարեց Դուկաս աղան՝ նստելով սեղանին առջև, վոր սենյակին մեջ տեղը գրված եր, կիրակոս և Զաքար աղաներն ընդունեցին հրավերն:

Զաքար աղան գրպանին հանեց խաղի թուղթերը: — Մոտիցեք, Մերկեր աղա, գովերնիս յեկեք, վոր չնեղվիք մենակ, ըսավ Զաքար աղան:

— Հոգ չե, պատասխանեց Մերկեր աղան ծիծաղով մը, վոր կծու յեր և բարկութուն կը հայտնեք:

Յերեք բարեկամներն սկսան խաղալ և Մերկեր աղան մրափի, վորովհետև կանուխ պառկելու սորված եր,

— Առ ի՞նչ պիտի ըլլա, Մերկեր աղա, կը քնանմաք կոր, արթնցեք, կըսե Դուկաս աղան:

— Զե, չեմ քնանար կոր, սանկ. կը պատասխանե Մերկեր աղան արթնալով և նորին գոցելու ստիպվելով արտեանունքն, վորով վրա ծանրացած եր քունը: Խաղը կը շարունակվի:

Կը շարունակվի նաև քունն, վոր Մերկեր աղային գլուխը կերերցնե՝ մերթ մեկն ի մեկ դեպի անոր կուրծքն իջեցունելով գլուխն և մերթ բարձրացնելով:

կը տանջվի Մերկեր աղան, կամք կընե չքնանալու:
Քունը կը հաղթե կամքին, և Մերկեր աղան վերստին
կը փակե աչքերը:

— Աս չեղավ, Մերկեր աղա, կերկըորդե Ղուկաս
աղան միզեր մը խաղալով: Գնա, լեզրայր, տեղդ պառ-
կե, մենք քեզի անհանգիստ ընելու չեկանք հոս. գնա,
հանգստացիր, մենք ոտարական չենք. լեթե տեղդ չը
պառկիս, հիմա կելինք, կերթանք հա, գիտցած լլասա:
Գիշեները նստելու սովորություն չունիս, ամոթ բան
մը չե ասիկա... գնա, պառկե անդդ...

— Վնաս չունի, կըսե Մերկեր աղան՝ աչքերը բա-
նալ փորձելով և չհաջողելով:

— Ի՞նչպես ֆնաս չունի... յես չիմ ուզեր, վոր ան-
հանգիստ ըլլաս: Թեզի բան մ'ալ ըսեմ. յես գացած
տեղս, թե վոր քիչ մը սանկ պաղ ընդունելություն
գտնամ նե, կառնեմ, կը քալիմ. յես անանկ բաները
սիրտս կը գնեմ, հասկցաբ. անոր համար կըսեմ, վոր
կամ գնա պառկե, կամք քիչ մը չուր խմե, վոր քունդ
փախչի:

Պատասխան չընդունիր Ղուկաս աղան, վասնզի քը-
նացած եր. Մերկեր աղալին զլուխը մեկ մ'ասղին,
մեկ մ'անդին յերերալին հետո բարձին վրա հանդ-
չած եր:

Ժամը մինչե իննուկես կը խաղան յերեք ընկեր-
ներն: Հետո քիչ մ'ալ կը խոսին և կարթնցնեն Մեր-
կեր աղան, վոր մնաք բարով ըսեն իրեն:

— Ներեցեք, Մերկեր աղա, կըսե նախ Ղուկաս ա-
ղան, ալս գիշեր ձեզի անհանգիստ ըրինք քիչ մը:

— Վորչափ վոր նեղություն տվինք նե, ներկցեք,
կ'երկըորդե Զաքար աղան:

— Մեզի համար քնատ մնացիք, կ'երբորդե կերա-
կոս աղան:

— Անհանգիստ չեղա, կը պատասխանե Մերկեր
աղան:

— Մելմեկ խահվե խմենք պիտի ըսեյի, բայց ժա-
մանակն ուշ ե, կըսե Ղուկաս աղան:

— Այո, այո, ուշ ե, յերթանք, կը պատասխանեն
ընկերները:

— Յերթանք, կը կրկնե Ղուկաս աղան և ընկեր-
ներուն գառնալով՝ խոսք կուտամք վաղը գիշեր հոս
գալու, վոր ձեզի քատա ի ֆ մը շինեմ:

Մերկեր աղան կայծակնահար կըլլա յերկըորդ ան-
դամ:

— Մերկեր աղան ալ կամաց կը վարժեց-
նենք գիշերները նստելու. այո, այո, վաղը խորհինք
ու բան մ'ընենք գիշերը: Բայց, Մերկեր աղա, մենք
լապտեր չունինք... կարծեմ կանձրեե կոր. հովանոց
ալ չունինք... լաստիկներս ալ չհագա... տեսամը մի հի-
մա ըրածս:

— Մերկեր աղային առ աս գիշեր ու վաղը տուր,
կըսեն ընկերները:

— Ուրիշ ճար չեա:

Մերկեր աղան կը մատակարարե Ղուկաս աղալին,
ինչ վոր պետք եր անոր անձրեն պահպանվելու հա-
մար: Ղուկաս աղան շնորհակալություն կը հայտնե և
կիմացնե միանգամայն, թե Մերկեր աղային սիրուցն
համար հանձնառու պիտի ըլլա հետեւյալ գիշեր կանուխ
Մերկեր աղային տունն յերթալ և քաթա ի ֆ մը
յեփել:

Վերջապես կը մեկնին հյուրերն և Մերկեր աղան

ավուր պատշաճի հայրոյություններ ընկելով դուռը կը կղզի, ճրագներն կը մարե և պառկելու սենյակը կը մտնե՝ ինքն իրեն խոսելով բարձրածայն, «Աս ալ դըլուխս չեկած չեր, աս ալ տեսանք, այսչափ անկրթություն, այսչափ աներեսություն վոչ տեսած ունելի, վոչ լսած, տասն յերկու ժամ անհանգիստ չեղիր, վորպեսզի աղաները դվարձանան, վոտքս կոտրեր, ու դուռը չընստելի, վաղն իրիկուն ալ զա պիտի ու քաթաչի փ պիտի յեփեր, յեզեր, դուռը բանամ նե, ներս կուգա, Անհոգ, անհոգ, անհոգ մարդ:

— Ի՞նչ կը մռմռաս, ճանըմ, կըսե կինն՝ անկողնույն մեջ մեկ կողմեն մյուսը դառնալով և զլուխը վերմակին մեջ խոթելով:

— Ի՞նչ մի կը մռմռամ, դուն հանգիստ քնացար ա, մել մը ինձի հարցուր քաշածս...

— Մի պոռար, տղաքները պիտի արթնցունես:

— Զը պոռամ մի... ինչու չեկար քիչ մը նստելու, վոր յես ալ քնանալի կտոր մը:

— Ինչուս պետք:

— Ինչուդ մի պետք:

— Քեզի ըսե:

— Ինձի մի ըսեմ:

— Քունս պիտի փախցունես, տեր վոզորմատ, լմընցուր ալ, մեկ բանը չեն յերկնցներ:

— Զեն մի յերկնցներ:

— Քունս կը փախցունես կոր, կըսե կինն մյուս կողմը դառնալով:

— Քունդ կը փախցնեմ կոր մի...

Մերկեր աղան ինքնիրեն շարունակելով յերկար մենախոսությունն՝ անկողին կը մտնե: Զկրնար քնանալ:

Մինչե առավոտ անկողնու մեջ մեկ մ'ասդին, մեկ մ'անգին գառնալով կանիծե ու կանիծե Ղուկաս աղան: Յեղ միշտ կը յըկնե. «Վաղը զիշեր ալ քատաչի փ պիտի յեփե յեղեր»: Սա անկրեսը, անպիտանը, մազ մընաց, վոր պիտի ճաթեցներ ինձի... յես ալ հանցանք ունիմ ա: Բռնե ականջեն, փողոցը նետե, լմնաւ, յերթա. համբերելու բան չե վոր... իմ տունս քազինն յե... թող կորսվին, ուրիշ տեղ խաղան իրենց ըրե փան... թե վոր իմանամ, վոր մեկու մը կաթված իջեր ե, պիտի ըսեմ, վոր աս աներեսը անոր տունը գացեր ե թարաղամ աղակն սկսելով... վայ, աներես, վայ... թարաղամ աղակով մը անանկ մը քթես րոնեց, վոր.... իրավ, լմնցնենք ալ, մոռնամ զոնե սա խալտառակին ըրածն. քանի կը խոսիմ կոր նե, վրաս դող կուգա կոր:

Յեղ Մերկեր աղան կսկսի արագ քայլերով դառնալ սենյակին մեջ:

* * *

Խոնարհություն կա, խոնարհություն ալ կա:
Եեն մարդիկ, վոր բարձրանալու և ուրիշներն խո-
նարհեցնելու համար խոնարհությունը դործիք ըրած
են իրենց:

Կան մարդիկ, վոր խոնարհության կը դիմեն՝ հար-
ուրին քսան զեղչելու համար իրենց պարտքեն:

Հաճախ պատահած եմ այնպիսի մարդոց, վոր խո-
նարհության ապավինած են իրենց մեկ բարեկամը
էղողպտելու համար:

Կը գտնվին նաև մարդիկ, վոր խոնարհության մեջ
դտած են մարդ խարիկու ամենեն դյուրին միջոցը:

Սակավք են, վոր խոնարհ կը լամ՝ խոնարհ ըլլալու
համար:

Սպասելով վոր մեր Բարոյական տիտարա-
նությունը, վորուն կը վալե ճառել այս նյութին
վրա, ընդարձակորեն խոսի այն անձանց վրա, վորք
խոնարհությունն խանութ ըրած են իրենց, ացնինք
այսոր ներկայացնել անձ մը, վոր կը խոնարհի բարձ-
րանալու նպատակավ միաւն:

Սրբույն Թագեսոսի և Բարթուղիմեոսի տոնախըմ-
բութենեն քանի մ'որ լետքը՝ Հակոբոս աղա ուր Բար-
թուղիմեոս անուն մեկ բարեկամին այցելություն կը-
նեա շնորհավորության պարտքը կտարելու համար:

Ընդունելության սենյակն, ուր առաջնորդված եր
Հակոբոս աղան, պղտիկ եր, Արդեն ալժմու ընդունե-
լության բուրը սենյակները պղտիկ են, վասն զի քիչ

ծախքով կը կահավորվին, Ալս սենյակն ուներ պատըշ-
գամ մը, վոր հազիվ կրնար տանիլ լիրկու մարդ,
անկյան լերկու բազմոցներ, ուր լիրկերկու մարդ
միայն կրնային նստիլ, և վեց հատ աթոռ: Բազմոց-
ները բեռնավորված եյին, լեր ներս մտավ Հակոբոս
աղան: Տան տերն հրավիրեց Հակոբոս աղան պատըշ-
գամը նստիլ, և Հակոբոս աղան ընդունեց հրավերն և
գնաց բազմիլ պատշգամը: Հավելունք ըսել, թե Հա-
կոբոս աղան անանկ մարդ մ'ե, վոր ուր քաշես, կեր-
թա: կեղծ մերժումներին, արվեստակալ հարգանքնե-
րեն չախորժիր. մեկ խոսքով՝ պարզ մարդ մ'ե, այ-
սինքն այն մարդերեն ե, զոր կը պաշտեմ իսու: Ավուր
պատշաճի քանի մը խոսքեր փոխանակվելին հետո
հյուրերուն և տան տիկնոջ մեջտեղ՝ սենյակին դուռը
բացվեցավ:

— Հրամմեցեք, եփենտի, ըսավ տան տիկինն՝
վոտք լենիլով և իրար անցնելով:

Եփենտին խոնարհությամբ բարեկեց հյուրերն և դը-
ռանը մոտ զրված, այսինքն յերրորդ և վերջին աթոռ
ուն վրա նստավ:

— Տեր գողորմիա, ինչ կը նեք, եփենտի, սանկ
վեր հրամմեցեք, ըսավ տան տիկինը:

— Զե, չե, հոս հանգիստ եմ:

— Չըլլար, վեր հրամմեցեք:

— Կը խնդրեմ, տիկին, միաս չունի, հոս ավելի
հանգիստ եմ:

Բազմոցի հյուրերն և Հակոբոս աղան իրենց քովն
առնել կուղեն եփենտին, վոր կը մերժե:

— Իրավ վոր աս չեղավ, չվայլեց... խաթերս հա-
մար սա պատշգամը անցիր:

— Հրամմեցեք, կըսի Հակոբոս աղան վոտք լելներով:
 — Զեմ ուզեր, նստեցեք:
 Հակոբոս աղան կը նստի:
 — Ըրածդ իրավ վոր չվալիր, եֆենտի, աթոռին
 վրա անհանգիստ ես, սա պատշտամը հանգիստ ե,
 տես ինչ աղեկ ե,
 Հակոբոս աղան կը կանգնի նորեն:
 — Զեմ ուզեր:
 Հակոբոս աղան դարձլալ կը նստի:
 — Զեք ուզեր, բայց նստեցեք, տեսեք, ինչ աղ-
 վոր ե, ծովմ ալ կառնե:
 Հակոբոս աղան նորեն վոտք կելնե:
 — Ինչու կստիպեք, տիկին:
 Հակոբոս աղան նորեն կը նստի:
 — Եսս պատշտամը նստիմ նե, ընավ չեմ նեղա-
 նար. նավեր, շոգենամսեր կուգան, կանցնին, ձկնորս-
 ները ձռւկ կորսան, շատ աղեկ ե. վոտքդ պազնե,
 քուզում եփենտի, քիչ մը նստե:
 Հակոբոս աղան վերստին կը կանգնի:
 — Կը խնդրեմ, տիկին:
 — Կաղաշեմ:
 — Մի թախանձեք:
 — Խաթերս համար:
 — Հարկ չկա:
 — Վոտքդ պազնեմ:
 — Տեր վողորմա:
 — Արևետ սիրեմ:
 (Տակավին Հակոբոս աղան վոտքին վրա յե):
 — Զե ըսինք մա:

— Զե մի՛ ըսեր, տես ինչ աղլոր ե:
 — Գիտեմ:
 — Շոգենամսերը...
 — Տիսած եմ:
 — Դիմացի լեռները ..
 — Այսի:
 — Տուները, ծառերը .
 — Ալն, գիտեմ:
 — Ձկնորսները... հայտե՛, եփենտի:
 — Տիկին:
 — Շատ աղեկ, վերջը կը նստիս:
 Հակոբոս աղան կը նստի:
 Եփենտին իթե հավաներ պատշտամը նստիլ Հակո-
 բոս աղային քով, խնդրիր պիտի փակվեր, և, հետեւ-
 բար, պիտի զրկվեր այն հաճուչքեն, զոր տան տիկնոջ
 թախանձանքները կը պատճառելին իրեն. Եփենտին
 փափագն եր բարձրանալ շարունակ, ցորչափ պիտի
 մնար այն սենյակին մեջ, և այս միջոցն հարթար դա-
 պած եր հասնելու համար լուր նպատակին:
 Մյուս կողմեն Հակոբոս աղան կը վիրավորվեր,
 վորովհետև պարտականություն չեր զգար խոնարհիլ
 ուրիշ մը բարձրացնելու համար և անվան մը շնորհա-
 վորության առթիվ այս լեղանակով նվաստանալուն
 վրա կը ցավեր. Այսու ամենայնիվ յուր-ցավմ ծածկե-
 լու կը ջանար և կը համբերիր:
 Մյուս հուրերուն ևս հաճո չեր թվեր տան տիկ-
 նոջ և եփենտին ընթացքն, և կոպասեյին, վոր առե-
 տուրներուն նվազությանը և ոդույն գեղեցկությանը
 վրա բացված խոսքն վերջանա, ու յելնեն, լերթան:
 — Վերջապես սա պատշտամը քիչ մը չնստեցար,

ըսավ նորեն տիկինը, Սանկ քիչ մը նստե՛, տես Վար-
նայի¹⁾ շոգենալին ե, վոր կուզաւ:

Եֆենտին շարժում մ' ըրավէ
Հակոբոս աղան վոտք յելավ:

Եֆենտին թիկնոցի լետեկի գրպանեն թաշկինակը
հանեց և քիթը սըրեց:

Այս եր շարժման պատճառը:

Հակոբոս աղան նորեն նստեցավ՝ այս անդամ ալ
եֆենտին քթին զոհվելով:

— Այս հարավային հողմերն ալ չվերջացան, վոր
հարբուիւ խալսեցինք, ըսավ տան տիկինը. ամենուս
վրա թուլություն մը կա, սրտի նեղություն մը.
շելար սա պատշգամը նստելու, վոր սիրտ բացվեր
քիչ մը, եֆենտին:

Եֆենտին քիչ մը շարժեցավ ձեռվ մը, վոր կար-
ծես կընդուներ տիկնոջ հրավերը,

Հակոբոս աղան վոտք յելավ և հրամցուց եֆեն-
տին:

— Զե՞, չե՞..., սա նասլրս քիչ մը ցալեցավ, անոր
համար վոտքս սանկ դրի, վոր հանդիսաւ ընեմ:

Հակոբոս աղան դարձյալ նստեցավ՝ այս անդամ
ալ եֆենտին վոտքին զոհվելով:

— Ամենուն քովը հազ մը կա, մարդ չկա, վոր
չհաղա, հարեց տան տիկինը, կուրծքի ցավ ալ կա...
կիմանամ, վոր ուրիշ հիվանդություններ ալ կան յե-
ղեր. եֆենտին, պատշգամը անցիր ու վոտքդ յերկըն-
ցուր քիչ մը,

Հակոբոս աղան յերթալու համար վոտք յելավ և

¹⁾ Առանա - Բուլղարիայի նշանավոր քաղաքներից մեկն
ե, վոր դանվում ե Սկ ծովի ամիկն:

գլուխը ծուելով՝ «Ճեր հրամանավն յերթանք, տիկին»,
ըսավ:

— Նստեցե՛ք քիչ մը, Հակոբոս աղա, ինչու կա-
ճապարհք... գործ ունիք նե, զոր չեմ ըներ,

— Այս, գործ ալ ունիմ:

— Քիչ մ'ալ նստեցե՛ք:

— Քիչ մ'ալ նստիմ, վոր քիչ մ'ալ նախատվիմ,
ըսավ ինքնիրեն Հակոբոս աղան և նստեցավ:

— Հակոբոս աղա, ինչպես ե մեր պատշգամը:

— Շատ աղեկ ե:

— Յես շատ անդամ հոս կը նստիմ և չեմ նեղա-
նար... եֆենտին չախորժիր կոր:

Եֆենտին կդգո, թե թախանձանց վերջերն ե, վո-
րովհետեւ Հակոբոս աղան յերթալ կուզե, ուստի վոր-
պես թե տան տիկնոջ խոսքը չկոտրելու համար՝

— Քիչ մը նստիմ սա պատշգամը, վոր խոսքը
գոցվի, կըսե և կերթա նստելու պատշգամն, զոր թո-
ղած եր արդեն Հակոբոս աղան:

— Ինչու կերթաք, Հակոբոս աղա, քիչ մ'ալ նստե-
ցե՛ք, կըսե տան տիկինը:

— Վոչ, յերթամ պիտի,

— Կաղաչեմ, քիչ մ'ալ:

— Ձեր հրամանովն յերթանք, տիկին:

— Յեթե ստիպողական գործեր ունիք, չեմ ստի-
պեր, վոր մնաք:

— Այս, ստիպողական գործեր ունիմ:

— Շատ շատ բարեներ կընեմ...

— Կիսուս վրա...

— Ձեր տիկինին...

— Լլաւ:

- Զեր աղջիկներուն:
- Շատ աղեկ:
- Պղտիկին ալ աչքնը կը համբուրեմ:
- Շնորհակալ եմ:
- Դարձյալ հրամմեցե՞ք, Հակոբոս աղա:
- Դուք ալ հրամմեցե՞ք:
- Մեզի մի մոռնաք:
- Զենք մոռնար:
- Տիկինդ ալ մեկտեղ բե՞ր:
- Կուգանք:
- Տիկինը բեր որ մը, վոր քիչ մը պատշպամը նստի:
- Նստի, (մեկուսի) վոր ինձի պես խայտառակի:
- Մեր պատշպամը շատ աղեկ ե:
- Անանկ ե:
- Հակոբոս աղան կը մեկնի:
- Ինքինքը փողոց գտնելուն պես կոկսի խորհրդածությանց.
- «Քառասուն անդամ վոտք յենել, քառասուն անդամ նստիլ, վորպեսի եֆենտին նստի պատշպամը, պարապ տեղը պղտիկնար, խոնարիւելու, խայտառակշիրը տիկինն եֆենտին առջև, թելք չըրի. առաջին անդամ, վիլ հյութերուն առջև, թելք չըրի. առաջին անդամ, վիլ հյութերուն առջև, թելք չըրի. առաջին անդամ, վորպես յեղափ, գետնին տակը քառասուն անդամ, վորպես յեղափ, գետնին անդամ, ի՞նչ սորվելիք ունիմ, ի՞նչ ունիմ յեղափ, առաջին պղտիկը մնալու ստիպեցին զիս... Յես ուղեցի պատշը»

չամը նստիլ. ինքը հրամցուց, յես ալ ընդունեցի, յեթե եֆենտին համար պիտի պահեր պատշպամը, ինչնու զիս հրամցուց հոն: Բայց տիկինը հանցանք չունի... ի՞նչպես չունի... ան ալ ունի հանցանք, բայց եֆենտին ե բուն հանցավորը: Յերանելի, քեզի պատշը գամը հրամմե՛ կրսէն կոր, յեկուը գուն ալ նստե, յես ալ նստիմ, յմնաս գործը... զիս քառասուն անդամ խայտառակելու ի՞նչ հարկ կա: Ասկից վերջը վոչ թե միայն չպիտի նստիմ պատշպամ, այլ նաև զավակներուս ալ պիտի կատկեմ, վոր հեռու փախչին պատշը գամներե... շատ դիպավ ինձի այս գործը: Յեթե տուն մ'այցելության իբրթամ, սենյակին դրան քով պիտի նստիմ. պարապ տեղը խայտառակ ըլլալու ժամանակ չունիմ»:

Այցելության որերուն մեջ հնք, սիրիլի ընթերցողներ, և այս իսկ ե պատճռուն ներկա հոդվածիս հրատարակության: Զգուշացեք պատշպամ նստելե. ընտրեցեք ձեզ անանկ տեղ մը, ուսկից արտաքսվելու նվաստության մեջ չգտնվիք: Գիտեմ, յերք այլ և այլ վիճակի հուրերով լցցված սենյակ մը մտնեք, կը շվարիք, կը մնաք և չեք զիտեր, ուր նստիլ ծերերը չեն հարգվիր, վոր տարիքի կարգով նստիք: Ուկեն ալ ստոկ ըներ, վոր խելքի կարգով տեղ մ'ընտրեք: Առաջնությունն վոսկվո կը տրիքի, ուստի վոսկվո թիվերու կարգով տեղ մ'որոշելու աշխատեցեք: Կը տեսնես, վոր աղքատ ծեր մը անկյունը նստեր ե, յեթե յերկու վոսկի ունիս վրադ, գնա ալդ ծերունիին կռնակին վրա նստե: Կը պատահի սակայն յերբեմն, ինչպես արդեն տեսաք, վոր ամենեն հարուստն ամենեն վար կը նստի դռան քով. վերջեն յեկող և անկե նվազ հարուստ մը

դուն դժւրսը նստի: Ահա ծանր խնդիր մը, վոր ամեն
տարի այցելությանց որերուն մեջ կը հուզվի և շատ
սխալներով կը լուծվի:

Հստ մեր խոնարհ կարծիքաց միջոց մը կա միայն,
վոր այս անպատճենությունները կը բառնա և արժա-
նապատվությունները վիրավորելու լերկուղը կը փա-
րատի:

Վերն և այդ միջոցը:

Ալբուրենի կարգով նստիլ:

Այսինքն ժամկոչ մը, վորուն անունն այրով կը ս-
կըսի, իրավունք պիտի ունենա վեր նստիլ այն վա-
ճառականեն, վորուն անվան սկզբնատառն Բ կամ Գ
կամ Դ և այն ե:

Այս միջոցը թեպետ և քիչ մը ծիծաղաշալժ ե, բայց
սկզբունքի վրա հիմնված ե:

* * *

Աբրահամ աղան անդյուտ անձ մ' և խաղի մեջ.
վորչափ ալ կորսնցնե, չբարկանար, պաղ արյամբ կը
շարունակե խաղն՝ առանց կծու ակնարկություններ
ընկելու յուր խաղակցին: Աբրահամ աղային հակապատ-
կերն և Տիմոթեոս աղան, վոր սաստիկ կը բարկանա,
յերբ բախտը իրեն չժպափի խաղի մեջ:

Աբրահամ աղան շեր ճանչնար Տիմոթեոս աղան,
վոչ ալ տիմոթեոս աղան կը ճանչնար Աբրահամ աղան,
յերբ որ մը զսոսարանի մեջ իրարու հանդիպեցան, և
Տիմոթեոս աղան հրավիրեց Աբրահամ աղան պեղի ք
խաղալու:

— Աբրահամ աղա, յեկանը, քեզի հետ բարթի մը
պեղիք խաղանք:

— Ալսոր ժամանակ չունիմ:

— Կաղաչեմ, բարթի մը խաղանք, ժամանակ կան-
ցունենք:

— Շնորհակալ եմ, թող մնա այսոր:

— Խաղանք, խաղանք... սա թուղթերը բեր, ծո:

— Գործ ունիմ, չեմ կընար խաղալ:

— Շուտ մը կը լմնա... շուտ ըրե, ծո... աղեկ
թուղթերեն բեր:

Աբրահամ աղան չիրնար դիմադրել:

— Մելմեկ խահվելի խաղանք, Աբրահամ աղա:

— Շատ աղեկ:

— Կարե, նայինք... դուն պիտի տաս... տուր, նո-
մինք... խաղի մեջ իս բաղդ չունիմ ամա, փորձենք...

Կսկսին խաղալ: Տիմոթեոս աղան անանկ շարժում-ներ և ձևեր կրնե, վոր բարկություն կը հալտնեն. լիր-բիմ քթին տակեն կը մուռա և ծուռ ծուռ կը նայի Արքահամ աղալին, վոր կը վաստիի խաղը:

— Դուք վաստկեցաք... լավ... տուր, նայինք:

— Առեք:

— Աս ինչ անձոռնի թուղթեր տվեր ես, աղբար, կարծես զատեր, զատեր, գեղ թուղթերը տվեր ես:

— Դուք կտրեցիք:

— Զեմ ըսեր, թե ինս չկտրեցի... խաղացեք:

— Վերուցեք:

— Աս ինչ գեղ թուղթ կը քաշեմ կոր, աղբար:

— Բիքա քող... քառասուն:

— Աղեկ թուղթերը դուն ես առեր:

— Զորս ասո... հարյուր...

— Գիտեմ իմ բախտ:

— Բիքա տամա, քառ ֆանթի... հիսուն:

— Ալշափ աղեկ թուղթ քաշել... առաջին անգամն է, վոր կը տեսնամ կոր:

— Յերկու հարյուր հիսուն...

— Վայ, շունչանորդի թնւղթ, վայ...

— Յերկու հարյուր հիսուն...

— Վհրչափ գբեցիր, աղբար... յոթը հարյուրի մուտեցեր ես... զեռ նոր սկսանք խաղալ կաղաչեմ, ուշադրություն ըրեն...

— Քու առջեղ կը գրեմ կոր, լեղբակը... չորս ասո... հարյուր...

— Վայ, թշվառական թողթ, վայ... քսան, հելե քսան մի բացինք... որհնյալ ե աստված,

— Յերկու հարյուր հիսուն:

— Պե աղբար, քիչ մը կամաց խաղա, վոր յես ալ տեսնամ, ինչ ե ան, զըլվը զըլվը լերկու հարյուր հիսուն կըսես, կը բանաս... ինչու համար լերկու հարյուր հիսուն կըլլա կոր լեղեր... ինչ ըսնէ ե... զաթը իմին թուղթս զեշ կուգա կոր...

— Հինգ հարյուր...

Տիմոթեոս աղան ձեռքի թուղթերը սեղանին վրա կը նետի և Արքահամ աղալին դառնալով՝

— Քեզի կամաց խաղա ըսինք, աղբար, մախսուս զիս բարկացնելու համար կընիս կոր... յես քեզի լնեմ նե, հոշըդ կուգա:

— Ի՞նչ կընեմ կոր, աղբար...

— Տահա ինչ պիտի ընես, աղբար... ինչեն հինգ հարյուր կը բանաս կոր լեղեր:

— Ճանրմ, առաջ աղջիկ մը և պաճախ մը չունելի...

— Ունեցիր մի, չունեցիր մի, յես ինչ գիտնամ, աղբար... մարդուս գլուխը խելք կը ձգես կոր մի յն... իմ խալիս մի նախիմ, քուկինիդդ մի նախիմ... աճնիով, հիւեթով խաղալ մը ունիս, կարծես քի բանակի մը զլուխ անցեր ես ու մեծ հաղթանակ կը առանիս...

— Վերջին պաճախ մը քաշեցի...

— Յերբ քաշեցիր, անանկ ամելե կը խաղաս վոր...

— Վերջն ալ աղջիկ մ'առի...

— Յես չտեսա... ինչ ե նե, աղբար, զրե, ուղածիդ չափ նշանակե... շատ աղիկ, աղբար... թուղթ մու...

Արքահամ աղան կը նեղվի և շուրջը գտնվողներուն կը նայի, վորք շրթունք կը խածնեն՝ հասկցնելու համար իրեն, վոր համբերի:

— Զխաղամ, կը պոռա Տիմոթեոս աղան, չխաղամ... ինչու ծանր կը խաղաս կոր:

— Հազար, կըսե Արրահամ աղան:

— Հազար, հազար... մութլախ աս թուղթին մեջ
բան մը կա... դուն թուղթերը կը ճանչնաս կոր, կը սե
Տիմոթեոս աղան և թուղթերը ուժով կը նետե դեպի
Արրահամ աղան:

— Յես կը ճանչնամ կոր թուղթերը...

— Զեմ հասկնար, աղբար... չեմ նայիր կոր տեսի,
ուզածիդ չափ ալ գրեր ես...

— Ավելի՞ գրեր եմ...

— Ի՞նչ ըսեմ:

— Ծա, սա թուղթերը ժողվե ու բեր... գրե, պէ
առամ, գրե...

— Խնախ, ատամ, խոսք մի ըներ:

— Դրե, պէ ատամ, գրե, ըսինք մ...

— Գրեմ, բայց...

— (Վոտք ի ելն ելով, պոռաւլով) Գրե ըսինք,
աղբար, գրե ըսինք... խոսքը չեն լիրկնցներ...

— Անանկ մեկ շեշտով կըսես կոր, վոր...

— (Ավելի պոռաւլով) Գեշ խոսք մը չըրկնք մ,
գրե ըսինք:

— Հսիք, բայց...

— (Աթոսին վը ա ի ելն ելով) Գրե, պատպամ...
գրե...

— Զեմ ըսեր, թե չըսիք... բայց չեր վայլեր, վոր...

— Գեշ խոսք մը ըսինք, աղաներ, դուք ըսեք...
գրե, ըսինք... ուզածիդ չափ գրե, ըսինք... խոսքն այս
չափ չեն լիրկնցներ... Արրահամ աղամ, Արրահամ աղամ,
թե վոր դուն իմ անդա ըլլալիր, ինչեր չելիր ըներ արդ-
յոք... զբոսարանը տակն ու վրա կը բերելիր... բայց
իս չեմ բարկանար ձեղի պես...

— Ավելի՞ գրեցի:

— Գրե, ըսինք, այնի:

— Ինչու ըսես, յեղբար:

— (Զբոսարանի դռան առջե պոռաւլով) Այս մարդը խոսք չը հասկնար պե... գրե, ըսինք, այլու,
քուկին ձեռքեղ բանող յեղմվ, մի գրեր, ըսող յեղմվ,
ինչու կերկնցնես խոսքը... Արրահամ աղաւին խանվե
մեփե, ծո... վաստըկեցար բարթին... խմե խահվիդ...
անուշ ըլլմ..., շատ աղեկ կը խաղաք կոր... իս չիլտեմ
կոր խաղալ... ինչ ըսեմ տահամ:

— Մի յեփեր, ծո... բարթը շլմնցավ տահա:

— Չլմնցավ մի:

— Յեկուր, Տիմոթեոս աղա, սա բարթին լմնցուր,
կըսին ներկա գտնվողները:

— Պոշ բան ե, աղբար, գետեմ կոր՝ պիտի կորսըն-
ցնեմ... բայց ինչ ե նե, խաղանք մեղի ուրիշ թուղթ
բեր, ծո...

Թուղթերը կը փոխվին: Կակսին խաղալ:

— Կաղաչեմ, վոր կամաց կամաց խաղաս, Արրա-
համ աղա:

— Շատ աղեկ:

— Կտրե:

— Կտրեցի:

— Հրամմեցեք... խաղացեք,

— Առեք:

— Սա պոշ թուղթերը տանք, նայինք,

— Հրամմեցեք:

— Նայինք՝ այս անգամ ինչ քող պիտի բացվի:

— Դեռ հայտնի չե:

— Կարծես, միշտ միհնույն թուղթերն են:

— Քառո քող... քառասուն...

- Կենե սկսավ:
- Բւթսուն...
- Անդամ մը սկսի նե, վերջը չբերեր վոր...
- Ինծի ալ, կարծես, քի ինատընա աղեկ թուղթ կուգա կոր...
- Ատանկ ե, մեկ կողմին գեշ գա նե, մյուս կողմին աղեկ կուգա:
- Հարյուր...
- (Զեռքերը բանալով) Այս վորչափ թուղթ, աղբար...աւշչափ թուղթով մամիկս ալ կը խաղա իմին...
- Յերկու հարյուր հիսուն... զարմանալի յե այս թուղթը...
- Անանկ ե... անեմին աղեկ թուղթ կուգա, կըսեն, այս թուղթը ինծի գա նե, քսան չես կընար գրել դուն:
- Ճիշտ ե...
- Տիմոթեոս աղա, սա թուղթը նետե, կըսե Տիմոթեոս աղալին քովը նստողներին մին:
- (Թուղթերը նետելով և պոռալով) Մի խանվիք, աղբար, մի խառնվիք, պե, մի խառնվիք, պե... զաթը ինծի գեշ կուգա կոր, գուրսեն մի ըսեք... մի ըսեք պե... մի ըսեք պե... մի խառնվիք պե... քանի անդամ կըսեն մեկ խոսքը, աղբար... մի խառնվիք պե... նախք ասոր համար ե, վոր բազմության մեջ խաղալ չեմ ուղեր ա:
- Յերկու հարյուր հիսուն...
- Ի՞նչ յերկու հարյուր հիսուն պե, դուն ալ... թուղթը յես պիտի քաշեցի...
- Յես պիտի քաշեցի...
- Ի՞նչ շուտ յերկու հարյուր ըրիր...
- Հիսուն...
- Խաղեն խապար չունիս, ամա աղոթք ըրե, վոր

- թուղթ կուգա կոր, ինչու համար առաջ հիսունը չբացիք, վոր վերջեն ալ հինգ հարյուր ըսեցիք... չիտես կոր ամա... թուղթը կոդնե կոր...
- Հինգ հարյուր...
- Հինգ հարյուր մի... յելեք քովես քիչմը, ճանշմ... քիթս կը մտնեք կոր նե... ձեռքս շեմ կընար կոր յեր կնցնել, վոր թուղթ նետեմ. հեռացնեք քիչ մը... անդին գացեք... ենք... ինչ հինգ հարյուր ե, աղբար... հինգ հարյուրը ուսկից հանեցիք... քանիք աղջիկ յելավ... քանիք պաճախ յելավ... այս խաղին խելքս չողակիք կոր, վիսելամ...
- Յերկու հարյուր հիսուն...
- Վաթուն մ'ալ բանանք, նայինք...
- Հարյուր...
- Քան ալ մեկ բանանք... ոհ, ոհ, ոհ... ասանկ չնչին թվանշաններով... աղբար, յեկուր սա տեղերնիս փոխենք:
- Փոխինք...
- Թուղթ մո...
- Առեք..., յերկու հարյուր հիսուն...
- Դե կա այս թուղթերուն մեջ...
- Հաղար...
- (Կից մը տալով սեղանին). Վաղ անցիք, աստվածդ սիրես նե... ասանկ խայտառակությամբ խաղ նեաղացվիք... աղբար, թուղթը մվ տվավ:
- Դուն տվիր:
- Անանկ ե նե թուղթը դուն պիտի նետեցիք...
- Յես նետեցի յմ:
- Վոչ, յես նետեցի:
- Սխալ ե:

- Յես նետեցիւ;
- Վաչ;
- Այս;
- Վահ; Ո՞վ նետեց, աղաներ, դուք ըսեք;
- Իրավ վոր մոռցանք;
- Դուն նետեցիր, աղբար, իրավունք ունիս, հանցանքն իմս ե... իմս ե, վոր չգիտցած, չտեսած մարդուս հետ թուղթ կը խաղամ կոր...
- Ինչժե ծանր խոսքերս...
- Ի՞նչ ծանր խոսք, աղբար .. հանցանքն իմս ե, կըսեմ կոր... մս ալ ծանր խոսք եւ Յես այս խաղը խաղալուն կերպը չեմ գիտեր կոր, լմացավ... վայ, շունշանորդի թուղթ, վայ, վայ, անիծից արմատ թուղթ, վայ, այսչափ ալ ձախորդություն... կարծիս կը հալածե կոր զիս, աղբար... գիտնիս տակն անցնիմ, թե վոր մեյ մ'ալ այս պեղիքը խաղամ նե... աղբար, յես խաղի մեջ բնավ չեմ բարկանար... բայց անանկ պարագաներ կան, վոր մ'արդս ինքնիքմե կելաւ;
- Շատ իրավունք ունի Տիմոթեոս աղան, ըսավ ներկաներեն մին, ինծի ալ գեշ թուղթ մ'եկավ որ մը, մազ մնաց, վոր կոփի պիտի ընելի...
- Եթե այս թուղթն ուրիշի մը գար, մեծ փոթորիկ մը կելեր այսոր հոս, հարեց ուրիշ մը:
- Շատ քիսարությամբ լարվեցավ Տիմոթեոս աղան վիտակը, մրմռաց լերորդ մը:
- Եթե Տիմոթեոս աղային տեղ ուրիշ մ'ըլլար, Աբրահամ աղան շատուց ծեծը կերած եր:
- Շիտակը յես չեմ բարկանար, յերբ կորսնցնիմ, պատասխանեց Աբրահամ աղան:

- Հրամանքնիդ չեք բարկանար, հարցուց Տիմոթեոս աղան:
- Այս:
- Յետեւ յետեւ յերկու հարյուր հիսուն բանամ, հինգ հարյուրներ բանամ... հաղար բանամ, ու չես բարկանար հեմ... մանըմ, ձգենք հիմս պարապ խոսքերը... բարթին լմացավ:
- Զե տակավին:
- Լմացանք ուրեմն... նորեն թուղթ տանք... դուն տուր... վոչ, վոչ... ինծի տուր, յես տամ... չե, չե... դուն տուր... հեե... կեցիր աս անգամ յես տամ... տուր, աղբար, տուր, դուն տուր... ինչ կըսես...
- Վորոշումդ տուր:
- Դուն տուր, ինչ տամ, աղբար:
- Վորոշում, թե թուղթ:
- Տուր, թուղթը տուր:
- Կորե:
- Կորեցի:
- Առեք... կաղաչեմ միայն, վոր չբարկանաք...
- Չբարկանամ... բարկացող կա:
- Չիյտեմ... և յեթի պիտի բարկանաք, չխաղանք...
- Մի խաղար, աղբար, մի խաղար, զաթը դուք ասանկ եք, յերկու յերեք բարթի կը խաղաք, կը վաստեկք, հետո կը փախչիք: Ո՞վ բարկացավ... ըսենք, թե բարկացա, ինչ իրավունք ունիս բննանալու իմ վրա, վոր չբարկանամ, դուն իմ բարկությանս քեցին ես... գնա սըկեց... զաթը քեղի պես մարդու հետ խաղալը չվայլիր ինձի: Անպիտան:
- Աբրահամ աղան կը մտարերե Տիմոթեոս աղային ականջներեն քաշել բայց քաղաքավարությունը կը

կապե անոր ձեռքերը և թու յլ չըներ, վոր գոծեն Ի՞նչ
պիտք ունիմ, կը հարցնե ինքնիրեն, նեղվելու նույն-
իսկ այն բանին մեջ, վոր զվարձացնելու սահմանված
ե; Ի՞նչու այսպիսի համբերիմ:

Ամեն հաղթող, ինչ բնավորության տեր ալ ըլլա,
առավել կամ նվազ աչք կը գոցե պարտելվուն թերու-
թյանց, և այս խաղին մեջ Արքահամ աղան լուր համ-
բերությամբ միշտ *victis honoros*¹⁾ ըսալ Տիմոթեոս
աղալին:

Բայց Տիմոթեոս աղան չըսեր.

— Տեսմք, լեղբարներս, ի՞նչ գեշ թուղթ յեկալ,
իսս զարմացա, թե ինչպիս համբերեցի... ինձմեն չեր
այդ համբերությունը... լեթե աստված նույն պահուն
համբերություն չներջնչեր ինձի... չեցի կրնար զիմա-
նալ... վորչափ աղեկ կը խաղամ, այնչափ գեշ թուղթ
կուգա... կարծես թուղթերը վրեժ կը լուծեն ինձմեն...
և լերը այս վիճակին մեջ Արքահամ աղան «պիտի բար-
կանաս նե, չեմ խաղար», կըսե, լուր պայտաղիությունը
կը հարտանե:

— Ներեցք, կարծեմ թե պայտղի չեմ:

— Յես քեզի պայտղի չըսի, պայտղիությունի կը
հայունս ըսի:

Ներկայք կ'ակնարկեն Արքահամ աղային, վոր ձայն
չշանե:

— Մարդս քաղաքավարությունը ձեռքե ձգելու չե.
լեթե ուուն քիչ մը քաղաքավարություն կամ խիղճ ու-
նենայիր, այնչափ յերկու հարյուր հիսուն չեցիր բանար...
արքեքը խահին մ'ե, ամա ձարգկությունը բարայի

1) *Victis honoros* (լատին.) = պատե հաղթվածներին

վրա չե... ինչ վոր ե... աս ալ իսրայ մըլլա ինձի...
զաթը ձեղի պես մարզոց բարե տալլ հանցանք ե:

Տիմոթեոս աղան այս ատենախոսութիւնե լետքը,
վոր զբոսարանին մեջ պարտելով կըներ, վորս կենե
նախատալի նայվածք մը նետելով Արքահամ աղային
— Ի՞նչ տեսակ մարդ ե այս, կըսե Արքահամ աղան
ներկայից:

— Ի՞նչպես լեղավ, վոր անոր հետ խաղացիր, պա-
տասխանեց մեկը, սենք անոր բնավորությունը գիտենք
և բնավ չենք խաղար հետը, շատ անկիրթ մարդ ե:

— Զլլա, վոր ուրիշ անգամ խաղաս, ըսավ ուրիշ մը:
Վերջապես ներկայէ հետզհետե խոսք առին՝ հասկց-
նելու համար Արքահամ աղային, վոր այսչափով գոն
ըլլա:

Բայց քիչ մը թողունք ասոնք և Տիմոթեոս աղա-
մին տանը զառն առջե իրթանք ու մտիկ ընենք:

— Ի՞նչ եաս վիճակը... տունին մեջ վոչ կարգ կա,
վոչ կանոն, ամանները չեն լիցաված, սենյակները չեն
ավլված, առ լամպան ի՞նչ գործ ունի հոս, քապու-
ներն ի՞նչ գործ ունին հոս, վարագուրը պատաճ ե,
չեք կարեր, չոճուխին վարտիքները ինչտ հոս կախած
եք, ինչու համար պարապ տեղը կը վասեք կոր...

— Ի՞նչու կը պոռաս կոր, ձանը՛մ, ի՞նչ յեղար կենե,
պեղիք խաղացիր դարձաւ, ի՞նչ ըրիր:

— Բան մ'ալ չխաղացի, պեղիք մ'ե տոեր, անցեր
եք... միզզ ե ուզել, վոր ամեն բան կանոնավոր ըլլատ

— Ի՞նչ կա անկանոն... չոճուխին վարտիքները
քոնսովի վրա գնենք:

— Զիտեմ... վերեմ պիտի ըլլամ ձեր ձեռքեն:

— Տիմոթեոս աղա, Տիմոթեոս աղա, առ քաշվելու
բան չեւ:

— Պապանձեւ:

— Հայրիկ, հայրիկ...

— Լուս, շնչն...

Տղան կսկսի լալ:

— Լուս, հիմա ականջներդ կը փրցնեմ հան:
Կինը կոշիկները կը հագնի և դուրս կելնե:
Հետեխնք իրեն:

Եփտակ զբոսարանը կերթա, ներս կը մտնե և զբո-
սարանին տիրոջը ցած ձայնով հարցում մ'ընելեն և ան-
կից մեծ դժվարությամբ պատասխան մը կորզելեն
չետքը՝ կուղղվի Աբրահամ աղային...

— Խոսխոճաման մարդ ես յեղեր... փրասայի պես
պեխեր ունիս, չես ամչնար դուն, չխպնած, չես խպնիր,
չամչցած, չխտե՞ս, վոր իմ երիկս կը բարկանա, լերը
վոր կորսնցնե խաղին մեջ և խելքն ալ կը կորսնցնե,
չխպնած քեզի, իրավունք չունիմ հիմա քու պեխերդ
փրցնելու, պատասխան տուր:

Աբրահամ աղան արձան կը կտրի:

— Սըմոր նայե մեյ մը... կարծես թե ուրիշին կը
խոսիմ, չպատասխանես, իշու չափ յեղեր ես և խելքդ
չես ըներ կոր, վոր...

— Մխալեցավ, տիկին, սխալեցավ, մեյ մ'ալ
չըներ, կըսե զբոսարանին տերը:

— Յեթի անգամ մ'ալ իմանամ, վոր հետը թուղթ
խաղացեր ես, իրավ, միսերդ կտոր կտոր կը փրցնեմ:

— Մեյ մըն ալ չըներ, չըներ. Աբրահամ աղա,
բարտոն ըստ տիկինին:

— Բարտոն, տիկին, բարտոն:

— Այնը, գիտեք կոր քի կը բարկանա, տունը
ապակնուվրա կընե նե, քիչ մը սայլը ըրեք, մեղքցոք
ինձի, ինձի ալ մեղք ե, քա վայ պանա:

— Գնա, տիկին, գնա, հոգ մի ըներ:

Աբրահամ աղան բերանը չբանար—վորովհետեւ մար-
դիկ կան, վոր յերբ բարկանան, չեն կընար խոսիլ—
քիչ մ'ալ կը նստի և հետո կը մեկնի, սակայն ուխտ
կընե, վոր մեյ մ'ալ մեկու մը հետ չխաղա, մինչեւ վոր
թաղին թաղական խորհրդեն տրված վկայագիր մը
չներկայացվի իրեն:

* * *

Աթանաս աղան կոշտ մարդ մը ճանչցված եւ,
Բայց զի՞անք Աթանաս աղան ինչու համաց կոշտ
մարդ մը ճանչցված է:

Աթանաս աղային կոշտ մարդ մը ճանչցված ըլլա-
լուն գլխավոր պատճառն սա իւ, թե Աթանաս աղան
չհաճիր, վոր յերիտասարդները, մանավանդ իրեն ան-
ծանոթ յերիտասարդները չափազանց մտերժությամբ
վարդին յուր կնոջը հետ և հօժարություն ունենան
ամեն առժիվ ծառայություն մատուցանել յուր կողա-
կցին: Պետք չե սակայից հետեցնել սակայն, թե Աթա-
նաս աղան նախանձու ե կօմ Աթանաս աղան կնոջը
հավատարձությանը վրա կասկած ունի. բնավ յերբեք:
Աթանաս աղային, վերջապես, հաճո չթվիր. յերր յերի-
տասարդ միրմե ավելի անձնանվիրություն յույց կու-
տա յուր տիկնոջը: Պատճմու: Թերեւս ինքն աւ չգիտեր և
թերեւս կը վախնա իսկ պատճառ մը վնատելու:

Յեվ յեղավ, վոր գիշեր մը քանի մը ընտանիքներ ալ-
յելություն ըրին Աթանաս աղային: Աթանաս աղան,
ալր հյուրասիր, ընդունեց հյուրերն այն պատվով,
վորուն արժանի եյին: Քանի մը վալրկան հետո զուրը
զարնվեցավ, բացվեցավ, և քսանչորս տարեկան յերի-
տասարդ մը, Աթանաս աղային անծանոթ, ներս մը-
տավ սենյակեն և յերկու ծունկերն իրարու կցելով,
գլուխը մինչե գետինը խոնարհեցնելով՝ բարեց ներ-
կաները և թիկնաթոռի մը մեջ ընկրմեցավ, վուք
վուքի վրա դնելով: Այս յերիտասարդն, վորպես վեր-

Զեն հասկցվեցավ, Աթանաս աղային տունն այցելող
հյուրերուն միույն տունը գնացեր եր և անկից տեղե-
կանալով, թե Աթանաս աղային տունը գնացեր եյին,
պահապանի մառաջնորդությամբ Աթանաս աղային
դուռը զարկեր եր: Գիծ մը քաշենք հոս: Հորեղբար
մուռնեցի, վոր կըսեր. «մարդիկ կան, վոր յեթե քիչ
մը բարձրեն նվագարանի ձախն մը լսեն, կը հարցնեն,
«վոր կողմն ե յերկնից սանդուխար»: Յեվ այսոր իսկ
շատ կան այս կարգի մարդիկ, վորոնց գատուն կը վե-
րաբերեր նաև մեր յերիտասարդը: — Փակենք գիծը: Արդ,
հարկ չկա ըսելու, թե Միհրան — այսպես կանվանվեր
յերիտասարդը — առաջին անգամն եր, վոր կը մտներ Ա-
թանաս աղային տունը, բայց սենյակը մտնելուն պես
այնպիսի յեղանակավ մը սկսավ վարդիւ: վոր կարձես
թե Աթանաս աղային և անոր տիկնոջը հետ քառա-
սուն տարիե ի վեր կը տեսնվեր: Այսպես, հազիր քա-
նի մը վարդկան մնաց թիկնաթոռի վրա և ահա վուք
յելավ և մոտենալով Աթանաս տղալին տիկնոջն, վոր
աթոռի մը. վրա նստած եր՝

— Կաղաչիմ, տիկին, ըսավ, թիկնաթոռի վրա նըս-
տեցեք:

— Հոգ չե, հոս աղեկ եմ:

— Տիկին, կաղաչիմ:

— Շնորհակալ եմ:

— Վատվընիդ պագնեմ, խոսքս մի կոտրեր, ձեր
ժամանակ մարմինը փալտի վրա հանգչելու սահման-
ված չե:

— Պարոն, առավ անդին Աթանաս աղան, տի-
կինը հոն հանդիսու ե, դուք նստեցեք ձեր թիկնա-
թոռը և անհանդիսու մի ըլլաք տիկնոջ համար:

— Այս, այս, հոս շատ աղեկ եմ, հարեց տիկինը:
— Վոչ, վոչ, ըրավ Միհրան, կարելի չե, վոր հոս
թողում զձեզ, և Աթանաս աղային կինն թևեն բռնե-
լով, առավ թիկնաթուր տարավ և հոն նստեցուց:

Աթանաս աղան չհաճեցավ այս արարողության
վրա, բայց քաղաքավարությունը խնդրեց, վոր յուր
ահաճությունն ինքը միայն զգա ու գիտնա:

Աթանաս աղան հնագունդեցավ քաղաքավարության
և սերանը չբացավ, սակայն կը ջանար հնարք մը գըտ-
նել իմանալու համար գոնե, թե ով եր այն չերիտա-
սարդն և ինչու համար յեկած եր: Աթանաս աղային
այս հետաքրքրությունը բարեբախտաբար չուշացավ
փարատվելու: Հյուրերին տիկին մը տեսնելով, վոր Միհ-
րան Աթանաս աղային հետ վորպիս ծանոթի մը հետ
կը վարփեր, հարցուց անոր.

— Միհրանիկ, շատուց կը ճանչնաք Աթանաս աղան:
— Յես չեմ ճանչնար զինքը, պատասխանեց ան-
միջապես Աթանաս աղան:

— Յես ալ չեմ ճանչնար, հարեց Միհրան, բայց
ուրախ եմ, վոր ձեր չնորհիվը ճանչցաւ Ձեզի գնացի,
տիկին, և սպասավորեն իմացա, վոր հոս յեկեր եք,
յես ալ յեկա՝ մեր բարեկամներուն բարե-
կամները մեր ալ բարեկամներն են ոսելով:

— Աթանաս աղա, հարեց տիկինը, Միհրանիկը
յեղբօրս աղան եւ Միհրանիկ, Աթանաս աղային հետ
յեղբօր պես կը տեսնվինք, տիկինն ալ Աթանաս ա-
ղային տիկինն եւ աղնիվ տիկին մ'ե, Աթանաս աղան
ալ բարի մարդ մ'ե:

— Շատ աղեկ, պատասխանեց Աթանաս աղան:
— Ինքինքս բարեբաղդ կը համարիմ Աթանաս ա-

ֆենտիին և անոր տիկինովը հետ ծանոթանալում համար,
ըստ Միհրան և գրպանեն ծխախոտի առուփն քաշե-
լով՝ սիկարա մը հրամցուց Աթանաս աղային կնոջը:

— Շնորհակալ եմ, չեմ գործածեր:
— Տիկին, իմ ծխախոտս առաջին աեսակեն եւ:
— Շնորհակալ եմ:
— Առեք, կաղաչեմ:
— Բայց չեմ ծխեր:
— Յեթե կուգեք, ավելի բարակ շինեմ:
— Բարսության վրա չե, սովորած չեմ...
— Մի մերժեք:
— Զեմ ուզեր:
— Զե մի ըսեր:

— Պարոն Միհրան, տիկինը սովորություն չունի
սիկարա ծխելու, կաղաչեմ, մ'ո ստիպեք զինքը...

— Աթանաս աղա, շատ մեղմ ե իմ ծխախոտս ա-
ռեք, տիկին, առեք, Աթանաս աղա, կաղաչեմ, հրա-
ման ըրեք ձեր տիկինովն, վոր չմերժե:

— Կարծեմ ըսինք, թե չգործածեր:
— Կը խնդրեմ, բսեք, վոր առնե, ձեր խոսքը շը-
մերժեր... ծխախոտս ընտիր ե... մասնավորապես տի-
կիններու համար ե... անուշ ե... կաղաչեմ, հրաման
ըրեք, վոր առնե:

Տիկինը խնդրել չերկարելու համար կառնե սիկարը:

Միհրանը քիչ մը ներկայից խոսակցությանը կը
խառնվի, հետո հայելիին առջև կերթա և ձեռքով մա-
զերը կը շտկի: Սենյակին մեջ փոքրիկ պատուտ մը
կընե՝ Ֆառուս թե ու սթեն¹⁾ քանի մը կտորներ մըու-

¹⁾ Ֆառուս—ուղերա, վոր պատուտ և քրանսական
կոմունիտոր Շարլ Գունոյի (1818—1893) դրչին. ուղերայի նույթը
վերցված ե գերմանացի մեծ բանասեղծ Գյոթելի (1749—1832)
«Ֆառուտ» պումայից:

մռալով և նորեն կը դառնա Աթանաս աղային տիկնոջը։
— Ահ, տիկին, կըսե, կարմքեր եք, յեթէ նեղվեցաք, պատուհան մը բանամ։

— Հարկ չկա։

— Կաս կարմիր կտրեր եք, տիկին, կը քրտնիք վերջը կը մարք, հիվանդ կըլլաք։

— Հոգ մի ընեք։

— Չե, չե, պիտի բանամ պատուհան մը։

— Չուղեր։

Տիկինը նեղություն կը զգա Միհրանին ընթացքին։ Աթանաս աղան, վոր բնագ ունկն չդուրերու խոսակցություն և միայն Միհրանը կը դիտե, կը նեղվի նույնպես։ Բայց ճար չկա, համբերելու լի, մինչև վոր վտանգն անցնի։

Միհրան կը շարունակի լուր ընթացքը։

— Չըլմ, վոր գլուխնիդ ցավի, տիկին։

— Բան մը շունիմ, ճանըմ։

— Թովս աղեկ լավանատ ունիմ, տամ քիչ մը, ոչ շփեցեք ձեր ճակատը։

— Գիտու ցավ չունիմ։

— Պարոն Միհրան, չդաս քովիրնիս նստիլ ոչ խոսելու, ոգնեցաք պատահելով, կըսե անդին Աթանաս աղան։

— Գամ պիտի, տիկինն անհանդիստ եռ քիչ մը լավանատ տամ, կըսեմ։ Բացեք քիչ մը, տիկին, ձեր թաշկինակը սանկ քիչ մը դնեմ, քանի մը կաթիւ հոտվացեք, քիչ մ'ալ քիթերնիդ քաշեցեք։ Ասոք հոտը շուտ չելլար, ամիսներով կերթա։ Ի՞նչ անտանելի ցավ եռ պլոտ, ցավ, իմ գլուխս ալ յեկած եռ անգիտամ։

— Հարկ չկա։

Տիկինս հնագանդելով ակնարկին, զոր Աթանաս ազգան ըրագ իրեն, տեղին կելնե ու երկանը քով կերթա կը նստի։

— Յես կերթամ, հորաքուլը, ըսագ Միհրան բարկութամբ այն հնող, վոր քիչ մ'առաջ ներկայացուցած եր զինքն Աթանաս աղային։

— Ի՞նչնու։

— Վերջը կըսեմ։

— Ի՞նչ յեղար մեկեն ի մեկ, Միհրանիկ։

— Ենսյուլթ... ենսյուլթ... յես ենսյուլթի չեմ կըրար զիմանալ։

— Ի՞նչ յեղավ, վոտքդ պագնեմ, Միհրանիկ։ Ենսյուլթ... ենսյուլթ... և կողեմ, վոր գուն ոլ հետրու զաս... ինձի ենսյուլթ հեե... ենսյուլթ հեե... յես մարդու զավակ հմ... Աթանաս աղա... ընկերությանց մեջ շատ մտած հմ... ինձի հեե... ենսյուլթ հեե... ենսյուլթ հեե... հեե... ենսյուլթ... ինձի... ինձի ենսյուլթ... ինձի ենսյուլթ... ինձի ովես մարդու ենսյուլթ... միաս չունի... յել սիրելի հորաքուլը, յերթանք... ենսյուլթ հեե... շուտ ըրե, ինձի հեե... շալըդ դիր... ինձի ենսյուլթ հեե... առունելնիս յերթանք... միաս չունի, Աթանաս աղա...։

— Ի՞նչ ըրին քեզի, պարոն Միհրան։

— Անանկ երա, հասկնանք զործո, սին քանի մը պլուխնիր, վոր քիչ մը ծանը ըլլալ կը թվիւն։

— Տիկինն լավանու պիտի տալի, վոր ճակատը շփե և հոտվացա... տիկինը մերժեց և ամուսնուն քովը նստեցավ... ասկից ավելի ի՞նչ ծանը ենսյուլթ կընալ զգայուն սրտի մը։

— Յես ասոր համար չդնացի և յեթե լսվանտան

մերժեցի, պատճառն այն եր, վոր գլխուցավ չունելի, պատասխանեց տիկինը:

— Տեսաք մի լա, սխալ հասկցողություն, հաջողնակիմ:

— Հատ սխալ հարեց Աթանաս աղան՝ միմիայն փակելու, համար միջադեպ մը, վորուն վրա բախ մարտասանությունն իսկ իրեն նեղություն կը պատճառեր:

— Դուն ալ կը նայիմ, քի խենդ ես, պարոն Միհան, պոռաց անդին հորաքույրը:

Ամենքը խնդացին:

— Տղմ լիս, ինչ ես... Աթանաս աղան անանկ մամրդ ե... տիկինն ենսկությ ընող կնիք ե... խումրիի պես կենճ ե նե... ըերան ունի, լեզու չունի... թուափ տղա մ'ես... հայտե, յելք, քատրիլ մը դարձուցեք:

— Անանկ ե նե, ներումն կը խնդրեմ. լիս, շիտակը, հասկցա, վոր Աթանաս աղան աչք ըրավ, ու տիկինն ալ քովես յելավ:

— Հայտե, յելք, քատրիլ մ'ըրեք:

Միհրան կընարե յուր պարունին և կը հայտնե դայն.

— Մատամ Աթանաս իմ տամաս ե:

Դարձյալ կրծատումն ատամանց Աթանաս աղակի: Կակսին քատրիլի: Աթանաս աղան մեկ անկյունը քաշված՝ Միհրանին վոտներուն ու ձեռներուն շարժանցը կը հետեւ աչքերով: Քատրիլին բոլոր ձեռը կը կատարվին, կսպառին: Միհրան կը ստեղծե նորանոր ձեռը, վորոց տրամադրության համեմատ քավաի յեները տաման երուն հետ անանկ շղթաներ կը կազմեն, վոր աղեկ տպավորություն չեն ըներ Ա-

թանաս աղակին վրա: Շղթաներն էերթալով կերթան և կնճռալի էերկույթ մը կառնեն: Աթանաս աղան հաճուքք չզգար այն շղթաներեն, բայց հաճուքք չզգալը չկրնար հալտնել՝ վախնալով, վոր հնոյուլիթ մ'ալ ըրած կըլլա, բայց հաճուքք չզգալն ալ չուզեր շարունակել, ուստի պլարողներուն ուղղելով խոսքը կըսե:

— Զնոպնեցմք, չնոպնեցմք, հիվանդ պիտի ըլլաք, յեկեք նստեցեք, քիչ մ'ալ խոսինք: Քատրիլին ալ բան մ'ըլլա պարի:

— Մենք չնոպնեցանք, չնոպնեցանք կը պատասխանեն:

— Ան ձեւերն հեռվանց շատ տձե կերկան կոր, քատրիլի չեն նմանիր կոր... թեմբնիդ պիտի ցավցընեք... ալաչափ խաղացիք, հերիք ե... կենե գուք գիտեք, ամատ...

— Աթանաս աղան, անհոգ յեղիր, մենք չենք ցավցներ, չենք ցավցներ մենք:

— Քրանեցաք, վերջը պիտի մօիք:

— Զքրանեցանք, չենք մսիր:

Աթանաս աղան նկատելով, թե չհաջողեցավ այս հնարքը, հրաման կընե, վոր քոն յաք բերեն: Քոնաւքը կը բիրվի:

— Մեյմեկ քոնյաք խմեցեք:

Պարողներն նախ կը մերժեն և ապա, Աթանաս աշոյին թախանձանաց վրա, կընդունին քոնյաքը, և այս յեղանակավ կը վերջանա պարը: Պարը կը վերջանա, բայց Աթանաս աղան «անձրկեն փախչիմ» ըսելով՝ կարկուտի կը բանվի: Միհրանն Աթանաս աղակին տիկինը թեմ կառնե, ու կսկսին սրահին մեջ մեմել: Աթանաս աղան կը կանչե տիկինը: Միհրան

թող չտար՝ առարկելով, թե քավալի ելի մը նվիրական պարտականությունն ե յուր տաման պարտցընել, զի մի քրտինքն պաղի և հիվանդություն բերե՛։ Միհրան քառորդի մը չափ պարտելին հետո Աթանասապային տիկնոջը հետ՝ թիկնաթոռի մը վրա կը նըստեցնե զայն և իրար կանցնի մուշտակ մը գտնելու և տիկնոջը կանակը դնելու համար։

— Քյուրք մը, քյուրք մը, պղտիկ քյուրք մը... տիկինը չը մսի... Աթանաս աղա, տիկնոջ քյուրքն մը ե...

— Սենյակը տաք ե, կը պատաժխանի Աթանասապան։

— Ի՞նչակես տաք... չըլլար, եֆենտիմ, չըլլար... ի՞նք բարտերու բերեմ... և յուր թիկնոցը կը բերե՛։

— Զեմ ուզեր, չեմ ուզեր, կըսե տիկինը։

— Կաղաչեմ, տիկին, պարե հետո զգուշություններ պետք ե... ի՞նչ վնաս ունի... սանկ քիչ մը շարժեցեք, վոր դնեմ կանակնիք։

— Թող մնա, չուզեր, շնորհակալ եմ։

Միհրան մտիկ չըներ, յուր կամքը կը կատարե՛։

Աթանաս աղան չգիտեր, ինչպես մեկնել Միհրանին այս վարմունքը կը խորհի, կը դատե, կը տրամարանե, բայց չուզեր լեզրակացություն մը հանել։

Մեկնելու ժամը կուգաւ Հյուրերն վրաք կելնեն, մնաք բարով վները, մեղի ալ հրամեցե ները իրարու կը հաջորդեն Ասդին ալ Միհրան Աթանասապային տիկնոջը ձեռքը ափին մեջ առած, կը թոթվեռ կը թոթվե զայն հազար ու մեկ հարդանքներ արտահայտեռ տիկնոջ։

— Շատ լերջանիկ լեզա՞ զձեղ ճանչնալու պատիվը

վայելելու համար, ուր եր, թե շատոնց ճանչցած բլույի զձեղ, տիկին, վոր գեղեցիկ սեռին մեջ կը փայլքը, վորպիս ակն պատվական, կը հուսամ, թե այսուհետեւ հաճախ զձեղ տեսնելու բարերախտությունը չպիտի զլանաք ինձ... դուք ալ հրամմեցեք հորաքրոջն տունը... ժամանակ կանցնենք... միջադեպին համար ձեր ներողությունը կը խնդրեմ... վերստին տեսնը վինք, լեթե լավանտան հավնեցաք, լավանտա ին շիշը հոս թողում... բայց չե, ուրիշ մը կառնեմ ձեզի համար... մնաք բարով... մհծաղես դոհ եմ այս գիշերը վան զրոսանքեն... ներցեցք, յեթե պակասության մը մեջ դոնչիցա... մնաք բարով... կսպասենք ձեզի... հրամմեցեք... կեցեք բարյավ...

Հյուրերը կը մեկնին, ինչպես նաև Միհրան։

— Աս ի՞նչ պուլաշը վեզեկ և յեղեր, կըսե Աթանաս աղան տիկնոջը հյուրերուն մեկնելին չետքը։

— Դուն ալ կը նալիմ, վոր թոհափ մարդ մ'ես, ոլուլաշը և նե, մեղի ի՞նչ, պոշ բաներու համար սիրու կը հատցունես։

— Բրածները վալուն բաներ ելին։

— Ե, ի՞նչ ըրափ չոճուխը, գլուխնուս լելավ, նըստեցմավ. քիչ մը վեզեկ և յեղեր, ի՞նչ ընենք։

— Կը նեղվիս կոր տեյի, բարկացա յես։

— Ե, քիչ մը նեղացա առջի բերան, բայց վերջը վարժվեցա։

— Վոչ խիպ ունի, վոչ ամոթ։

— Խիսի, առօթի բան չկա հոս, չեմ հասկնար, ինչու այսչափ կը բարկանաս։

— Անը համար բարկացա, վոր քեզի սըխընթը կուտար կոր... չե նե, ինչու պետք իմին... բայց կը

վայլ, վոր յերիտասարդ մը ուրիշի կնոջը հետ այս-
չափ թերթիփսիդ տեսնվի... տեսնողները ծուռ մտքի
կը տանիմ. յես ալ յեթե ուրիշի մը կնոջ հետ անոր
այսպես վարվիլ տեսնամ, ինչ մեղքու պահեմ, կը
գալթակղիմ...

— Պարի տղան մտքեն անցունե անանկ բան մը...

— Սանքի ուրիշի կնոջ մը հետ այսպես վարվիլ
տեսնամ նե, կըսեմ կոր յես, դուն չհասկցար... բայց
ինչ վոր ալ ըլլա, վայուն բան չե:

— Պոշ խոսքե՞ր...

Աթանաս աղան խնդիրը փափուկ կը գտնե և կը
լու:

Հետեալ գիշերն Աթանաս աղան և յուր տիկինը
կընթրելին: Հանկարծ Միհրան յերեցավ անոնց:

— Բարիկուն, տիկին, բարիկուն, Աթանաս աղա,
ձեզի առնելու համար յեկա, այս գիշեր հորաքրոջն
տունը պիտի յերթանք՝ քիչ մը ժամանակ անցունելու:

— Շնորհակալ եմ, բայց ժամանակ չունիմ այս
գիշեր, պատասխանեց Աթանաս աղան:

— Անկարելի յե, մինչև վոր ձեզի չառնեմ, չեմ
գերթար:

— Սարսափելի սանձի մը ունիմ:

— Առ ուրիշ:

— Այն, սարսափելի սանձի մը:

— Իրավունք ունիք:

— Այն, սարսափելի սանձի մը:

— Առոր ըսելիք չունիմ:

— Այն, սարսափելի սանձի մը. ինչ ե, չի յտեմ:

— Հանգիստ ըրեք ուրիմ այս գիշեր:

— Այն, սարսափելի սանձի մը, նստելու խակ ժա-

մանակ չունիմ, յերթամ պառկիմ պիտի, սարսափելի
սանձի մը:

— Պացեք, պառկիցեք, յես տիկինը կառնեմ, կը
տանիմ, հոգ մի ընեք, վերջն ալ կը բերեմ. Աթանաս
աղա, դուն հանգիստը նայի:

Ան ալ չկրնար գալ, ան ալ սարսափելի գլխու ցավ
ունի:

— Դուրս յելլալուն պիս գլխու ցավը կանցնի:

— Զանցնիր:

Տիկինը ձեսնպահ ե:

— Գոնե տիկինն տոնեմ, տանիմ պիտի:

— Զըլլար:

— Իլլեքի պիտի տանիմ, վորոշված ե: Կը սպասին
կոր նե...

Խեկարի¹⁾ հշերն չեն բավեր, յեթե պատմել
սկսինք Միհրանին թախանձանքը, Աթանաս աղային
բարկությունն և տիկինջն անտարբերությունը. ուստի
փութանք հայտնելու, թե Աթանաս աղան ճարահատ-
յալ ստիպվեցավ համակերպիլ Միհրանին հրամանաց.
Միհրան մեծ փույթ և յեկանդ ցուց տվալ, Աթա-
նաս աղային տիկինջ թուալեթի միջոցին յետեն
հայելի բարձրացուց, վերարկուն բռնեց, վոր հագնի,
կոշիկները հագցուց և անոնց խրացքը կապեց: Աթա-
նաս աղան չճաթեցավ: Միհրան փողոցն ալ մեծ հոգ
տարավ, վոր տիկինը ցեխոտ տեղեր չկոխե, շատ ան-
գամ թեր մտավ, քանի մանգամներ ձեռքեն բռնեց
ու ջուրերու հոսանքեն անցուց՝ ցատկեցնելով զայն:

¹⁾ Ետիկար—հայտնի յերգիծբանական ամսագիր եր, վոր Պոլ-
սում հրամարակում եր Հ. Պարոնյանի խմբագրությամբ 1884—
1888 թ թ.

Աթանաս աղան ալ ինքզինքը հոսանքի տված, կը հետփեր անոնց՝ յուր անձին իբրեք քառորդն ուղելով։ Վերջապես հասան Միհրանին հորաքրոջը տունը, Միհրան ուղեց Աթանաս աղալին տիկնոջ լաստիքները հանել։

— Ի՞նչ կընեք, պարոն Միհրան, թող տվեք, վոր հանե լամիիքները, զահմեթ մի ընեք, շնորհակալ ենք, ըստ Աթանաս աղան՝ վերջին բառերը շեշտելով։

— Ի՞նչ վնաս ունի, եփենակմ, մեր պարտականությունն եւ։

— Բնավ ձեր պարտականությունը չե, կաղաչեմ, ինքը թող հանե։

Տիկինը հանեց լամիիքներն, ու վեր լեբան։

Տան տերերն ու հուրերը բարեներ փոխանակեցին իրարու հետ, հետո սկսան խոսակցիլ այլ և այլ նյութերու վրա, քանի մը տիկիններ և որիորդներ բամբասեցին, հետո քիչ մ'իրգեցին, քիչ մ'ալ պարեցին — Աթանաս աղալին տիկինը չպարեց — և վերը ատին սկսան խոսակցութան։ Պետք չե մոռնալ սակայն, թե Միհրան մերթ ընդ մերթ Աթանաս աղալին տիկնոջ քով կերթար և ձեռներն շփելով այնպիսի շարժումներ կըներ, վորք կրնացին թարգմանվիլ այսպիս։ «Պատրաստ եմ ձեզի ծառայելու», Տիկինն ալ ժայխով մը կը պատասխաներ. «Պետք չունիմ ձեր ծառայութան»։ Իրերն աւապես կը շարունակիցին, լերը հանկարծ պատիկ միջաղեալ մը իրաց վիճակը ծանրացուց։

Միհրանին հորաքուրըն, վոր Միհրանին քով նըստած եր բազմոցի մը վրա, հրավիրեց Աթանաս աղալին տիկինն, վոր յուր քովը նստի։ Տիկինն ընդունեց իրավերը, բայց տեղը քիչ մը նեղ եր։ Ամուսիններ

կան, վոր չեն ուղեր իրենց կանանց նեղ տեղեր նըստիլը։ Շւստի»

— Անհանգիստ լեզաք հոն, պարոն Միհրան, պուաց Աթանաս աղան տեղեն լենելով, չեկեք իմ տեղը նստեցեք։

— Կաղաչեմ, Աթանաս աղա, վոտքդ պագնեմ, արեգ սիրեմ, անհանգիստ չեմ, շատ աղեկ եմ հոս, նստեցեք տեղերնիդ։

— Իրավ, նեղեցի զեկեղ, պարոն Միհրան, հարեց Աթանաս աղային տիկինը։

— Ամենին, աստված վկա, վոր չնեղեցիք ինձի, հորս հոգվուցն վրա կերպում, վոր շատ հանգիստ եմ, կենճութանս խերը չտեսնամ; թե վոր հոնգիստ չեմ, ինչու պարասի խոնքեր կընեք. աստվածդ ուրեմ, նըստե տեղդ, Աթանաս աղա, չե նե, մել մ'ալ լերսոդ չեմ նայիր։

— Ինչու սիրու կը հապնեք, Աթանաս աղա, նեղին նե, թող լելլա, տղա չե յա։

— Իրավ վոր նեղեցի, ւես կելլամ. ըստ Աթանաս աղային կինը ու յելավ երկանը քով նստավ։

— Տեսմք մի, դարձյալ ենսրւլթ, ենսրւլթ և ուս ինձի, պուաց Միհրանը։

— Աթանաս աղա, իրավ վոր այս քիչ մը ենսյուլթ եւ, կրկնեցին քանի մը տիկիններ։

— Ենսյուլթի ինչ կա, հարցուց Աթանաս աղան։

— Ի՞նչ ենսյուլթ կընեց Աթանաս աղային տիկինը։

— Մենք գիտենք յա, բայց մեր տունը պատվաւ վոր ե…

— Քանաբեէի վրա լերեք հոգի նստեր ելին, տեղ

Հկար, տիկինը մազ մնաց, վոր Միհրանի ծունկին
վրա պիտի նստեր և նեղեր պիտի տղան:

— Թող նեղեր, քեզի չպիտի նեղեր ա, անոր ծուն-
կին վրա պիտի նստեր, տղա չեր ա, թող յելներ,
թե վոր ծունկը դավեր... ասանկ բաներ չվայլեր,
Աթանաս աղա, ձեր ըրածն ամենուս ալ կը դպչի,
ներեցէք:

— Բայց բան մը չըսինք, կարծեմ:

— Կարծեմ, թե ենսյուլթի բան մը չեղավ, ըսավ
Աթանաս աղային տիկինն՝ ուժ տալով յուր երկանը:

— Յեթե չըրիք, կուգաք նորեն քովս կը նստիք,
վոր մինք ալ հասկնանք, թե ենսլուլթ ըրած չեք,
ըսավ Միհրանին հորաքույրը:

— Հարկ չկա, ալ յերթանք պիտի:

— Տիկին, քիչ մը նստեցեք, վոր սա խոսքը գոցվի:
Տիկինը կերթա, քանի մը վայրկան կը նստի՝ այս
անգամ Միհրանին հորաքրոջը տալով մարմնույն
ծանրության մեծ մասը:

— Այսչափ ալ լրություն կենացս մեջ տեսած
չունեի, ըսավ Աթանաս աղան ինքնիրեն:

— Ենսյուլթի խնդիրն ալ վերջացավ, ըսավ Միհրան
և տեղեն յելավ:

Քանի մը տիկիններ իրարու փսփսացին.

— Աթանաս աղային համար կոշտ և կըսեն նե,
իրավունք ունին յեղեր:

— Ե՞ն, յերթանք, ըսավ Աթանաս աղան և վոտք
յելավ:

Տիկինն ալ մնաք բար ովները լմացուց, և երիէ
կնիկ դուրս յելան:

— Տեսմը մի խալտառակությունը:

— Ինչուդդ պետք:

— Վրան նստելու պես կընես կոր տե, տեղեն չե-
քերար կոր սրիկան:

— Զե, ձանըմ, չե, սրիկա չե, միամիտ ե:

— Միամիտ և մի, լիրբին մեկն ե:

— Տեսմը, վոր անանկ չե գործը:

— Անանկ շի տե, ինչպես և գործը:

— Աս զեղեկին ով կարեորություն կուտա. գացի
նստեցա, զրջազգեսաս ծունկին դպավ քիչ մը, ինչ
մնաս ունի, ով կը սեպե ան թեթեր. բայց զուն մե-
կեն ի մեկ խուզանմիշ կըլլաս, պարապ տեղը խոսք կը
հանես:

— Միամիտ և յեղեր...

— Միամիտ և յա:

— Յես անանկ միամտութենեն չեմ ախորժիր և
մեյ մ'ալ դուռ չեմ բանար այդ անառակին:

• Արդարե, կան կանալք, վոր միամտության կը վե-
րագրեն տմհնեն ավելի հստակ և զուտ անառակու-
թյունները, բայց Աթանաս աղային տիկինն կանանց
այդ գասուն չվերաբերիր, միայն թե առանց գիտնալու-
թեթե հաճուլքներ կը պատճառե յերբեմն ուրիշներուն,
բայց յերբ համոզվի, թե դիմացինին միտքը ծուռ ե,
անմիջապես կալսի զգուշանալ, վորպես այս անգամ
կը համաձայնի Աթանաս աղային՝ յուր տանը դուները
փակել Միհրանին, վոր դեռ կը շարունակե շաբաթը
յերկու յերեք անգամ անօնց զուռը զարնել. Աթանաս
աղան վորոշած ե, կըսեն, Միհրանին զլուխն ի վար
չուր թափել պատռհանեն, յիթե որ մ'ալ իրենց զուռն
ափ առնեն Յեկ տուշը վոչ են սյուլթ և և վոչ ալ
քաղաքավարության հակառակ:

* * *

Նահապետ աղան սուրբանդոտի ին հասնելուն կսպասեց վորքեմ կըսին, չորս աչքով: Մեծ հույս ուներ սուրբանդակեն ստանալ գումար մը, վորով պիտի վճարեց պղտիկ փոխանակագիր մը: Սուրբանդակեն ուշացավ Նահապետ աղան զիմեց ծանոթներու և բարեկամներու և հաջողեցավ փոխ առնուլ գումարն, վորուն պիտք ուներ: Սիրտը հանդարտեցավ, Գրասեղանին առջե անցավ և կը սպասեր, վոր փոխանակագիրը ներկայաց վեր իրեն: Սակայն մարդուն չներկայանար միշտ այն, վորուն կսպասե... չորս յերեկի վաճառակամներ Նահապետ աղալին սենյակը մտան:

— Բարե, Նահապետ աղա:

— Աստուծու բարին:

— Բարե, մուսլու Նահապետ:

— Աստուծու բարին:

— Բարե, Նահապետ եֆենտի:

— Աստուծու բարին:

— Բարե, Նահապետ պեյ:

— Աստուծու բարին:

Նահապետ աղան կը հրամցնե հյուրերը աթոռներու վրա բազմի և խանվե ապալուելու համար դուրս լելու միջոցին կաղայմի հյուրերեն տեղը նստիլ:

— Մեզի համար և նե խահվե, չենք ուզեր:

— Արդեն խահվե չեմ խմեր լես:

— Յես ալ շատ խմեցի:

— Յես ալ կերակուրի պիտի յերթամ ճիմա:

— Գիտե՞ք, Նահապետ աղա, մեր հոս գալուն պատօնութիւն:

— Ի՞նչպես գիտնա:

— Եգիստի, ըսե՞ք իրեն:

— Մարդասիրական գործ մ'ե, վոր հոս հրեց զմեղ:

— Կրթասիրական նպատակ մը:

— Ազգասիրական զգացում մը:

— Զուտ մարդասիրական:

— Կրթասիրական միանգամայն:

— Յեվ միանգամայն ազգասիրական:

— Յեվ կը հուսամ, թե Նահապետ եֆենտին չպիտի մերժե մեր առաջարկը:

— Նահապետ պեյն ահ տեղվաճքը չե:

— Ուր եր, թե ամենքն ալ մուսլու Նահապետին պես ըլլային:

— Նահապետ աղան աղա լի, բայց պեյի զգացում ներ ունի:

— Ինչու պեյ չըլլա:

— Նահապետ աղալին պես աղզը սիրող մարդ խիստ քիչ կը գտնվի աղզին մեջ,

Նահապետ աղան, համեստ մարդ, կը շվարի և միայն ձեռքով և շարժումներով կը հայտնէ, թե կը չափազանցին:

— Քանի՞ տոմսակ տանք Նահապետ աղային:

— Ի՞նչ գիտնամ, առ նվազն տասը հատ տալու լեւ:

— Տաս հատը քիչ եւ:

— Նահապետ պեյը աղզող մարդ եւ:

— Ի՞նչ տոմսակ եւ:

— Պարահանգեսի տոմսակ եւ, Նահապետ եֆենտի:

— Քանի՞ զրուշ ե հատը:

— Մեծ բան մը չեւ:
 — Չնչին գումար մը:
 — Ուրիշ ազգերուն տոմսակներուն պէս սուղ չեւ:
 — Ազգատիկ ազգին աղքատիկ տոմսակ:
 — Քանի՞ գահեկան եւ:
 — Բան մը չեւ:
 — Պատիկ գումար մը:
 — Հատը մեկ վոսկի չեւ...
 — Մեկ վոսկի...
 — Այս, բայց պարտ և գիտնալու թե անդղիական
վոսկի չեւ, ոսմանչան եւ:
 — Տվեք, տվեք, տասը հատ Նահապետ աղալին:
 — Տասը հատ... կը ծաղրեք կոր զիս:
 — Կաղաչեմ, տուանկ մի խոսիք... կը վիրավոր-
վինք... ինչու ծաղրենք զքեզ:
 — Ազգասիրական գործ մը կտտարելու համար
միայն իկած ենք հոս:
 — Շնորհակալ եմ, բայց...
 — Բայցի մայցի գործ չկա... տասը տոմսակ ձեզի
համար քիչ եւ, շատ չեւ...
 — Տասն վոսկի մեկ միծ բան չեւ:
 — Մանավանդ յերբ եփենտիներու պես անձեր կը
ներկայանան ձեզ. անոնք տասը տան նե, դուն քսան
առնելու իս, վորպեսզի եփենտիները պղտիկ չմնան
ու քաջալերվին:

— Շնորհակալ եմ, բայց իմ կարողությունս չըներեր
մեկ վոսկի տալ պարահանգեսի տոմսակին:

— Զնիքը... բնչպես չներեր... մենք բիացայի
մարդ ենք, գիտենք, թե քանի տոմսակ առնելու կարող
ես... տասը հատ առաջարկեցինք, վոր չմերժվինք:

— Զեմ կընար...
 — Քուզում Նահապետ աղա, պարապ խոսքեր մի
ըներ:
 — Վոտքդ ոլազնեմ, Նահապետ եփենտի, յերկար
մի ըներ, ուրիշ տեղեր ալ պիտի յերթանք, գործ ու-
նինք:
 — Տնւր տասը հատ...
 — Նահապետ աղա, տնւր տասը վոսկի:
 — Զեմ կարող... բայց խաթըրնուդ համար հատ մը
առնեմ:
 — Հմտ մը... ձեզի չվայլեցուցի շիաակը...
 — Մեկ հատ մը... չորս հոգի վոտքդ գանք, և մեկ
հմտ մը...
 — Միմին մեկ հատ... մեզի թշնամանելու համար
ասկից ուրիշ միջոց մը չեյիր կրնար գտնել
 — Մեկ հմտ... մեկ հատին խոնքը կըլլա, յերք
խեղճ, աղքատ և վորք տղայոց բարուական զարգաց-
ման վրա յե խնդիրը:
 — Կարողություն չունիմ առնելու, կրկնեց Նահա-
պետ աղան կարմըրելով:
 — Պարապ խոսքեր:
 — Զեեղ ժամավաճառ կընեք:
 — Զեյի հուսար, վոր ընդդիմանալիք մեր առաջար-
կության, մեր, վոր գործերնիս ձգած ենք և տասնե-
հինգ որե ի վեր ամենուն խանութը, տունը, վաճառա-
տունը կը պարտինք մուրացկանի պես:
 — Ճանըմ Նահապետ եփենտին անանկ կըսե, ամա-
կառնե, տասը հատ տնւր:
 — Ճանըմ, գուք ալ սխալ կը հասկնաք կոր, Նա-
հապետ աղան չեմ տար չըսավ: Ինչու չպիտի տա:

— Յերկու հատ կառնեմ, ըստի Նահապետ աղանձի շիրնալով դիմացրել թախանձանաց հանգանակողաց, վոր աղջին յերեկի վաճառականաց դասուն կը փերաբերեցին:

— Յերկու հատ:

— Հսել ե, վոր այսոք մեր խռոքը կոտրել ուխտեր ես:

— Ինչու ուխտեմ, ինչ ըրի...

— Տակավին ինչ պիտի ընեմ... տասը տոմսակ առ կըսեն կորնե, կառնեն, եֆենտիմ, յերկար չեն ըներ... սանքի մենք քուկին կարողությունդ չենք գիտեր կոր... բիացայի վրա չենք ապրիր կոր մենք... մարդու հատ ալ տեսնված չունինք... ըստեն յեկանք... բան մը չիտենք:

— Աս ինչ խռոքեր են... ինչու բիացայի վրա ապրած ըլլաք, ինչու լեռնեն...

— Ան ըսել ե եֆենտիմ...

— Կուղիք նե, մեկ հատն ալ մի առնեք... հարկավ հաթըրնիս սիորոյ մեկը կը գոնենք...

— Քիչ մ'ալ դիմացինին հաթըրը նայելու յե, Նահապետ աղաս:

— Հաթըրնիդ դլխուս վրա, բայց չեմ կընար կոր հասկցներ, վոր...

— Շատ աղեկ, շատ աղեկ, հինգ վոսկի տուր նայիմ աբեկց, ալ ասոր ալ ըսելիք չունիս ան:

— Հինգ վոսկիի մնալին իմաքը ալ խռոք չուզեր...

— Տուր նայինք հինգ վոսկին:

— Բայց...

— Յերթանք ալ, մնաք բարով, Նահապետ աղա, ափ կընեք, վոր ձեզի նեղություն տվինք...

— Ինչու կը բարկանաք:

— Չըարկացանք, բայց ամեն բանին կարդ ու կանոնը կա...

— Յես անոր առնել կուտամ հինգ հատ... տուր հինգ տոմսակ ինձի... Նահապետ եֆենտի, տուր հինգ վոսկի ինձի...

Նահապետ աղային ճարը կը հատնի և կուտա հինգ վոսկիի:

— Վերջապես խռոքդ ըրիը, հինգ վոսկիին ավելի չտպիր... վասա չունի... շնորհակալ ենք:

— Մնաք բարով, Նահապետ եֆենտի:

— Յերթաք բարով:

— Մնաք բարով, մուսյու Նահապետ:

— Յերթաք բարով:

— Մնաք բարով, նոճա Նահապետ:

— Յերթաք բարով:

Հանգանակըները կը մեկնին, և Նահապետ աղանձի կուգա զրասեղանին առջև նստելու, փափանակագիրը կը ներկալացի յերիտասարդե մը:

— Հրամանեցէք կըսե փոխանակագիրը զրասեղանին վրա գնելով:

Փոխանակագիրն յերեսոն և չորս վոսկվո յեր:

— Այս, կը պատասխանե Նահապետ աղանձ, մեկ ժամեն յեկեք, հիմա գործ ունիմ քիշ մը:

Մարդը կը հնաղանդի:

Թերկա մեր ընթերցողները դարմանան, թե յերեսուն և չորս վոսկվո փոխանակագիր մը վճարելու համար նեղություն կըող մարդ մինչպես կը հավանի

հինգ վոսկի տալ պարահանդեսի: Բայց զարժանալու բան չկա: Նահապետ աղան չափազանց ամոթխած ե, համեստ ու հեղահամբույցը չուզեր և վոչ մեկուն սիրտը կոտրել, յերբ իրմե շատ ավելի մեծ անձնավորություններ առաջարկություն մ'ընեն իրեն, իբրև հրաման կընդունի այդ առաջարկությունը, մանավանդ յերբ դործ կըթության ծավալմանը նպաստելու վրա յե: Նահապետ աղան հարուստ լերեալու համար ընավ աշխատած չեր, վոր համարձակություն տված ըլլար այդ վաճառականաց՝ քաղաքավարկությամբ կողոպտել զինքը, և այդ վաճառականներն իսկ լավ գիտելին, թե Նահապետ աղան այն վաճառականներեն եր, վոր իրենց լուղովը կը տապէլին, և ավելի լավ գիտելին, թե Նահապետ աղան առաջարկություն մերժելու մեջ ամենեն տկար արարածն եր, ուստի սատկ փրցնելու համար իրմե՝ վորոշած եյին անոր տկար կողմին վրա հարձակի ինչպես հարձակեցան և հաջողեցան:

Բայց Նահապետ աղան, պատվավոր վաճառական, ալիքնքն յուր ստորագրությունը հարգող վաճառական, այս անդամ վշտացավ քիչ մը և հանդանոկդաց ընթացքին մեջ ի նպաստ ազդին ավաղտիության նման բան մը տեսավ, «Այսչափ բունությունն բանեցնել, ըսավ, չեր վալեր այդ վաճառականաց, վոր գիտեն իմ վիճակ, ապուշի տեղ դրին զիս և վարպետությամբ հինգ վոսկիս առին, ասիկա շատ ամոթ բան ե... յես ալ հանցանք ունիմ յա... ոչեմ կընար տալք ըսելու ելի և մերժելու ելի... ըսի ալ... մերժեցի ալ... չորսը մեկեն վրաս ինկան և ամշցուցին ինձի... պարահանդեսին ալ խերն եմ անիծեր... անոնց ալ, աս չվալեց... չենե... աս չեղավ... ինձի պես մը հինգ վոսկի տամ, հինգ

վոսկի տանս մեկ ամսվա ծախքն... ասոնց ըրածը պարզապես թշնամություն ե... բայց աճապարենք հիմա հինգ վոսկի գտնել և փոխանակագիրը վճարել... անպատճառ վճարելու լիմ այսոր... վաղվան չեմ կընար ձգել... վարժված չեմ ատանկ բաներու... արդեն անանկ առաջարկություն մ'ընելու կարող ալ չեմ և պետք չե, վոր կարող ըլլամ. մեծ ամոթ ե... փոխանակագիր մ'որին վճարելու լի...

Նահապետ աղան սենյակը կղպեց, դուրս լելավ և կես ժամեն գարձավ:

Հինգ վոսկիվո փոխառությունը հաջողցուցած եր:

Անցավ գրասեղանին առջև միշտ մտագրադ, յերեմն յերեմն միայն ձեռքը գրասեղանին կը դարներ ըսելով.

— Եղություն ըրի, ավանակություն ըրի, տալու չելի... չորսը մեկեն խարեցին զիս... յերթամ լիս ուղեմ սա հինգ վոսկիս... կուտանն... կը վալե՞, վոր ուղեմ... լիս չեն տար... սաոր աղեկը՝ մեյ մ'ալ սասանկ բաներու ստակ մը չեմ տար, կը լմննա, կերթա... տան ծախքն ալ պղտիկցնելու յե քանի մ'ամիսներ, վոր հինգ վոսկիվո կորուստը անդգալի ըլլա... այս, սեպե թե գողցուցի... ալ չխորհինք սաոր վրա... չը խորհիւ ալ կըլլամ մի յա... հինգ վոսկի յի աս...

Դուռը բացվեցավ և ներս մտավ մարդը փոխանակգիր ի ձեռին:

— Ստորագրեցնք... ահա յերեսուն և չորս վոսկի:

Մարդը ստորագրեց փոխանակագիրն և առավ յերեսուն և չորս վոսկին:

— Հինգ վոսկի պարահանդեսի համար... հառաչեց Նահապետ աղան... ասիկա թող գաս մըլլա ինձի, վոր ապագալին չխարվիմ... հինգ վոսկի... հինգ վոսկի... հինգ

հատ գեղին վոսկիներ... զեղին, զեղին... կլորիկ, կլորիկ
վոսկիներ հինգ հատ... Նահապետ աղան տվալի... պարա-
հանդեսի համար... յես կըսեմ կոր, յես կամչնամ
կոր... ինքնիրմես կամչնամ կոր... ուրիշ մը իմանա
նե, կը խնդա վրաս..., ուրիշի զրուցելու չգար... ուն,
ավանակ ըսե մեկը ինձի... կըսե յն... և իրավունք ալ
ունի... յես ինչ ավանակ հմ յեղեր... ինչ ավանակ
իշու յեմ յեղեր, վոր հանեմ անասունի պես, կովու պես
հինգ վոսկին անոնց տամ... իրավ, Նահապետ, իշուն
մեծն ես եղեր... վոսկի. մը տուր. լմնցնը գործը...
անոնց խոսքը ինչու մարիկ ըրիր:

Նահապետ աղան բարկությամբ տուն դարձավ
նույն յերեկո, կողջը պատմեց գլխուն յեկածը, կինն
անկե ավելի զայրացավ:

- Հինգ վոսկի տալ, պոռաց, պարահանդեսի...
ողայոց քոսթյում կառնելիր ալդ ստակով...
- Իրավունք ունիս, կորի, բան մ'ե, յեղավ:
- Ե, գուն իրավցնե ապուշ ես յեղեր...
- Իրավունք ունիս:
- Տղայոց քոսթյուները յերբ պիտի առնես:
- Այս տարի քոսթյում մոսթյում չկա:
- Զատկին ինչ պիտի հագնին հապա:
- Ունցածնին հագնին թող ալս տարի:
- Պատուած հագուստներնի պաըտին:
- Ի՞նչ ընենք:
- Ինչու պտըտին անանկ:
- Վորովհետեւ քոսթյումի ստակն պարահանդեսի
տվինք, ծովը չնետեցինք ա վերջապես, աղգին աղ-
քատ տղաքնին անով ողիտի կըթության, կըթության
գործին զարկ տված յեղանք:

Քանի մ'որ յետք,

- Այսոր միս չառիր, ինչ պիտի ուտենք:
- Ֆասուլյա ուտենք քիչ մ'ար վոր սա հինգ վոս-
կին մոռնանք:
- Տղաքնիրը ֆասուլյալով կը կշտանան..., անոթի
կը մնան նե:
- Ինչ բնենք, բան մ'ե, յեղավ...
- Անոթի մնան ուրեմն, վոր քեյֆդ գա:
- Ինչու անոթի մնան..., վաղը բարամուտ կառնենք
քանի մը հատ:

— Դուն հանե ու հինգ վոսկի տուր, և հիմա աը-
գաքնիրդ մերկ ու անոթի պահե. աստված ջնորդք տա
քեզ, մարդ, Աղդասիրության համար ալ ֆասուլյա
ուտելը բարամուտ չունեի...

— Հանցանըն իմա ե, այն... իրավունք ունիս
դուն... ճիշտ ե, ֆասուլյա և բարամուտ... յերհսս չըռնից,
չկըցա չե ըսել ու հանեցի հինգ վոսկին տվի:

Նահապետ աղան հինգ վոսկիվո կորուստը զարմա-
նելու համար ծխախոսի և ողիի հատկացուցած զու-
մարեն զեղչերու ստիպիցալ հինգ վոսկին և տան ծա-
խոց մեջ փոփոխություն չմտցուց, վորպեսզի ամեն
յերեկո վիճարանության համար պատրաստ նյութ
չգտնվի տան մեջ:

* * *

Զաքար աղան ականջի սոսկալի ցավ ունի, ամբողջ դիշեր կը չարչարվի սպասելով արշալույսին, վոր բժիշկի մը դիմե: — Ականջի ցավս, վորպես հայտնի յե, շատ տնդամ առաջ կուգա անպարկեշտ խոսքեր, ստություններ և զբարտություններ լսելի: — Արեգական դուստրը՝ չդիմանալով Զաքար աղայի ականջի ցավուն, — կը պատահի յերբեմն, վոր բուն ցավակիրն այնքան չըզդար յուր ցավն, վորքան փափկասիրտ վոմն — վորոշալ ժամանակեն առաջ կը հասնի, և Զաքար աղան լապտերը վառելով կերթա զարնելու դեղաբանի դռան մը, վորու վրա գրված եր՝ «գիշերներն ալ բացե»: Զը բացվեր դուռը: Զաքար աղան վերստին կը բախե այն սաստկոթքամբ, վորով կը ցավեր ականջը: Վոչ վոք ձախն կուտա: Կը տանջվի խեղճ՝ անկարող վոտքի վրա կախնելու կամ նստելու, խոսելու, կամ լսելու, կ'արագե բախումներն՝ սատիճանաբար սաստկացնելով զանոնք: Վերջապես բարակ ձախն մը կը լսվի վերեն.

— Ո՞վ ե ան:

Հարցումն ընողն յերեսնամյա տիկին մը կը թվեր դեմքեն, վոր պատուհաննեն ցուց կուտար: — Յես եմ, կը պատասխանկ Զաքար աղան ճվալով: — Դուն մի ես: — Յես եմ... Զաքար աղա, կըսե՝ ցավեն դլուին յերերելով: — Զաքար աղան մի ե: — Խոսելու ժամանակ չունիմ, տիկին, ականջի ցավ ունիմ սարսափելի:

— Ականջի ցավ ունիք... առտվանց ասանկ կանուխ... մի կըսվիք դուք:

— Ենք... Զաքար աղա... տիկին, Զաքար աղա... ցավընաւ... Զաքար, Զաքար... Զաքար կըսեն ինձի... Նոյեմիկին փեսան... Զաքար... Զաքարասար:

— Նոյեմին մի ե... ինչ ե նե... սպասե քիչ մը, հիմա կը բացվի:

— Եֆենտիկին ըսեք, վոր շուտ մը վար իջնա, կազաչեմ:

— Հիմա պիտի գա, քիչ մը գործ ունի ձեռքը... սպասեցեք:

Տիկինը կը քաշվի՝ պատուհանը գոցելով, բայց Զաքար աղալին ցավը չքաշվիր:

— Շուտ ըրեք, բացեք դուռը, կը պոռա:

Քառորդե մը դուռը կը բացվի: Դեղաբանի սպասավորն կակսի ավելի՝ Դեղագործը դեռ չերեար: Զաքար աղան ցավեն հազար պատկերի կը փոխե դեմքը՝ մերթ ընթվիները վեր առնելով, մերթ մեկ աչքը դոցելով, մերթ քիթը սպելով, մերթ ակաները սխմելով, մերթ բերանը բանալով: Կը պաըտի դեղաբանի մեջ՝ նայվածքն ուղղելով միշտ դեղաբանի միջն դռան, ուսկից պիտի գար դեղագործն, վորուն պիտի աղաչեր դեղ մը կաթեցնել ականջին:

Արեը կը ծագի: Քանի մը հիվանդներ ևս կուգան սպասելու բժշկի: Միջին դռնեն կը մտնի դեղագործը:

— Եֆենտի, շուտ մը դեղ մը տալիք ականջիս:

— Սպասեցեք, բժշկը հիմա ուղա:

Զաքար աղան աթոսի մը վրա կը նստի՝ գլուխն ձեռաց մեջ, աշխարհ աչքին չերեար, խոսելու կարո-

դություն չունիր հաւց կը թողման մարդուս չխոսիլու...
բռնի խոսիլ կուտան:

— Կործեմ ականջնիդ կը ցավի, կըսե հիվանդնես
բռն մին:

Իբրև ա չո գլուխը կը ծուե Զաքար աղան:

— Եատմնց ի փեր կը ցավի:

Իբրև վոչ գլուխը վեր կը վերցնե Զաքար աղան:

— Շատ կը ցավի:

Իբր շատ գլուխը կը շարժե քանի մանդամ Զա-
քար աղան:

— Ինչե՞ն առաջ լեկավ:

Պատասխան զլիու շարժմամբ տալն կարելի չեր-
պությունն քաղաքավարության հակառակ եր. ին-
չուդ պետք մը պիտի դատապարտվեր քաղաքավա-
րութենե, ուստի Զաքար տղան, թեև ընկճված ցավին
ներքե, ձեռքն ականջին վրա կսկսի խոսիլ.

— Պե աղբար, յերեկ իբրիկուն քիչ մը քըտնած-
ելի... Վոսփորի թիվ 2 շոգենավը մտա...

— Ներեցիք, թիվ 2 շոգենավը Հիսար¹⁾ կը հան-
դիպի մի, ընդմիջեց հիվանդներեն մին:

— Այս, կը հանդիպի:

— Եատ ծանը կը քալե ան շոգենավն, կըսե հի-
վանդներեն վոմն:

— Յես ան շոգենավը բնավ չեմ մտներ, կը հարե-
յերբորդ մը:

— Յես ալ մտած չունիմ, կավելցնե չորրորդ մը:

— Եւ, թիվ 2 շոգենավը մտաք... հետամ... կը հար-
ցունե ինչե՞ն առաջ յեկավի հեղինակը:

¹⁾ Հիսար.—այս անունը կրող յերկու արվարձան կա Պոլսում
Վոսփորի յերկու յեզերքն:

— Թիվ 2 շոգենավը մտա, Ղազարոս աղա ըսավ,
վոր...

— Խոսքդ մի մոռնար, Ղազարոս աղան ըսածդ սա
մեր բարեկամ կոշկակարն ե, կը հարցնե հիվանդներեն
մին:

— Այս:

— Ինչպես յեղան գործերը:

— Ղազարոս աղալին գործն ավրիված եր վոր... կը
հարցնե յերկորդը:

— Մէր Ղազարոս աղան, կը պոռա յերբորդը զար-
մացմամբ:

— Ավրիված եր յա, կը պատասխանե չորրորդը,
անառակ վեսայի մինհավ. մարդը... Դերենիկին...
առուն ինչ կար, չկար ծախեց:

— Դերենիկը... սմ Դերենիկը... վայ անովիտան...
Բարսեղին տղան... հայրը բարի մարդ եր...

— Սնանկ ե նե, մորը չելեր ե, կըսե մին:

— Մայրն ալ բարի կնիկ մ'եր, եֆենտիմ, կը
մոմուա ուրիշ մը:

— Խեղճ Ղազարոս աղա... կըսե մյուսը, ինչ աղեկ
կոշիկ կը կարե, աժան և զիմացկուն...

— Կոշիկը չկունար վոտքի հարմարցնեւ կը պա-
տասխանե ուրիշ մը, քանի մը խալիպներ ունի, միշտ
անոնց վրա կը ձեւ և կուզե, վոր բոլոր մյուշտերի-
ներուն վոտքերն իր խալիպներուն մեծությունն ու
ձեն ունենան:

Հիվանդաց այս խոսակցության միջոցին Զաքար
աղան յերկու ցավ միանգամայն կը զգար. առաջինն
ականջի ցավ, յերկորդն՝ ընդմիջման ցավ; Թող չեն
տար մարդուն, վոր խոսի, ինչպես վոր քիչ մ'առաջ
Հ. Պարոնյան—6

թող չտվին, վոր չխոսիւ: Բայց քաղաքավարությունը հրամատեց, վոր համբերել, և համբերեց, մինչև վոր առաջին հարցման հեղինակն խոսք տանելով ըստավ.

— Բայց թուղունք խալիսները և մտիկ ընկենք Զաքար աղան: Եթ, Զաքար աղա, ինչ ըստավ Ղազարոս աղան:

— Ղազարոս աղան ըստավ, վոր, շարունակեց Զաքար աղան, շողենավին գլուխը նստինք, քիչ մը հով առնենք...

— Խոօքի մեղրով կը կորեմ. քրտնած, քրտնած շողենավին զլուխը կը նստվի՞ մի, աղբակ, ըստավ հիվանդներին մին, վարուն համակարծիք դունվեցան նաև մյուսները:

— Չնամի՞ր ան

— Մեծ անխոհմություն եւ:

— Առողջապահական որինաց ագիտ ըլլալ ըսել եւ:

— Դուք հրավիրած եք ձեր ցավը:

— Յերկաթյա ականջ մ'անդամ քրտնած քրտնած հովին առջև զրվելու չեւ:

— Պարզապես խենդություն եւ:

— Շիտակն, հիմարություն եւ:

Զաքար աղային համբերությունն հատնելու վրա յեւ, քաղաքավարությունն կը լիցնե անոր համբերության անօթն: Կապասե և հետո կը շարունակե խոսքն ունիդրաց հրավերին վրա:

— Քրտնած եմ, կը մտիմ, ըսի, և վարի սենչակն իջանք, նստեցանք...

Դարձաւ ընդմիջում:

— Ապրիս... տեսամը մի խելացիությունը:

— Ներկցիք ուրեմն:

— Խոսքերնիս յետ կառնենք:

— Սանկ ըսե... մենք կարծեցինք, վոր շողենավին գլուխը նստեր ես:

— Աղեկ վոր Ղազարոս աղային խոսքը մտիկ չեւ բրած. անմիտ մարդուն մեկն և Ղազարոս աղան:

— Լուսահոգի ինդրալըն ալ անանկ եր:

— Ատոր կինն ի՞նչ յեղավ:

— Կարզկեցավ Համբարձումին տղուն հետ:

— Սա Մանուկին աներձագի՞ն հետ, վոր տուն մ'ուներ...

— Ան տունը չերեցավ մի լի:

— Շատոնց երեցավ, գետինը մոսիո Անթուանն առավ:

— Անթուանն ի՞նչ աղվոր աղջիկ ունի:

— Շատ ալ աղվոր կը հագի՞ թշվառականը:

— Անցյալ շաբթու ամազոն մը հագեր եր վոր... Փիտանի պիս...

— Ամազոնները քանի՞ կուտան կոր:

— Խումաշը զիտե, կես վոսկին բռնե ու դնա:

— Ղալաթիա Բերային պժան եւ:

— Այս, յես զգեստներս միշտ Ղալաթիային կը գնեմ... սա բանթալոնս հինգ մեճիտիյի առած եմ:

— Յսս ալ բաճկոնս յերկու մեճիտիյի առած եմ:

— Բարտըսյուիս ութը մեճիտիյե տվի, բայց շատ աղեկ ապրանք եւ: Թող վոր ապրանքը ճանչցող բարեկամի մը հետ գնեցի:

— Թող տվիք, սա մարդը լմացնե խոսքը... խոսեցք, Զաքար աղա:

Զաքար աղան վորոշած եր արդեն չշարունակել խոսքը, զոր կընդմիջելին, ուստի պատասխանից.

- Լմմցավ իմ խոսքս... այսչափ եր...
- Չե, չե... այսչափ չեր...
- Քրտնած եմ, կը մսիմ, ըսիք ու «վարի սենտակնք, նատեցանք», ըսիք... ի՞նչ ըրիք, նադինք, վարի սենյակը:
- Ի՞նչ պատուհցավ վարի սենյակը:
- Ո՞վ կար վարի սենյակը,
- Լմմցուցի, ազրաբներս, լմմցուցի:
- Ի՞նչ յեղավ վարի սենյակի մեջ, վոր ականջիդ ցավ մտավ:
- Պատուհմնը բաց եր...
- Դունին հմվ կուգար կորի...
- Մեկն ականջիդ դարկավի:
- Ինչու չեք խոսիր, Զաքար աղա:
- Ցավը պահողը դարձան չդաներ, կըսին. մի պահեր, ըսի, թերես մենք ալ կըսանք քեզի դեղ մը եանձնարաբեր:
- Բանի՞ մը բարկացաք, վոր չեք ուզեր շարունակեր:
- Ամենակին:
- Սիրով մտիկ կընեյինք կոր... ինչու կարեցիր մեկեն ի մեկ. շարունակե, շարունակե, ցավդ ալ կը մոռնաս:
- Զաքար աղան վերստին առավ խոսքին թելը:
- Վարի սենյակն իջանք, նատեցանք... մեր քովի պղտիկ պատուհնը բաց եր, նույնպես բաց գեճացի պատուհանը...
- Դարձյալ ընդմիջում:
- Քուրան տեր... քուրան տեր...
- Ազրար, մեկ հատը գոյեյիք...

- Քուրան տերի մեջ կը նստվի՞ մի յա...
- Ծղալություն եւ,
- Անմիջապես գոցել տվի, շոգենավեն յելա, տուն գնացի, գիշերն սկսավ ականջիս ցավն, ահա այսչափ, ըսավ և անուշ տեղը կապեց Զաքար աղան ծածկել ջանալով բարկությունը:
- Պաղեցուցած եք ձեր ականջը:
- Այս, պաղեցուցած եւ:
- Բան մը չե, կանցնի:
- Դեղագործն, վոր դաւան առջև կեցած եր, ավետեց, թե բժիշկը կուգար: Զաքար աղան պատրաստվեցավ և ամեննեն առաջ ներկայացավ բժիշկին, յերբ գեղարան մտավ սա: Բժիշկը բարեխախտաբար քիչ ընդմիջեց յուր հիվանդին խոսքը, գեղագիր մը դրեց և վարձքն առավ:
- Զաքար աղան պատրաստել տվավ դեղն և բարկությամբ, զոր կը ջանար միշտ ծածկել ներկաներուն, զուրս յելավ գեղարաննեն ինքնիրեն խոսելով.
- «Ես ի՞նչ գիշ բան և թող չտալ մեկուն, վոր խոսք լմմցնե: ամեն կողմեն դիտողություն մը, հարցում մը... մարդս ըսածն ալ կը մոռնա, ըսելիքն ալ: Զըղ-ջացա, բարով խերով չըսեյի, վոր ականջի ցավ ունիմ, մեր գիտցածը մեկուն խոսքը մտիկ կըսին, վերջն ալ իրենք կը խոսին: Խոսողն վորպես թե յես եյի... ինձմե ավելի խոսեցան ունկնդիրներս: Մարդ ասառնձո, սպասե, լմմցնեմ խոսքս, վերջն ալ դուն խոսե: Կարծես ականջիս ցավն սաստկացավ բարկութենես... տեր վողորմյա... տեր վողորմյա... բերան բանալու չեյի, բայց ան ալ թող չեն տար»:
- Զաքար աղան բարկանալու իրավունք պիտի չու-

Նենար, լիթե զգար, թե ինքն ալ ուներ ուրիշի խոսքը ընդհատելու տկարությունը, տկարություն մը, վոր, պղտիկ բացառությամբ, գրեթե ամեն հայու վրա կերևա: Ազգային ժողովներու մեջ, հանձնաժողովներու մեջ, ընկերությանց մեջ, մեր ընտանեական և առևտրական կենաց մեջ ամեն որ ցույց կուտանք այս տկարությունն, վոր սովորություն դարձած և ի մեջ: Ենս ալ անհամբեր եմ, չեմ կրնար ներել մեկուն, վոր խոսքը շարունակի, հաճախ կընդհատեմ անոր խոսքը, խնդրեն զուրս ալլ և ալլ հարցումներով՝ մինչե վոր խեղճը կը մոռնա ըսելիքն և ինձ կը հարցնե: — Ի՞նչ պիտի ըսեյի .. մեր պիտի բերեյի, կապեայի խոսքը... ճանըմ, Բնչ բանի վրա յեր խոսքերնիս... բան մը պիտի ըսեյի, թօնափ տեղ մը պիտի բերեյի կապեյի...

Հետո կսկսիմ իրեն ոգնել, վորպեսզի թոհավ տեսը դունե: Զկրնար գտնել և կը մեխսի խոստանալով, թե պիտի զա զիս տեսնելու, յերբ զտնե խոսքին թեւը:

Հսել և թե ընդմիջող մ'եմ առաջին կարգի, բայց անանկ ընդմիջողներ կան, վորոնց քով բնավ նշանակություն չունիմ: Ասոնց քով մարդու վոշ միայն խոսքին թեւը կը կորանցնե, ալլ ինքզինքն ալ:

Աստված պահպանե զձեղ և ձեր զավակները այս տեսակ ընդմիջողներե,

* * *

Հանդիպած եք անշուշտ մարդոց կամ կանանց, վոր իրենց վերաբերյալ տիրառիթ կամ բիրկրառիթ նոր զեպք մը մանրամասնորեն պատմելու ընավորությունն ունին, վորոնց կը հանդիպաին: Իրենց բարեւ տվողին ձեռքեն կը քաշեն և «յեկուր, քեզի հետ քիչ մը տհոնը» վինքը ըսելով նախ զրուարան մը կը տանին զայն և հետ անոր զլուխը: Շատ անզամ ալ իրենց ծանոթներուն կամ բարեկամներուն տուները կերթան միմիայն իրենց զեպքը պատմելու նպատակավ: Այս նկարագրին չեմ մեղադրելի, վորովհետեւ մարդու, ինչպիս կըսեն, կը քացին ուրիշի պատմելով լուր վիշտերը, վորպես նաև ինքզինքն յերջանիկ կը զգա՞ բարեկամին հաղորդելով ուրախությունն: Բայց այն, վոր մեղադրելի և քիչ մ'ալանբերելի ին, սա չե, թե այս մարդիկ կամ կանաչը, առ ի չոռյե հիշողության, միկնուլն զեպքը հազար անգամ կը պատմեն քեզ, միշտ իբրեւ առաջին անզամ: Յեկ ինչ վոր ցավալի չե, ամեն անզամ այնպիսի ձեւվով մը կամ այնպիսի սկզբնավորությամբ մը կուգան քեզի պատմելու, վոր լեզուգ կը բռնի, և քաղաքավարության հակառակ կը զտնես կտրել անոնց խոսքը, անմիջապես և ըսել «ինձի պատմեցիր ատիկ»: Յերքինն ալ կարծելով, թե ուրիշ նոր բան մը պիտի զրուցն, թույլ կուտաս, վոր սկսին պատմել: Սկսան անգամ մը պատմության, կաշիկ զեմք մը պետք ե՞ իրենց ըսելու համար, թե «գիտեմ, պատմեցիք»:

Մարդիր հանըմն լուր աղջիկը, Թաղուկ, նշանած

Ե Մանուկ աղայի տղուն, Բարթամին հետ: Թագուկ պարկեցտ աղջիկ մ'ե, քիչ մը կարդալ, կտոր մ'ալ զրել գիտե: Իրեւ ոժիտ, բացի հանդերձեղինե, սուն մը տուն ունի: Բարթամ լերկաթագործ ե, աշխատասեր լերիտասարդ մ'ե, գինովություն չունի, խաղամոլություն չունի, ստակ չունի, տուն ալ չունի: Իրեն ապանի կնոջ նստած տանը մեկ սլան վրա պիտի բնակի կնոջ հետ: Անանիա աղա, աղգական Մարգրիտ հանըմին, միջնորդության գեր կատարած ե այս նշանախոռության մեջ:

Մարգրիտ հանըմն որ մը շուկա իջնալով՝ գրասենյակս կուգա զվարթագեմ: Հաղիվ կը նստի աթոռին վրա, ձեռքերը ծունկերուն վրա կոթնցնելով կը ծոր և կը սե.

— Զիյաթս, Թագուկն ալ նշանացինք Մանուկ աղայի տղուն, Բարթամ եֆենտիին հետ: Խսմեթը առ ե յեղեր: Աղջիկս, Պամին աղջիկս և տեղի չեմ ըսեր, պարկեցտ աղջիկ մ'ե. քիչ մը կարդալ գիտե, կտոր մ'ալ կը գրե: Տունին մեկ սլունն ալ իրենն ե, ան ալ տանք պիտի, մեր կարողությանը համեմատ հանդերձ ալ պիտի տանք: Ի՞նչ ընհնջ: Բարթամ եֆենտին ալ աշխատասեր տղա մ'ե, կնիկ մը կընա սղանել: Դինով չե, խաղամոլ չե, և ստիկա մեծ հարստություն և երիկ մարդու մը համար: Ստակ չունի, տուն ալ չունի. թող չունինա, աշխատությունն միշտ ստակ ե, միշտ առւն ե: Աստված Անանիա աղային գործերուն հաջողություն տա, ան ըրավ սա գործը, հող ըռնե, վոսկի զառնա: Ի՞նչ կըսեք դուք:

— Գոհ եմ:

— Մնաք բարով:

— Խահվե մը:
 — Ժամանակ չունիմ: Ուրիշ որ մը կը խմեմ:
 Մնաք բարով:
 — Յերթաք բարով:
 Որ մ'ալ Ղաղարոս աղան յերեմները կախած կուգա զրամենակա: Բաղմոցի վրա կը նստի տիսուր:
 — Բարի յեկաք, Ղաղարոս աղա:
 — Բարի անսանք, կը պատասխանե հազիվ լսելի ձայնով մը:
 — Աղեկ եք:
 — Աղեկություննիս մի հարցներ, կըսե և մեկ մեթը յերկանությամբ հառաջանք մը կարձակեն:
 — Ի՞նչ ունիք:
 — Ի՞նչ պիտի ըլրա, ամիս մ'ե, վոր պառկած ելի, այս սոր յելա, բայց քակելու ուժ չունիմ: սոսկալի թանչք մը, այնչափ արյուն զնաց, վոր արյուն չննաց վրաս: Գործերս յերեսի վրա մնացին: Գործելու կարողություն չունիմ... մյուս կողմեն ծախք... ինչ ընկմ, չիտամ:
 — Բան մը չե, կանցնի:
 Ղաղարոս աղան առած զեղերուն վրա, բժշկին ացցելությանց վրա, կրած ցավոց վրա մանրապատում ճառ մը խոսեին հետո կը մեկնի:
 Յերկու շաբաթ յետքը շողենավի մը մեջ կը հանդիպիմ Մարգրիտ հանըմին, վոր տիկնոջ մը քով նստած կը խոսի: Իրենց զեմք զնացի նստեցա:
 — Ո՞ւր եք, չեք յերկաք կոր, ըսավ:
 — Ի՞նչո՞ւ չերկանք:
 — Քովս յեկուր, քովս, քեզի ըսելիք ունիմ, շատ զոհ պիտի ըլլաս:

Նստելու տեղ չկա քովը:

— Յես տեղ կը բանամ քեզի, յեկուր, հրամմեն
Յեվ կսկսի ինձի տեղ շինելու:

Քանի մը տիկիններ և պարոններ ալ քիչ մը կը
սղմվին, կամ, ավելի բացահայտ կերպով բացառելու
համար, կը սըդվին, և կերթամ Մարդրիտ հանըմին
քոյ նստելու՝ ներումն խնդրելով իրմեն և անոնցմեն,
փոք քովն ելին, իրենց անհանգստություն պատճառած
ըլլալուս համար:

— Դուն խելացի մարդ մ'ես, կըսն Մարդրիտ հառ
նըմը, շիտակ ալ զրուցող մարդ մ'ես, սիրոդ ինչ ե
նե, բերանդ ալ ան ե. քո. կին այս բնավորությանդ շատ
հագնած եմ. Եֆենտիմ, մեր Թագուկը նշանեցինք Մա-
նուկ աղայի տղուն, Բարթամ եֆենտիմ հետո Խըս-
մեթը աս ե իեղեր: Աղջիկս իմինս ե տելի չեմ ըսեր-
պարկելու աղջիկ մ'ե, քիչ մը կարգու զիտեն, կտօր մ'ալ
կը զրե: Տու ին մեկ սյունն ալ իրենն ե, ան ալ տանց
պիտի, մեր կարողությանը համեմատ հանդերձ ալ պի-
տի տանք: Ի՞նչ ընենք, Բարթամ եֆենտին ալ աշխա-
տասեր տղա մ'ե, կնիկ մը կըսնա պահել: Գինով չե-
խաղամոլ չե, և ասիկա մհծ հարստություն ե երիկ
մարդու մը համար: Ստակ չունի, տղւն ալ չունի. թող
չունենա, աշխատությունը միշտ ստակ ե, միշտ տուն-
ի: Ծնանիտ աղային զործերուն աստված հաջողու-
թյուն տա, ան ըրավ ոտ դորձը. հող բռնե վոսկի դառ-
նա... ձեր կարծիքն ի՞նչ ե:

— Շատ աղեկ ըրեր եք, շատ աղեկ:

— Ի՞նչ ընենք, ամեն մարդ էք կարողությանը հա-
մեմատ:

— Գոհ եմ, շատ աղեկ ըրեր եք:

— Բարթամ եֆենտին շատ յերջանիկ պիտի ըլլա-

— Այս, ալո՞:

Քիչ մ'ալ խոսեցանք: Շոգենավը սուլեց: Յելա շո-
գենավեն:

Զիս յուր քովն առնելու համար այնչափ աղաչանք
ընող և ինձի տեղ բանալու համար թե զինքն և թե
քովիններն անհանդիստ ընող կնոջ խոսքն կրնալի՛ ընդ-
միջել՝ ըսելով, թե «անցյալները հաղորդեցիք ինձ այս
ուրախալի լուրը»: Մանավանդ թե կրնալի՛ ընդմիջել
ժըրը զիս շողոքորթող հառաջարանով մը սկսավ՝ ըսե-
լով, թե «խելացի մարդ մ'ես, շիտակ զրուցող մարդ
մ'ես, սիրոդ ինչ ե նե, բերանդ ալ ան ե, քուկին այս
բնավորությանդ շատ հագնած եմ»: Ինձի ալսչափ գու-
վեստ կարդացող տիկնոջ մը խոսքը ի՞նչպես կրնայի
ընդհատել:

Հետեւալ որը Ղաղարոս աղան դեմս կելնե:

— Եեկուր, կըսի, հոս քեզի խահվե մը հրամցնեմ:

— Ժամանակ չունիմ:

— Վոտքդ պագնիմ. խահվե մը:

— Գործ ունիմ, սիրելիս:

— Խաթերս համար:

— Շատ աղեկ:

Կը մտնենք զրոսարանի մը մեջ:

— Մեզի յերկու հատ աղեկ խահվե քեր:

— Նոր ի՞նչ կա, Ղաղարոս աղա:

— Ի՞նչ պիտի ըլլա, մեր գործը աստուծո մաց: Քեզի չտեսա, վոր ըսեյի, ան որեն ի վեր չերնցար, վոր պատմելի... չե նե ըսի՞ մի քեզի... չե, չե... ըսի... վառք աստուծո... խելքս գուշան ե տակավին... չե նե ըսի՞ մի... հե... չըսի, կարծեմ, չըսի: Չըսի՛ հգենտիմ չըսի, ցնդած չեմ ա: Եֆենտիմ, ամիս մ'առաջ... ա-

միսե մը քիչ մ'ալ տվելի՝ թանչք մ'ե, կը բոնե մեղի, անկողնո մեջ կը պառկեցնե: Արյուն մ'ե, կոկի վարեն: Այսոր կը դադրի, վաղը կը դադրի, այսոր կը դադրի՝ վաղը կը դադրի ըսելով՝ վարեն պաղ ջուրեր կը զարնենք, գաղջ ջուրեր կը զարնենք, տաք ջուրեր կը զարնենք, վերեն դեղահատ կը կլլնք, փոշի կուտենք, մերջապես վարեն դեղ, վերեն դեղ, շապ ալ զբինք, զարձյալ ոգուս մը չըրավ: Աղբյուր մը կտրած եր կարծիս, կը վաղեր ու կը վաղեր: Այսչափ արյուննեղություն պարապ տեղը: Վերջապես արյունս հատավ, և հոսումն ալ դադրեցավ: Հիմա վրաս ույժ չկա, վոր քալիմ, կարողություն չունիմ, վոր գործեմ: տունը ծախք կուզե, շվարեր մնացեր եմ: Ահա ասանկ փորձանք մը յեկալ գլխուս... պատմմծ եյի ասիկա լիս քեղի:

Սուլն վերջին հարցումը առաջ կուզար ախ անտարբերութենեն, վորով ունկնդրած եյի յուր խոսքերուն: Նա կը կարծեր, թե պիտի նուզվեյի յուր պատմութենեն, և յերբ յուր պատմության ընթացքին մեջ հուզման նշան մը չտհսավ վրաս, իրավունք ունեցավ քիչ մը կասկածելու յուր հիշողության սրությանը վրա: Ուստի հարցուց՝ հետ ավարտման պատմության:

— Պատմմծ եյի ասիկա ձեղի:
— Վոչ, պատասխանեցի:

Վոչինչ պիտի շահելի, յեթե այս ըսելի, վասնզի, նախ՝ յերկրորդ անդամ մտիկ ընել տված եր արդին ինձի յուր արյունահոսության պարագաները, յերկրորդ՝ այս ըսելով պիտի հասկցնելի իրեն, թե հիշողությունը շատ տկարացած ե թանչքին պատճառով, վոր մեծ տպավորություն ըրած ե յուր վրա: յերբորդ՝ ցավ պիտի զգար՝ պարապ տեղը խաճվելի ստակ վճարելուն

վրա: չորրորդ՝ պղտիկ նեղություն մ'ալ պիտի զգարի իմ գլուխս ցավցուցած ըլլալուն համար: Յեկ այս ամսնը նկատողության առնելով՝ պատասխանեցի.

— Վոչ:

— Կարծեմ քեզի տեսա որ մը, բայց մոռցա պատմելու, անանկ կը կարծեմ կոր... ինչ վոր ե, պատմեր եմ կամ չեմ պատմեր, ինդիրն անոր վրա չե, սա զըժքախոռության ինչ կըսես:

— Ցավալի բան, համբերելու լե:

— Գործեղ չմնաս, շնորհակալ եմ,

— Մնաք բարով:

— Յերթաք բարով:

Տասնրմեկ որ լիտքը, ուրբաթ յերեկո մը, գեղ կը լիներ ինձ հեռվանց տեսնել Մարգրիտ հանըմը Բերալի կերպասու վաճառատան մը գուան առջև: Խնդաց զիս տեսնելուն պես և ձեռքով նշան ըրավ, վոր իրեն մոտենամ: Անմիջապես զգացի, թե սլիտի սկսեր յուր պատմության յերբորդ հրատարակության: Ո՞վ պիտի մտիկ ըներ: Հնարք մը կը խորհեյի գլխու ցավին մ'ազատելու համար: Յեկ գոտ: Պետքը մարդու հնարագետ կընի, կրսեն: Մոտեցա իրեն և ձեռքը թոթվելով:

— Իմացա, իմացա, ըսի, շատ գոհ եմ, շատ աղեկ եք ըրեր:

— Ի՞նչ իմացար:

— Նշանը, նշանը... աստված թիմամին հասցնեա:

— Ուսկից իմացար:

— Իմացա:

— Հոդիդ սիրես, ով ըսավ:

— Ինչուղ պիտք... շատ ուրախացա, մնաք բարով:

— Արեւող մհոնիմ, ով զրուցեց,

- Մեկը զրուցից... բարե ըրեք:
- Սուտ կըսիս կոր:
- Ինչու սուտ ըսեմ, կեցեք բարով:
- Ո՞վ պիտի ըսե քեզի:
- Ով ըսավ նե, ըսավ... Բարթամ եֆենտիին աշ
բարե ըրեք:
- Շորհակալ եմ... Զըսիր վերջապես ըսողին ա-
նունը:
- Որ մը կըսեմ, մնաք բարով:
- Խըւանեթ, մերաք տվիր ինձի... Թվ կրնա ըսած
ըլլալ... Մարիամ տուտուն ըլլալու յե, կամ ըսկուկ
տուտուն... կամ Սողոմե տուտուն... կամ Քաթիկ
տուտուն... ըսողը կը ճանչնամ յես:
- Կը ճանչնաս, կը ճանչնաս... կեցեք բարով:
- Շարունակեցի ճամբաս:
- Կյուրակե առավոտ մ'եկեղեցին յելած դեպի
տուն կերթակի: Զայն մ'ետևս զիս կը կանչեր: Յա-
տիս դարձաւ Ղազարոս աղան եր, վոր դավականի մը
կոթնելով համբաքալ կուդար:
- Խոսելու ժամանակ չտվի իրեն:
- Իմացա, աղբար, իմացա... սա ինչ մայասիլ ե
յեղեր, վոր ալաշափ տկարացուցեր ե քեզ... ինչու դուրս
կելւաս կոր, քիչ մը հանդիսաւ ըրե, մնաք բարով:
- Տոքթիրը ըսավ:
- Վ. ջ:
- Դեղագործը:
- Վ. ոչ:
- Ավագերեցը:
- Վ. ոչ:
- Ժամկեչը:
- Վ. ոչ:

- Ո՞վ ըսավ հապա:
- Քեզի պես մեկե մը իմացա... ինչուդ պետք...
քանի մը շաբաթ դուրս մ'ելլեր, վոր ինքզինքդ գըտ-
նաս:
- Մեծ և արագ քայլերով հեռացա:
- Ամիսներ անցան: Որ մը դարձալ հանդիպեցա տիւ-
կին Մարգրիտին: Աւրիշ որ մ'ալ նորեն տեսա Ղազա-
րոս աղան: Ասոր ցավակցությունս հայանեցի, աղոր
խնդակցությունս, ինքզինքս աղատեցի և կրցա աղատ-
շունչ մ'առնուլ՝ փառք տալով նախախնամության,
վոր ասանկ կարճ ու աղդու հնարք մը ներշնչեց ինձի
գլխու ցավեն փրկվելու համար: Աւրիշ որ մը նորեն
տեսա աիկին Մարգրիտին: Թե այս անզամ ինչպես
վարփեցավ հետո, հողվածիս վերջը՝ պիտի ըսեմ:
- Թերեւս բնախոսաբար կամ հոգերնախօսաբար ար-
գարանան աիկին Մարգրիտն և Ղազարոս աղան: Բայց
հայտնի յե, թե իրենց արդարանալովն ինձի գլխու-
ցավ չտված չեն ըլլար. և գլխու ցավն միշտ անտանելի
ցավ մ'ե, ուսկից ալ առաջ յելած ըլլա ալն, արևեն
կամ բնախոսութենեն, մարսը խեն կամ հոգեբանա-
խոսութենեն:
- Քիչ մ'ատենե հետե սակայն վոմանց դիմ քիչ
մ'ալ ավկիլի հանդուզն, ավելի կարճ և անկեղծ ձռմբա
մ'ալ գտա՝ մաիկ չընելու համար, ինչ վոր պիտիմ ար-
գեն: Յերբ պատմողն այնպիսի անձ մ'ե, վորմե շահ
մը չեմ ակնկալեր, պարզապես կըսեմ:
- Գիտեմ ալդ պատմությունը, յեղբալը, պարապ
տեղը մի հոգնիր:
- Ցեղ խեղճը կարմրելով կը հեռանա: Ինչուս պետք,

խղճտանքով վարկեր թող... ինձի ալ մեղք ե... քիչ
մալ գթություն պիտք ե:

Իսկ յերբ խոսողն ազդեցության տեր կամ հարուստ
ըլլա, այն ատեն խնդիրը կը փոխի՛ և կերթա մտնել
մեր բարոյ ական ախտաբանության մասին
մեջ՝ շողոքորթ անվամբ, վոր պիտի յերես թի-
կարի հաջորդ թերթերուն միույն մեջ:

Բայց յերբ գտնվիմ ընկերության մը մեջ, և մեկն
ակսի պատմություն մը, զոր գիտեմ, և վոր յերկու
ժամկան մեջ հաղիվ կընա լմնաալ, փորի ցալ կունե-
նամ և կը մեկնիմ:

Իսկ այն պարագալին մեջ, ուր կը ներկայանա
քեզի մարդ մը, վոր հակառակ քու հայտարարությանդ,
թե պատմելիքը գիտես, կոկոր ձեռվ մը շարունակել
յուր պատմությունը, հուսահատություն կուգա վրաս
և թուլ կուտամ, վոր պատմե, միայն յերբեմն յեր-
բեմն ըսելով.

— Մանրամասնությունները անցիր:

Շատ անգամ ալ ամեն ջանք կը զնեմ, վոր պատ-
մությունը կարելի յեղածին չափ կարճ ըլլա:

Ավավասիկ տիկին Մարգրիտին հետ վերջին տե-
սակցությունն, զոր հիշեցի քիչ մը վերը:

— Վերջապես չըսիր, թե ուսկից իմացար:

— Բավական ե, վոր իմացա:

— Ասանկ յեղավ, ինչ ընկնք, թագուկն ալ նշա-
նեցինք Մանուկ աղայի տղուն, Բարթամ հփենալիին
շետ:

— Շատ գոհ յեղա, շատ գոհ յեղա:

— Իմին աղջիկս ե տելի չեմ ըսեր, դուն ալ կը
ճանչնաս թագուկը...

— Հարկավ կը ճանչնամ... շատ աղեկ ըրիք...
շատ աղեկ ըրիք... ուրիշ ինչ կա, չկա նայինք...

— Բան մ'ալ չկա... պարկեցա աղջիկ մ'ե... քիչ մը
կարգալ գիտե... կտոր մ'ալ կը զրե... մեղի պես մար-
դուն աղջիկը ինչ կընա սորվիլ:

— Անցիր աննք..., յես չիտեմ... դրացիդ ինչ
կընե...

— Ի՞նչ ընե... մեր տունին մեկ սյունը թագուկին
ե... գիտելիք ասիկա:

— Գիտեմ, ճանաբար, զիտեմ. մի հոգնիր պարապ
տեղը: Ծեսնիլինք նորին:

— Տեսնվինք... սախպողական գործ ունիք... մեր
կարողությանը համեմատ լաթ ալ պիտի տանք... Նը-
տամնք մի լա... տունին մեջ բաժին ունինալուն հա-
մար աղջիկս առանց ոժիալի կուտամ. Բարթամ հփեն-
տիւն ալ մեղք ե:

— Կիրակի որը տնենը պիտի ըլլաք:

— Այս, Բարթամ հփենալին ալ աշխատասեր մեկն
ե, կը ճանչնաք զինքը:

— Մնաք բարովի:

— Հապտ Անանիա աղան... հող ըռնե, վոսկի
դառնա:

— Բարե ըրիք:

— Թող չավիր, վոր պատմելի... կաճապարես կոր...
գնա, անանկ ե նե, գնա, զործիդ արգելք չըլլամ... որ
մը մեր տունը հրամմե, խաճկե մը խմե, քեղի մեկիկ
մեկիկ պատմեմ, ինտոր յեղավ այս գործը...

— Կուգամ, կուգամ:

ենք... յերիցս ենք:

Գթություն... զթություն. . վն տիկին Մարգրիտ...
հի գիտե, քանինքը ինձի պես չարչարեցիր ու կը չար-
շարես:

Աս ալ բնախոսական ե... այս բնախոսությունը
պարզապես անկրթություն ե:

Շուտ ընենք վերջացնենք հողվածը, վորովհետե-
ձայն մը կը լսեմ, վոր կը սե.

— Ինձի չհարցներ չփնտռեր ա:

Դադարոս աղալին ձայնն ե:

Գոյցնը մեր գրասենյակն՝ ու փախչինք:

* * *

— Բարի լեք յեկեռ, Բարսեղ աղա, վեր հողմը փը-
չեց զձեզ զեկի մեր գյուղը...

— Պղտիկ այցելություն մ' ունելի բնելու...

— Ըսելու յե... ընելու յե... յերբեմն յերբեմն այ-
ցելություն ալ ընելու յե... շատ աղեկ... շատ աղեկ...
այս գիշեր հմա եք:

— Վոչ, կտոր մը պանիր հաց կերա հոս, պիտի
գառնամ... վորովհետեւ տունը մինակ են...

— Դառնալու յե... դառնալու յե... քանի վոր տու-
նը մինակ են... յս ալ ըլլամ նե, կը դառնամ,

— Դուրս մնալու սովորությունը չունիմ:

— Ունենալու չե... ունենալու չե... դուրս մնալու
սովորությունը աղեկ սովորություն մը չե...

Այս խոսակցությունը, փոր նոր սկսած եր Պոլս
թաղի մը նպարավաճառ գինետան մը մեջ, յերեկուան
ժամը տասնումներին, ընդէլջվեցավ իերիտասարդե մը,
վոր գինետունը մտնելով՝ Բարսեղ աղալին վազեց և
անոր ձեռքը թոթվելով՝

— Ի՞նչ բախտ, ի՞նչ բարեբախտություն, ի՞նչ յեր-
ջանկություն, ըսավ, այս իրիկուն զձեղ հոս գանելը:

— Բախտ և հապա, բարեբախտություն և հապա,
յերջանկություն և հապա, կրկնեց Բարսեղ աղալին
առաջին խոսակցուն, վարու անունն Գարբիկը եր կար-
ծեմ:

— Պղտիկ, սըկե շիշ մ' ողի բեր մեղի, պոռաց նո-
րեկը:

Հետո Բարսեղ աղային ծիծաղելով՝
 — Իրիկուն ե, ըստով, քանի մը հատ կը խմիլի:
 — Կը խմիլի, կը խմիլի, կը կնեց Գարբիի աղան,
 — Յեռ ողի խմելու սովորություն չունիմ, պա-
 տասխաննց Բարսեղ աղան:
 — Մեկ լիրկու հատը չվնասեր:
 — Յերկու հատը բան մը չըներ:
 Գինետան սղասավորն ըհրավ ողին և անոր վերա-
 բերյալ աղանդերը:
 — Ասանկ հե, Բարսեղ աղա, կեցիր, ձիռքովս հատ
 մը հրամցնեմ ձեղի...
 — Հրամցնելու յե լա, հրամցնելու յե լա, Բարսեղ
 աղան մերն ի:
 — Յես չեմ կրնար խմել, ներեցեք:
 — Շատ չպիտի խմենք...
 — Գիտեմ, բայց խմած չունիմ...
 — Մի մերժեք, կաղաչեմ:
 — Չեմ կարող խմել:
 — Հատ մը... չես թունավորվիր:
 — Մեկ հատը չթունավորեր:
 — Չթունավորեր, բայց վարժված չեմ, խելքս կը
 դառնա:
 — Միհրանիկ, մի ստիպեր, խելքս կը դառնա, կըսե
 կոր:
 — Ալս ողին թեթև ե:
 — Բարսեղ աղա, հատ մը խմե, ալս ողին թեթև ե,
 կըսե կոր:
 — Վոտվըներդ պագնեմ, մի ստիպեք:
 — Անանկ ե նե, մի ստիպեր, Միհրանիկ, վոտվը-
 ներդ պագնեմ, կըսե կոր:

— Մեկ հատով ի՞նչ կըլլա, չեղբայր:
 — Ան ալ շիտակ ե, Բարսեղ աղա, դուն ալ հատ
 մը խմե, մեկ հատով մարդ չմեռնիր:
 — Կարող չեմ տանելու նույնիսկ մեկ կաթիլը:
 — Միհրանիկ, ալ կարճ կապե, մեկ կաթիլն ան-
 գամ խմելու կարող չե լեղիր:
 — Մեկ գավաթը ախոր հակ կը բանա, ոգտակար ե:
 — Յեկուր, Բարսեղ աղա, գավաթ մը խմե, ախոր-
 ժակ կը բանա:
 — Զիրցինք հասկցնել ձեզի... նեղություն կուգա
 կոր վրաս:
 — Միհրանիկ, ալ կրկնելու չե:
 — Բսել ե, վոր մեր բարեկամությունը կեղծ ե լե-
 զեր, Բարսեղ աղա:
 — Այդ խոսքը չեմ ընդունիր:
 — Զընդունիր ա, Բարսեղ աղան անանկ մարդ չե:
 — Վնաս չունի, գավաթ մը ողիին համար այս-
 չմի դեմ դնել... շիտակը չեյի հուսար... թող ասանկ
 չմի դեմ դնել... շիտակը չեյի հուսար... թող ասանկ
 չմար մարդ կը խմեր:
 — Բարսեղ աղա, գավաթ մը խմեցեք, վոր վեր-
 ջանա խնդիրը:
 Բարսեղ աղան կը հարկադրվի խմելու և յերեսը
 ծովոտկելով:
 — Խնառոր ալ կը խմեն, կըսե ինքն իրեն, կարծես
 սիրստ երեց:
 — Զուկին չառնեյիք կտոր մը, Բարսեղ աղա:
 — Կառնեմ, պարոն Միհրան:
 Յերեք բարեկամները սկսան աղդային վարժարա-
 բերեք բարեկամները չայսան աղդային վարժարա-

կամ յերկու գավաթ ողի խմլելուն պես խոսակցությունն աղջափին վարժարանաց վրա կիյնա, Զանոնք բարեկարգելու համար յերեքն ալ մերմեկ տարբեր ճամբար ցուց տվին, Յերեքն ալ իրարու ճամբաները սխալ դուն, զիրար համոզելու աշխատեցան, չհաջողեցան, հուսահատեցան, Միհրան շիշն առավ և սկսավ դավաթները լիցնել

— Ալ չեմ խմեր, պոսաց Բարսեղ աղան, կելեմ, կերթամ:

— Բան չմնաց շիշին մեջ. սա գավաթներն ալ խըմենք, յերթանք, պատասխանեց Միհրան:

— Բարսեղ աղա, խնդիր մի հարուցաներ, աստվածդ սիրես, ամեն գիշեր կը խմենք կոր սրվիկա, և, փառք տիրոջը, յերկաթի պես եմ, քեզմե ալ քաջառողջ եմ... բանն ան ե, վոր մարզս տկար չստեղծվի... չե նե ողին մեռած մարդ չկա:

— Վարժված չեմ, կըսեմ կոր, յեղբայր:

— Վարժվե քիչ մը, ի՞նչ կըլլա:

— Չե, չե, չե, չեմ կընար խմել:

— Մեկ հատ մ' ալ, լինցավ, գնաց:

— Այս գավաթն ալ կը խմեմ, ուրիշ չեմ խմեր:

— Մի խմեր:

Յերեք բարեկամներն իրարու կենաց խմեցին:

— Մեծապէս շնորհակալ եմ, Բարսեղ աղա, վոր խոսք չըկուրեցիր, բաավ Միհրան՝ պատառաքաղով կտոր մը ձուկ յերկնցնեռով Բարսեղ աղաին, վոր ու զին վար իջեցնելու կաշխատեր:

— Բարսեղ աղան սիրու կոտրող մարդ չե, ալեւ ցուց Գարբիել աղան:

Եհվ շիշը ջուրի բաժակի զարնելով՝

— Պղտիկ, լիցներ սա շիշը, պոսաց:

— Աս ի՞նչ ե... մնաք բարով... յես կերթամ:

— Կերթամք, բաավ Կարբիել աղան ուրիշ գեմքով մը, շիտակը, աս չվալեցուցի ձեզի, Բարսեղ աղա:

— Ինչու:

— Հահլ ե, թե յես պարզապես լողովորթ մ' եմ հոս, վոր ուրիշի ստակով ողի խմելու յեկած եմ. յես ընտառորություն մ'ունիմ, վոր ինձի մեկ խմցնողին շորս կը խմցնեմ:

— Յես չխմցուցի:

— Դուք հյուր եք և վորովհետև մեր թաղը զանը զած եք, մեր պարտքն ե ձեզ հարգել մեր կարողության չափ: Կը խնդրեմ տեղերնիդ նստեցեք:

— Գարբիել աղան իրավունք ունի, ի՞նչ ըսեմ:

— Մեր զիտցածն սա յե, վոր մարդ մը յուր բարեկամաց թաղին մեջ գտնվի նե, ինքզինքը յուր բարեկամաց տրամադրության տակ կը գնե:

— Դիտեմ... բայց...

— Հրամմեցեք, բաավ Կարբիել աղան, ողիի գավաթն Բարսեղ աղաին յերկնցնելով:

— Շնորհակալ եմ, պատասխանեց Բարսեղ աղան ակամա ընդունեով գավաթն:

Հետո գավաթներն պարպեցին իրարու կենաց:

Բարսեղ աղան, վորուն աչքիրը կարմրիլ սկսած ելին, հաղիկ հաջողեցով ըմպել յերրորդ գավաթը՝ հաւային, անդիվ անդունքով այցելությունը, վորու զար անզամ անիծելով այն այցելությունը, վորու պատճառով հանդիպած եր այս փորձանքին:

— Չես կարող խմել հա, ի՞նչ ստանան ես դռն, մեզմե աղիկ կը խմես կոր և ի՞նչու չը խմես, կիբիկ

ես, աղբամբ. թող վոր կնիկները հիմա մեղմեւ շատ կը
խմեն կոր:

— Ալ ըսելիք չունիմ, վորովհետև չեք հալտար կոր:
Ժամը քանի՞ յեղավ արդյոք:

— Հոգ մի ըներ, քանի ըլլա նե, ըլլա, ձի կա,
կառք կա, թրամվիչ կա:

Դիտենք արդեն, թե մեր մեջ էնք էնք չորս ողի
խմվի, խնդրոց կարգին լիրկորդ խնդիրը կըլլա
թաղաւաններու ընթացքը. ուստի յերեք բա-
րեկամեները ձեռք առին սույն խնդիրն, վորուն վրա
յեխ քառորդի մը չափ վիճաբանեցան առանց զիրար
հասկնալու. անմեղ վիճաբանություն: Միայն թե Բար-
սեղ աղան, վորուն, ինչպես կըսեն, գլուխը ցատկած
եր ողին, կիրքով կը խոսեր: Յերբ կարգը չորորդ
բաժակին յեկավ, Բարսեղ աղան, վորու զլուխը զառ-
նալ սկսած եր, բնավ ընդդիմություն չըրավ, հաճու-
թյամբ խմեց և սկսավ ցած ձայնով սփահանի վրա
հին պես թե մ' ալ յերգել:

— Կը լսես կոր, պարոն Միհրան, ինչ աղվոր կեր-
պե կոր Բարսեղ աղան:

— Սքանչելի:

— Բարսեղ աղայեն չելի հուսար ասանկ հրազդ-
բիչ ձայն մը:

— Յես ալ չելի կարծեր, վոր Բարսեղ աղան այս-
քան աղվոր ձայն մ' ունենար:

Բարսեղ աղային հաճա թվեցան բարեկամեներուն
այս խոսքերը, ծիծաղեցավ, Միհրանիկը շոյեց ու Գար-
սիել աղային ուսին զարկավ: Հետո վրան է եր կար
զրված զգայւական ձայնարկություն մ'արձակեց և
սպասավորը կանչեց, վոր շիշը լիցնե:

— Շատ կըլլա, Բարսեղ աղա, ըսին բարեկամները
— Յես չը հրամցնեմ:

— Շատ լով, կընդունինք,
— Անանկ ալ յեղավ, անանկ ալ շիշ՝ ալ կը

խմենք, կերթանք, ուշ մնացի:

— Յերթալու համար դեռ կանուխ ե, ձի կա, կառք
կա, թրամվիչ կա, ըսավ Միհրան:

— Այս, այս, ձի կա, կառք կա, թրամվիչ կա: կըրկ-
նեց Գարբիել աղան:

Յերրորդ շիշն ալ խմեցին: Ողիի շոյին զվարթա-
ցուցած եր Բարսեղ աղան. մինչեւ ականջները կաս-
կարմիր կտրած շարունակ կը խնդար և կը խոսեր
Նստած տեղն յերկու կողմ կերերար, հավասարակշուռ-
նառ կորուսած եր, սպակայն խելքը զլուխն եր, և
թյունը կորուսած եր, սպակայն խելքը զլուխն եր, և
կաշխատեր այնուես ցույց տար թե վորպես թե ինքն
յուր կամոքն կերերար:

— Միսաք աղային, ըսավ սպասավորն՝ շիշ մ' ողի
դնելով ասոնց սեղանին վրա:

— Բովիրնիս լեկուր, Միսաք աղա, պոռաց Բար-
սեղ աղան:

Միսաք աղան յուր ողիի շիշն ու գալաթը հետն
առնելով լեկավ:

— Միսաք աղա, սոս իրիկուն ալ ասանկ յեղավ,
մեր բարեկամները մեզի ողի խմեցին:

— Շատ աղեկ ըրին, աշխարհս ունայն աշխարհ
մ' ե, բարեկամներու հետ խնդարու, զվարժանալու:

— Խմենք ուրեմն:

Զորրորդ շիշն ալ պարպեցին: Այնուհետև հառ
մ' ալ ինեւ չեք մեր ժերար մ ըսելով, չորսն ալ վե-
րըստին մեյմեկ շիշ բերել ավին և բավկան աքցու-

— Փափուկ կետ մը կա հոն... ամէն բան չըսվիր:
— Մասք բարով՝ ըսավ Միսաք ու մեկնեցավ:
— Գիշեր բարի, Գարբիկել աղա...
— Ցերթաք բարով:

Գարբիկել աղան զինեպանին հանձնարարեց Բար-
սիկ աղան և աղաչեց, վոր պառկելու համար տեղ մը
աղան ողիին հաջիվը հարցուց, Գարբիկել աղան խընդ-
րեց, վոր կեսվակիս վճարվեր Միհրան մերժեց և հա-
շիլը մաքրեց:

— Բարսիկ աղան ի՞նչ ընկնք, ըսավ Գարբիկել ա-
ղան, առնը հիփանդ չունենայի, տունս կը տանելիւ:
Տունս մոտ ալ ե, գյուրությունը կը լլար:

— Գիտեք, վոր ասանկ բաներեն չեմ փախչիր իմ,
հալտնեց Միհրան, բայց ի՞նչ ընկնմ, վոր պառկեցնելու
ահնչակ չունիմ:

— Շիտակը՝ չես կատնելի, տունս կը տանելի, հա-
րեց Միսաք, յեթե այսոր տախտակ շփած ու հոգնած
Հըլալիին տունը:

— Բարեկամ մը տուն տանելը բան մ' եւ բայց
յեկուր, տես, վոր հիփանդ ունիմ տունը:

— Զախորդություն... ի՞նչ կը լլար, թե վոր սենյակ
մ' ավելի ունեւայի:

— Մերեներն ալ այսոր յելեր են տախտակ շլ-
փելու:

— Սենյակ մ' ալ ավելի ունենալի նե:

— ԶԵք կրնար մեկտեղ պառկիլ:

— Կարելի՞ ու, դուք կրնաք տանիլ, տախտակները
շփած են յեղիր, ի՞նչ զնաս ունի:

— Իրավունք ունի Միհրան:

— Դուք տարեք, աղբար, հիվանդին ի՞նչ չարիք
մընաւացնել խեղճը, ձեր տունը մոռիկ ալ ե, հոս եւ

— Բոնե սփոր վոտքերեն՝ հրամակեց:
Սպասավորը վեր առավ Բարսիկ աղալին վոտքերը:
Ինչն ալ ձեսներն ըսնեց և մեկն ի մեկ թողուց
պոսալով:

— Գարշելի մարդ:
Բարսիկ աղալին թեերն ու ձեսներն ալ ձեփված
եյին այդ գալուշանու բաղդրությամբ:

Սպասավորն հրամանի կողասեր՝ բարձրացուցած
Բարսիկ աղային վոտքերը:

Գինեպանը քիթը բամբակով թխմելով և ձեռքերը
ջնջոցով փաթթելով Բարսիկ աղային ձեսներն ըլու-
նեց, վերուցին Բարսիկ աղան և գինետունն զուրա-
յիլնով փողոցի մ' անկունը ձգեցին, Մեկուկես ժա-
մի չափ բորդոց Բարսիկ աղան և հետո ինքինքը

կանգուն գտավ պատի կոթնած և դիմը մարդ մը, վոր
ձեռքո՞յն զինքը բռնած կը հարցներ.

- Վթրու հետ ելիր...
- Անոր հետ
- Ան ժվ եւ
- Ան...
- Անհնը:

Զայն չկա: Բարսեղ աղան չեր կրնար աչքերը բա-
նալ, վոտքի վրա կը քնանար, գուշիր կուրծքին վրա:

Դիշերապահը մեծ դժվարությամբ հաջողեցավ
Բարսեղ աղալին բերնեն հափշտակել Գաբրիել ա-
նունը:

- Գիտեմ, գիտեմ, ըսավ դիշերապահը,
- Հետո.

- Քայլ նալիմ հետո:

Անշուշտ գյուրքին չեր Բարսեղ աղան ալդ վիճակին
մեջ Գաբրիել աղալին առևնը տանել, բայց զիշերա-
պահն հանձնառու լեզավ, ի սեր մարդկության, ամեն
դժվարությանց և հաջողեցավ Բարոսի¹⁾ այս տկար
աշակերտը հանձնել Գաբրիել աղալին, վոր ապշած
ստիպիցավ ընդունել այս հյուրն և լուր սենյակը
տանել ու պառկեցնել Քանի մը ժամ հետո Բարսեղ
աղան արթնցավ: Ծարավի յեր: Հասկցավ, թե յուր
տունը չեր: Կանգնեցավ, խարխափիլով գտավ սեղանը.
Եցուն բաժակ մը ձեռքն անցավ, խմեց զայն ի մի
ուժակ, յերեսը քիչ մը թթւեռուց և պառկեցավ վերըս-
տին: Առավոտն կանու արթնցավ: Զհանված պա-

¹⁾ Բարոս-Բաբոս—հին հռովմեական գիցաբանության մեջ
համարվում եր զինեղործության և զինու տաված:

կած եք: Տեսավ, վոր բարձն, վորու վրա գրած եր
գլուխն, ու վերմակին վերի կողմը դեղնած ելին: Թիկ-
նոցին թեկրուն, բաճկոնակին նախցավ, կարմրեցավ:
Հնչացքը շտկել ուղեց, ձեռները ոտար նվաթերու դի-
ւնչացքը շտկել ուղեց, ձեռները ոտար նվաթերու դի-
պան: Ձեռները զլխուն դարձավ: Զհամարձակեցավ
արթնցնել Գաբրիել աղան, վար իջավ և զանեն գուրս
ցելավ հարմար և առանձին տեղ մը գտնելու և լվաց-
վելու համար:

Միհրան և Միսաք՝ նույնպես կանուխ արթնցած
զինետունը գնացած ելին Բարսեղ աղալին վրա տե-
ղեկություն առնելու համար: Գինեալանը հալանած եր
անոնց, թե շատ խնամք տարած եր իրենց հլուրին,
թե մաքուր անկողնու մը մեջ հանգիստ պառկած եր
Բարսեղ աղան, թե առավոտուն լիլած, մեկնած եր
շնորհակալություններ հաւանելով իրեն այս բարի ծա-
շնորհակալություններ համար, զորս մատուցած եր իրեն: Գի-
ռալությանց համար, զորս մատուցած եր իրեն: Իրե-
նականը չեր մոռցած նաև հավելու, թե ինքն, իրեն
զինետան, պարտավոր եր իր համախօսրդներն ամեն
կիրառվ գահացնել, թե վոնե պատիս չպիտի զլանար
կիրառվ գահացնել, թե վոնե պատիս չպիտի զլանար:
Բարսեղ աղալին, լիթե հանձնարարված իսկ չըպար:
Միհրան և Միսաք շնորհակալություն հայտնելով մեկ-
նած ելին զինետունն և փողոց մը դարձած ելին,
կեցած թաշկինակով յերեսը կը սրբել:

— Բարի լուս, Բարսեղ աղա, զիշերը ինչպես ան-
ցուցիք:

— Շատ հանգիստ, շնորհակալ եմ, պարսն Միհ-
րան:

— Յես քեզի թող չեւէ տար իերեկ գիշեր, բայց շատ
պլնդեցիր, գալ չուզեցիր սե, իս ալ ձգեցի:

- Ծնորհակալ եմ, Արիսաք աղաւ Կերպի, վոր Գաբրիել աղան թող չե տված զիս:
- Ի՞նչու...
- Յերեկ գիշեր մը մնացիք:
- Առառուն ինքունքս Գաբրիել աղային տունը դատ... շատ զիշ ավրիված եմ լեզեր. Գաբրիել աղալին ինտոր հրթալս չեմ դիմակը կուզ... վրաս զըւուս ալ աղտոտած եմ,
- Ստամբուղ ավրիվեցավ:
- Այս:
- Գաբրիել աղան կուգա կոր:
- Իրավ վոր մարդուն ինքնաւ նախելու կամչնամ կոր, վերմակը, սականը, բարձը լվացվելու ին այսոր:
- Բարե ձեզ:
- Աստծու բարին, Գաբրիել աղաւ,
- Ներեցեք Գաբրիել աղա, չեմ գիտեր, ինչպես ներուն ինդրել:
- Ներման բան չկա, միայն թե տնձիդ մնաս մը չկա, մեղի համար բան չկա, չիս կընար վերցնել ներ, մի խմեր, յեղալը, մեղք չես:
- Անանկ չե, Միհրան աղաւ,
- Անանկ եւ:
- Եշը, կըսեն, չկերած խոտն ուտե ներ, գլխու ցավ կունենա, ըսագ խնդալով Միհրաք աղան:
- Հետո ներուն խնդրեց, թե յուր կամքեն անկախ պարագաներով բերնեն փախուցած եր այդ նմանութունը:
- Մենք ողին քուկին կոկորդու ի վար չթափեցինք ա. օչնմ կընար խմելու, կըսեն, կը լմնաս:
- Բոնի ոչ կընար խմջնել քեզի.

- Իրավունք ունիք:
- Ցես, ըսակ Միհրան, մհկու մը վրա չեմ իյնար, վոր խմեւ:
- Ցես ալ այս բնակորությունն ունիմ:
- Քու աղեկությանդ համար կըսենք կոր մենք:
- Անանկ ե յա, կուզես ներ, տակառ մը ողի խմեւ:
- Դուք չմէլիք, վոր ստիպեցիք զիս խմելու:
- Մենք ինչ զիտնանք, վոր դու վարժված չես:
- Մատվենիս չպիտի հոտվառակինք ա:
- Աս բան մը չե, անգամ մը կը գինովա մարդ, ուրիշ անգամ կդուշանա. ցավալի կետն այն ե, վոր...
- Բարձր, վերմակը, սականը տղտուեցի...
- Ան ալ բան մը չե, կը լվացվին, կը սրբին. հորս հետ, վոր հիվանդ ե, քեզի համար կոիլ ընկեռ ստիպիցա:
- Հայրդ իմացեմ ե, վոր...
- իմացեր ե հապա... դուն զիշերն յելիք ու խմել խեղճ մարդուն... մեղը:
- Մեղը մի...
- Բարսեղ աղան կը թքնեւ:
- Մեղը հապա... թքնելու բան չկա, ինչ յեղավ ներ, մեղի լեզավ. բժիշկները պիտի քննելին ալսոր այդ մեղը. իրեք որ ե, վոր խնամքով կը պահեյի աենյակիս մեջ սեղանիս վրա՝ առ առուս բժիշկներ ցուն ցուլցաւ համար. Այնչափ բարկանա. այնչափ բուն ցուլցաւ համար. Վարդակականա. այնչափ բարկանա, վոր... իմ զիտացած մարդ մը ողի չկրնար բարկանա, վոր... իմ զիտացած մարդ մը ողի չկրնար բարկանա, առանի ներ, խմելու չե. քո անձիդ ալ կը միասնա, տանիլ ներ, խմելու չե. քո անձիդ ալ կը միասնա, յեղարյու:
- Բարսեղ աղան կը շարունակե թքնելը:
- Իրավունք ունի Գաբրիել աղան:

— Զե՞նե յեկուր տունս պարկե, շաբաթներով կի-
եր, գլխուս վրա տեղ ունիս:

Միշտ կը թքնե Բարսեղ աղան:

— Իմս ալ գլխուն վրա:

— Ինչ վոր ե, յեղածը յեղած ե, քալենք, հմտպի-
տի կինանք:

Թքնելի չդադրիր Բարսեղ աղան:

Մինչե զուկան մեկտեղ զնացին չորս բարեկամները,
հետո իրարմե բաժնվեցան:

— Թյու, թյու, անկիրթ մարդիկ, պոռաց Բարսեղ
աղան, յերբ առանձին մնաց. բոնի ողի խմցուցին,
ստամոքս ավրեցին, մեզ խմելու պատճառ տվին և
հիմա, փոխանակ ինձմեն ներումն խնդրելու խրատ կու-
տան, փոր մելքմալ ողի չխմեմ: Այդ գարշելի մեղք իր-
մելս հատա... ով գիտե, ինչ բաներ կալին մեջը...
թյուտ... միայն մեղք կը ցավին կոր, փորպիս թե
հորը հաղարջի ոշարակը խմած ըլլամ... թող նորին
միզե, եփենտիմ, սա ալ դժվար բան մ' ե... Ինչ յե-
րես... չըսմո կոր, փոր «Այս ի՞նչ պզտիկություն յե-
ղավ, խեղճ մարդուն մեզ խմելուն պատճառ յեղանք,
առ ի՞նչ ամոթ բան յեղավ...» ամենին, հորս մեղք
կըսէ, կերթա, այսչափ անկրթություն չելի կընար յե-
րկայացիլ: Թող հորը մեղք հախճապակյա առանի մը
մեջ լեցներ ու վարդի փունջեր ալ դներ այդ ամանին
մեջ և ընդունելության սրահը մեծ հայելին առջև
դներ. անպիտան...

Ցեվ թքնելով շարունակեց ձամբան:



ՀՀ Ազգային գրադարան



NL0360118

50216

ԳԻՆԸ 1 Ր-
ԿԱԶՄԸ 30 Կ.

Ա. ՊԱՐՈՆՅԱՆ
Վրեծ դելիկատոսի
Հնա. ССР Հայաստան, Երևան, 1985